# Օ Ր Ա Գ Ի Ր

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

---

*Այսուհետեւ ոչինչ Եգիպտոսեան խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միայնակ պահապանքը. այսուհետեւ ոչինչ Չինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ: Այսուհետեւ լոյս եւ ճշմարտութիւն եւ ազատութիւն խաւարի բաբելոնեան գերութենից:*

Ս. Նազարեանց:

ԱՌԱՋԻ՛Ն ՏԱՐԵԳ՛ՆԱՑՔ.

ՄԱՐՏ 1858 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 3.

ՄՈՍԿՎԱ,
Imprimerie d'Ernest Barfknecht.
1858.

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

## ՕՏԱՐՈՏԻ ՀԱՐՍՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ·

### ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԻՑ[1])։

*Եթէ այս ստոյգ պատմութեան ընթերցողը ցանկանումէ գիտել թէ ով էի ես, կարող եմ այդ բանը ասել նորան համառօտ։ Ես մի չքաւոր Թշուառական եմ, առանց արծաթի, առանց պաշտօնի, առանց ակնկալութենների, և այդու ամենայնիւ — թոյլ տուեցէք ինձ առանց մարդահաճութեան ասել — արժանի եմ թէ արծաթի, թէ պաշտօնի և թէ ակնկալութենների։ Քանի որ ես մանուկ էի, բաղդը աւերեց ինձ իւր փայփայանքով, այսինքն ներողամտութեամբ իմ պատուական հօր, որ մի շատ գործունեայ բժիշկ էր, կարող էի հասանել իմ սրտի ամենայն ցանկութեանը։ Ո՛վ իմ երջանիկ համալսարանական տարիներին, թէպէտ դոքա անցուցած չէին պրոֆեսօրների լսարաններումը։ Ես համարվումէի միշտ մի զուարթ, թեթեւամիտ երիտասարդ, և քանի որ այսպէս էի, իմ երեսին ծիծաղումէր բաղդը· բայց սա մի կին է և կին մարդու անունը է տկարութիւն և փոփոխամտութիւն։ Այժմ, երբ որ ահա տղամարդ եմ ես և յօժար էի յետ դնել մանկական բաները, ամենաստորն եմ բաղդի վերելքի վերայ։ Իմ հայրը մեռած է․ նա ոչինչ չէ թողել ինձ։ Քսան և ութ տարօք մարդ, կարող չեմ ես իմ գալոց*

---

1) Colburn's New Monthly Magazine, January 1855.

օրի ճաշու հացը ապահով կացուցանել։ Արդարև, ես աւարտել եմ իմ ուսումը, բայց գործադրութեան ճանապարհը փշալից է շատ բանագէտների համար ևս։ Յետոյ կային այն տեղ մի տեսակ տղուկներ, դեռ ևս առաջին տարիներից, անամօթաբար պահանջող վատթարահոգիք, որոնց չեմ կարող հաւատացնել թէ ex nihilo nihil fit. [1]).

Ճշմարիտ է նոյնպէս, որ ունիմ ես մի մօրաքոյր Զելթընհեմ քաղաքումը, որ մի անհաւատալի մեծ հարստութեան տէր կին է։ Սա այրի է, անզաւակ․ իմ մէջ մնացել է մի թոյլ յիշողութիւն նորա մասին այն օրից, երբ նա եկել էր մեզ այցելութիւն․ մտաբերումեմ, որ նա մի շքեղ, բայց փոքր ինչ օտարաբարոյ և հպարտ կին է։ Անբաղդ դիպուածով պատահեց մեր մէջ մի սաստիկ վէճ, ամենևին անկարծելի։ Մօտ հինգ տարի յառաջ յանձն առայ ես մի հետևակ ճանապարհորդութիւն Վալէսի մէջ․ այն միջոցին գտանվումէի ես իմ պատանեկական հասակի ծաղկափթիթ օրերումը․ լինելով առողջ, ուրախ, սիրտս բարի յոյսերով լի, տեսանումէի աշխարհը վարդակարմիր գունաւորված։ Շատ խնդամիտ դրութեան մէջ էի ես, իմ հոգին գուշակումէր, թէ ինձ հանդիպելու է մի ամենևին անսովոր ախորժ բան։ Մինչև այդ ժամանակը, երբէք ըմբռնված չէր սիրտս սիրու կապանքի մէջ․ այդպիսի զգացողութիւնքը եղած էին անցաւոր միայն։ Այս միայնակ ճանապարհորդութեան ժամերումը լինելով ես շրջապատած բնութեան գեղեցկութիւններից, լայնացաւ իմ սիրտը և անձնատուր եղաւ իւր առաւել պատուական զգացողութիւններին․ ես փափագագին որոնումէի այն բանը, որ պակաս էր իմ կատարեալ երջանկութեան համար։ Ի՛նչպէս կարող էի մտածել թէ իմ ցանկալին այդքան մօտ էր ինձ։

Այն միջոցին, երբ որ ես բարձրանումէի մի զառ ի վեր սարի հետևակ ճանապարհով, փառաւոր կաղնի ծառերի ստուերի տակից, տեսայ ես մի զմայլեցուցիչ հանդէս։ Իմ առաջև, անտառի մի խոտապատ արձակ տեղումը, ուստի կարելի էր աչքի տակ բոլորել ստորակայ հովիտի զարմանահրաշ տեսարանը, նկատեցի ես մի ուրախ ընկերութիւն արանց և կանանց․ այս տեսութիւնը ունէր արդարև մի կախարդական զօրութիւն, լինելով ներհակը այն լուռ ու միայնակ անտառի իմ շրջակայքումը։ Ես մնացի անշարժ, որպէս թէ կապված էի կախարդութեամբ, թեքվեցայ, խօսեցի, չը գիտեմ թէ ինչ — և կարճ միջոցում հոգով ու սրտով մասնակից գտանվեցայ այն ընկերութեան ուրախութիւններին։ Այս տեղ կային հասակաւոր և մանուկ կանայք, և սոցա մէջ մի նորահաս աղջիկ մօտ 16 տարօք, որ նման էր վարդի կոկոնի միւս ծաղիկների

[1]) Ոչնչից կարող չէ գոյանալ ինչ․ այսինքն, չեղածից հառուցանել անկարելի է։

մէջ։ Բայց ո՛չ. ես չը կամիմ նկարագրել այդ աղջիկը. անկարելի էր սառն ու մեռած բառերով դորա զմայլեցուցիչ գեղեցկութիւնը սահմանել արժանապէս։

Ես խնդրեցի ու ստացայ թոյլտուութիւն այս ընկերութեան մէջ անցուցանել ցերեկի դեռ ևս մնացած ժամանակը։ Ո՛վ, այս ինչ օր էր։ Շատ փոքր բոպէք կարող էի ես հեռանալ Լուցիայի կողքից — այսպէս էր այն նազելի աղջկայ անունը։ Մեք զրոյց տուեցինք, կատակեցինք, ուրախացանք միասին, որպէս թէ ամբողջ տարիներով ծանօթ էինք միմեանց հետ, և հասարակութիւնը շատ ազնուամիտ էր, քան թէ կարող էր մի անպատշաճ կամ վտանգաւոր բան գտանել մեր անմեղ խնդութեան մէջ։ Ի՛նչքան արագ գնացին թռան այս ժամերը, և ո՜հ, ի՛նչքան շուտով մօտեցաւ երեկոն և սորա հետ միասին, հրաժարման ժամը։ Այս ընկերութեան կանայքը վաստակած յետ դարձան դէպ ի գիւղական հիւրանոցը. բայց իմ յոյսը, գալոց առաւօտուն աւելի առատութեամբ լիանալ այն քաղցր ուրախութեան բաժակից, ոչնչացաւ ահարկու կերպով։ Մի ձախորդութիւն պատահեց ինձ այն միջոցին, երբ որ ես բըլլուրի կողքից անցանումէի և յանկարծ բացագանչեց Լուցիան. «ո՛վ, այն ինչ գեղեցիկ ծաղիկ է այն տեղ, ցածումը։» Կայծակի պէս արագ, ցած վազեցի ես, բայց ձախորդ գլորումով սայթաքեց ոտքս և ես բաւական երկար տարածութիւն գլորվեցայ այն սարաբլուրից։ Շուտով կրկին վեր կացայ ես, և Լուցիայի երկիւղագին գոչիւնը և ահաբեկութիւնը իմ վայրանկութեան միջոցին, որպէս և նորա գունաթափութիւնը և քաղցր շնորհակալու ժպիտը, երբ որ ես մատուցի նորան ծաղիկը, մի առատ վարձատրութիւն եղան այն ահ ու դողի և թեթև ցաւի համար որ սկըլըումը ոտքիս մէջ զգումէի։ Ու արդարև երևումէր, թէ ոչինչ եղած չէ։ Բայց երբ որ յառաջ գնացի, սաստկացաւ ցաւը և յետոյ այնպէս անտանելի դարձաւ, որ հազիւ թէ կարողացայ հասանել հիւրանոցին։ Բոլոր գործ դրած ճար ու դեղը չօգտեցին, և գիշերը ուռաւ ոտքս այնպէս, որ ես ամենևին անյոյս էի յառաջ տանել իմ ճանապարհորդութիւնը և կարող չէի դուրս գալ մահճից։ Սկըսեալ այն ժամանակից երբէք տեսած չեմ Լուցիան. այն ընկերութիթիւնը լուսաբացից յառաջ թողեց ու գնաց հիւրանոցից։

Ո՛վ կարող է նկարագրել իմ դրութեան թշուառութիւնը. մարմնաւոր ցաւը որ կրումէի ես, երևումէր ինձ մի թեթև բան. բայց այն ցաւերը որոնց հետ առաջին անգամ ծանօթացայ ես իմ կեանքի մէջ, տանջումէին ինձ։ Ոչ մի բառ սիրու վերայ չէր խօսված մեր մէջ, այնու ամենայնիւ իմ բոլոր զգացութիւնը այս խորհրդաւոր օրիս շատ յայտնապէս ցուցել էր միայն այդ բանը։ Արդեօք Լուցիան փոխարինեց իմ սէրը

սիրով․ արդեօք վերստին կը տեսանէի նորան․ ինչպէս կարող էի ապրել առանց տեսանելու նորա քաղցր ժպիտը։ Այս և սորա նման հարիւրաւոր հարցուածք միւս շատ առաջարկութեանների հետ միասին, որ կարող էր միայն յղանալ իւր մէջ մի սիրող սրտի յիմարութիւն քսան և երեք տարօք հասակում, տանջում էին ինձ իմ ութօրեայ հիւանդութեան մէջ։ Ո՛հ, իմ յոյսերը շատ նուաղ էին․ Լուցիան չքացել էր որպէս մի երազի տեսիլք որ չէ թողում հետքեր։ Ես չգիտէի, թէ ո՛ր տեղից էր եկել նա և ո՛ւր էր գնացել․ չը գիտէի նորա տոհմանունը և ոչ նորա բնակութեան տեղը։ Նոյնպէս անտեղեակ էր նա իմ հանգամանքին․ իմ դիտաւորութիւնը եղած էր, բոլոր բաները յայտնել նորան միւս օրին։

Իսկապէս այն միջոցին, երբ իմ գլուխը լցուած էր սիրու երազներով, հասաւ ինձ մի նամակ իմ մօրաքուերից Չելթընհեմում, բովանդակելով իւր մէջ մի շատ օտարոտի առաջարկութիւն։ Այս արժանապատիւ տիկինը կամէր ամուսնացնել ինձ․ նա ունէր մի հոգեզաւակ դուստրր, որ իւր ծնողների մահուց յետոյ դաստիարակվել էր նորա հոգաբարձութեամբ, «մի մարգարիտ, մի գոհար, զարդ ու պարծանք իւր կանացի սեռին»․ այժմ ամենայն սրտով ցանկանում էր մօրաքոյրս բաղդաւորել այս աղջիկը և այս միջոցին մտածել էր իմ վերայ, որի բաղդաւորութիւնը նոյնպէս ցանկալի էր նորա սրտին, միայն թէ ես իմ անձը արժանի կացուցանէի դորան, այսինքն ուսանելով ժրաջան և գըտանելով մի վայելուչ ասպարէզ գործականութեան որպէս իրաւագէտ ուսումնական։ Նա գրել էր, թէ մեք մի ժամանակ լինելու ենք բաղդաւոր ամուսինք, որովհետև նա, անտարակոյս, վարվելու է այն բարի զաւակի հետ այնպէս, ինչպէս իւր սիրելի հարազատ աղջկայ հետ։ Վերջին բառերը որոնց տակ խազեր էին քարշած, շատ մեծ տպաւորութիւն գործեցին իմ հօր վերայ։ «Ընդունիր այդ առաջարկութիւնը» — ասաց նա ինձ — » այդ աղջիկը դրախտի թռչուն է» — «Չը կամիմ» ասացի ես սրտով ու բերանով, և վարվեցայ այդ գործի մէջ իմ սովորական թեթեւամտութեամբ։ Ի՞նչպէս կարող էի ես, որի մի հատ խորհուրդը էր այս միջոցին Լուցիան, ընդդէմ սրտիս ձգտողութեանը ուշադիր լինել մի որբիկ աղջկայ, այդ որդեգրած դստերը։

Իմ շատ բարեսիրտ մօրաքոյրը ստացաւ իմ հօրից մի չքմեղական նամակ հրաժարական պատասխանով, բայց ինձանից մի խնդամիտ և զուարճախօս գրուած․ սա գրգռեց նորա սիրտը մի շատ սաստիկ բարկութեամբ իմ վերայ, և իմ մօրաքոյրը ունէր իրաւունք։ Սորանից յետոյ չէ պատահած նորա և իմ մէջ ոչինչ գրաւոր հաղորդակցութիւն․ բայց մի բարեկամից որ ունէի Չելթընհեմում, որ և ծանօթ էր իմ մօրաքուերը, գիտեմ ես, որ նորա բարկութիւնը իմ վերայ դեռ ևս այնքան

ևս սաստիկ է, ինչքան յառաջուց: Գուցէ թէ և իմ անպատշաճ գնացքը որ անտարակոյս իմացած կը լինի նա, իւր բաժինը յաւելացուցած են նորա տհաճութեան վերայ: Դիցուք թէ ես կարող էի այնքան զսպել իմ հպարտութիւնը, որ աշխատէի ողորմութիւն գտանել նորա առաջև, այնու ամենայնիւ կ'ունենայի ամենայն պատճառ վախենալու, մի՛ գուցէ ստանայի նորանից մի անքաղաքավար և կոշտ մերժողութիւն, և մի այդպիսի վտանգի ու անարգութեան չը կամիմ մատնել իմ անձը: Ուրեմն պիտոյ է ինձ մտածել մի այլ ճանապարհի վերայ:

Մի նաւաբեկված (նաւը կոտրած) մարդ, ինչպէս ես էի այս րոպէիս, ձեռքը պարզումէ և մի յարդի ծղօտի: Լուցիայի հետ ամուսնանալ չեմ մտածում աւելի. իմ բոլոր ջանահնարութիւնքս վերստին գտանելու նորան, անպտուղ են մնացել մինչև այժմ: Այնու ամենայնիւ կարող չեմ մոռանալ նորան. նա դրած է իմ սրտի ամենախորին պահարանի մէջ որպէս մի սիրելի և պատկառելի ծրար, յիշատակի ամենագեղեցիկ ծաղիկներովը շրջապատած: Ճշմարիտը ասեմ, ամենևին նոյն է իմ աչքումը թէ որ կնոջ հետ կ'ամուսնանայի ես. բայց չեմ կարող նոյնպէս սառնասիրտ լինել նկատելով այն մրրիկները և ալէկոծութիւնքը որ իմ կեանքի նաւը տարել են ու զարկել են մի ապառաժի, և այժմ մի տախտակ միւսի քամակից խլումեն ու տանումեն: Իցէ թէ մի կին կարող էր փրկութեան հնար գտանալ և յաջողապէս հասուցանել ինձ ծովի եզրին. Թող այժմ փորձենք այս բանը: Ամենայն օր կարդումեմ ես լրագրերի մէջ ամուսնութեան առաջարկութիւնք, որոնց մէջ ամաչկոտ երիտասարդք և պատուելի այրի կանայք այս ճանապարհով «որ այսուհետև անսովոր չէ» որոնումեն իւրեանց համար կենակից ամուսինք: Այդ բոլոր պարոնները էին պատուական, հպուագիտ մարդիկ, սովորաբար, պատանի հասակում, բարեդաստիարակ, հոգով և մարմնով առողջ, իւրեանց ապրուստը ունեցող. միայն թէ զարմանալի բան էր, որ դոքա այդպէս համեստ էին իւրեանց պահանջողութեանների մէջ: Ի հարկէ խնդրած կինը պիտոյ է լինի մանուկ, գեղեցիկ, սիրական, տնարար. այս ամենափոքր բանն էր, որ կարելի է պահանջել. աւելի ծանրը այն անհրաժարելի յիշատակութիւնն է, որ պիտոյ է լինի մի մեծ, ազատութեամբ տնօրինելի դոյքի վերայ, որ կարող է ապահով կացուցանվիլ, եթէ պահանջողութիւն կայ: Ուշադրութեան արժանի է, թէ ինչպէս սիրելի—կամէի ասել—ամօթխած պարկեշտութեամբ այս ծանր խնդիրը, որ մեր չար նիւթապաշտ աշխարհումը չէ կարելի զանց առնուլ, միշտ դրվումէ յայտարարութեան վերջումը և թէ որպիսի վայելչախօսութեան ծաղիկների տակ սովորաբար վարագուրվումէ դա: Այս ճանապարհը որ «անսովոր չէ այսուհետև» կամիմ և ես փորձել, կամ թէ փորձած եմ արդէն:

Այս մասը գրականութեան խնամով (ճշդապէս) ուսումնասիրել եմ ես, և կարծումեմ թէ ընտելացած էի նորա հետ։ Գլխաւոր բանը այն է, որ զգաստութեամբ և ընտրողապէս գործ կատարէինք թէ այն մասին, ինչ որ ասումենք, և թէ այն մասին, ինչ որ թողումենք լռութեան տակ։ Պիտոյ է կին մարդու գուշակութեանը և նորասիրութեանը թողուլ մի մեծ ազատ ասպարէզ, որ նոքա անընդդիմանալի կերպով մօտ քարշվէին, ինչպէս թռչունը որսորդի ձայնով։ Կարծումեմ, որ յաջողել է ինձ դուրս բերել գրչի տակից մի գերազանց գործ․ իմ յայտարարութիւնը դրած է պատրաստ և կնքած իմ առաջև․ ես կամիմ իսկոյն ուղարկել նորան առաւօտու թղթատարին «Morning Post»։ Բարեյոյս եմ ես և ցանկացող ամենալաւ յաջողութեան․ պատճառ այս առաւօտուս արդէն ընդունեցի ես մի ախորժ այցելութիւն մի հին բարեկամից, որ շատ սրտակից է ինձ․ նա շատ սիրողապէս հարց արեց իմ առողջութեան մասին և աչք ածեց իմ տնային անօթների վերայ զարմանալի խնդրողական հայեացքով։

Մի շատ անախորժ բան պատահեց իսկոյն, երբ որ ձեռնարկել էի կին որոնել ինձ․ մի անցք որ ամենևին կոտրեց իմ սիրտը այդ գործի մէջ։ Այս օրիս շատ նամակներ ունէի ես գրելու․ դոցանից երկուքը, որոնց մինը պիտոյ է դնար իմ արդէն յիշեալ բարեկամին Ջելթընհեմում, միւսը Լրագրի հրատարակողին, դրած էին կնքած իմ առաջև, երկուքը ևս ամենևին հաւասար պահարանի մէջ։ Այն րոպէին, երբ որ կամէի գրել նամակների հասցէքը, ընդհատվեցայ ես մի այցելութեամբ, և մի ժամից յետոյ, երբ որ հեռացած էր եկւորը, անբաղդ դիպուածով սխալվեցայ ես և շփոթեցի միմեանց հետ երկու նամակների հասցէքը։ Եւ այդպէս իմ հարսնախօսական յայտարարութիւնը հասաւ իմ բարեկամիս ձեռքը Ջելթընհեմում, և սորան հասանելի նամակը գնաց առաւօտեան Թղթատարին (Morning Post). ի հարկէ երկուքը ևս յետ ուղարկվեցան ինձ։ Իմ բարեկամը, մի պատուական, առաքինի մարդ, իւր նամակի մէջ թափել էր իմ վերայ մի բարեսիրտ երգիծաբանութեան ջրհեղեղ, վերջացնելով իւր գրուածը այսպէս․ «փորձիր այդ բանը»։ Դու դատապարտված չես, քո բոլոր կեանքը համբերելու բաղդի տիկնոջ խստասրտութեանը․ գուցէ կը հասանիս քո նպատակին և այնուհետև կը բարեկարգվի քո կեանքի բոլոր ընթացքը։

Եթէ պէտք էր ինձ խոստովանել ճշմարտութիւնը, չեմ կարող թաքուցանել, թէ մեծապէս ամաչեցի ես, կարդալով այդ նամակը։ Քանի որ այդ գաղտնիքը յայտնի էր ինձ միայն, գործը երևումէր ինձ ախորժ և գրաւիչ․ բայց այժմ, երբ որ մի այլ աչք ներս էր նայեցած, անհամ ու անալի դարձաւ բանը։ Ես պատրաստ էի իմ ճարտարապե-

տական գործը կրակին տալ և ամենևին հրաժարվիլ իմ առաջարկու-թենից․ բայց նայելով քանիս անմխիթար դրութեանը, աչք ածելով իմ ապագայ կեանքի անապատ դաշտի վերայ, ուր կարող չէի գտանել մի կանաչ կամ զովացուցիչ տեղ, յաղթեցի իմ դիմադարձ ձգտողու-թեանը և ստիպվեցայ գործ կատարել։ Ես ինքս երևումէի իմ աչքին մի խաղարկու, որ իւր վերջին գահեկանը կամէր ցած դնել թղթախաղի մէջ, որ կամ բոլորը ձեռք բերէ, կամ թէ բոլորից զրկվի։ Այս անգամ, ցած դնելի բանը էր իմ յատուկ սիրելի անձը, և իմ զգացմունքը այս բո-պէիս այնքան խաւար և տրտում էին, որ ես ընդդէմ իմ հասարակ սո-վորութեան ունէի մի շատ չնչին կարծիք այդ խաղի մէջ ցած դնելի դրամի մասին։ Հարսնախօսական յայտարարութիւնը ես ինքս տարայ լուրերի հրատարակողին, և շատ հաճելի եղաւ ինձ տեսանել, որ միւս օրին տպած էր իմ յայտարարութիւնը, շատ նեղ շրջափակված լինե-լով երկու միւսերից, որոնցից վերինը առաջարկումէր վարձ իւր փախած ու միւսանգամ հասուցանելի շան համար, բայց ստորինը սահմանումէր ստոյգ գինը այնպիսի հանդերձեղէնի որ այլ ևս չը կամէին կրել տեարքը։

Մի բոլոր շաբաթ, ամեն օր դիմումէի ես դէպ ի լուրերի հրատա-րակողը, և ամեն անգամ ստանումէի իմ երկիւղոտ և ամօթապարտ հարց-ուածի պատասխանը թէ «ոչինչ չը կայ»։ Ամեն մի «ոչինչի» հետ միա-սին ցած էր իջանում իմ յոյսը մի աստիճան աւելի դէպ ի Նուլը, և իմ ակնկալութիւնը մօտ էր ահա սառման կէտին, երբ իններորդ օրու-մը յանկարծ փոփոխվելով եղանակը, վեր բարձրացաւ 10 աստիճան։ Վերջապէս ստացվել էր մի նամակ իմ անուանատառերով, մի գեղեց-կապէս ծալած սիրախօսական տոմսակ որի կնիքը ցուցանումէր մի աղաւ-նի ձիթենու շիւղը բերանումը։ Իմ ձեռքը, դողալով սրտիս անհանգըս-տութենից, բաւական կոշտ կերպով շօշափեց տոմսակը, և յառաջ քան թէ թողել էի դիւանատունը, բացելով տոմսակը կարդացի նորա մէջ այսպիսի խօսքեր․

«Իմ պարոն, — ես կարդացի ձեր յայտարարութիւնը առաւօտեան լրագրի մէջ․ ենթադրելով ձեր դիտաւորութեան անխարդախութիւնը, անյօժար չէի խօսակցութիւն բանալ ձեր հետ։ Էգուց, առաւօտու 10 ժամին եկեցէք Էդուարդի հիւրանոցը, ուր ես սպասելու եմ ձեզ 3 հա-մարեան օթեանի մէջ։ Բայց մին պայման անհրաժարելի է, այսինքն որ ես մեր առաջին հանդիպման միջոցին երևէի դիմակով։ Ես ունիմ դորա մասին հարկաւոր պատճառներ որոնց դուք ինքներդ կը հաւանիք յետոյ»։

Ոչինչ ստորագրութիւն, ոչինչ միւս ծանօթաբանութիւն։ Ես մի շատ անհանգիստ դրութեան մէջ էի, որ գրեթէ անտանելի էր ինձ օր ու գիշեր, մինչև խորհրդաւոր տեսութիւնը այն կնոջ հետ։ Հարիւր ան-

դամ գոննայ կարդացի ես այս տոմսակը. գրչագիրը վայելուչ էր և կանացի ձեռքի գործ. պահարանի անուշահոտութիւնը, տոհմանշանը կնիքի վերայ ցուցանում էին ուննորութիւն: Բայց այն սահմանեալ պայմանը — մի՞ թէ անպատճառ հարկաւոր էր դա — ինչու համար կամի նա դիմակի տակ թաքուցանել իւր երեսը: Սարսուռ եկաւ իմ վերայ. եթէ նա գեղեցիկ ու մանուկ է, ինչ հարկաւոր էր մի դիմակ: Իմ բաւական լայնատարած փորձերի մէջ տեսած չէի այնպիսի դիպուած, որ մի մանուկ ու սիրուն կնամարդ յանձնառու եղած լինէր իւր երեսի արևափայլութիւնը ծածկել մի նախանձոտ ամպի քամակում: Բայց եթէ նա պառաւ ու տգեղ էր: — Արդարև պատրաստ էի ես այս երկու գլխաւոր բաների մէջ մի քանի ներողամտութիւնք ցուցանել: Եթէ նա հարուստ, շատ հարուստ էր, այսինքն, եթէ նորա կեանքի ամեն մի տարին կարող էր փոխարէն տալ մի հազար ֆունտ ստերլինգ, այնուհետև խելացի էր երեսում փակել աչքերը հինգ տարի աւել պակաս հասակաւորութեան վերայ, որպէս և մի քանի խաղերի վերայ նորա երեսումը, որ փոքր ինչ շեղվում էին գեղեցկութեան խաղից: Բայց ի հարկէ այս ներողամտութիւնը ունէր իւր չափ ու սահմանը: Երեսուն տարօք հասակ տանելի էր ինձ, բայց ոչ աւելի: Այս բանի վերայ մտածելով, անդադար զգումէի իմ մէջ սարսափ: Անտարակոյս, շատ պատկառելի են ինձ այն անդամակիցքը կանանց սեռի, որ անցած էին մի սահմանեալ հասակ, և ոչ ոք կարող չէ այնքան յօժարութեամբ խոստովանել մի պատուելի տանտիկնոջ արդիւնք ու արժանաւորութիւն, ինչպէս ես. բայց մտածելով թէ պիտոյ էր ինձ ունենալ մի կին որ իմ կեանքի ջերմ յունիսը սառուցանէր իւր պաղ յունվարովը — ոչ, այդպիսի բան կարող չէի երբէք յանձն առնուլ:

Ի վերայ այսր ամենայնի, իմ բոլոր քննութիւնը և մտածութիւնը ստացած նամակի վերայ ոչինչ օգուտ չը բերեց ինձ, բաց ի շուտացնելուց ժամերի անցանելը: Ոչ ոք բարկանալու չէ իմ վերայ, եթէ ասեմ, թէ այս առաւօտուս, սովորականից աւելի խնամք տարայ իմ կերպարանքի վայելչութեանը: Իմ հայելիս քանի մի հաճոյախօսութիւնք արեց ինձ, երբ որ ես մի վերջին քննողական աչք դարձուցի նորա վերայ: Այն թեթև հետքերը որ մանկութեան փոթորկալից տարիքը թողել էին իմ երեսի վերայ, չքացան բոլորովին իմ ձեռքի ճարտարութեան տակ, և ես կարող էի որ և իցէ համարձակութեամբ հանդէպ գնալ մի կին մարդու որ, ինչպէս վկայում էր սիրտս, դիմակ էր դրել երեսի վերայ ոչ թէ այն խորհրդով, որ մի չքաւոր մահկանացուի աչք չը կուրացնէ իւր չքնաղութեան լուսափայլութեամբ: Տասն ժամից մի քանի րոպէ անցած, կանգնած էի ես խորհրդաւոր դրան առաջև, որի քամա-

կումը պիտոյ էր ինձ կամ անչափելի կերպով բաղդաւորվել, կամ թէ անասելի կերպով ծիծաղելի կացուցանել իմ անձը։

Մի քաղաքավարի ձայն «Ներս արի» որ համաձայն էր իմ մեղմիկ դռնակոծութեանը, բաց արեց դուռը։ Ես ներս մտայ մի ճոխապէս ու վայելչապէս անօթազարդած սենեկի մէջ, որ յայտնապէս առաւել պատուականն էր բոլոր հիւրանոցի մէջ։ Սա մի լաւ նշան էր։ Պատուհանի կողմից հանդէպ եկաւ ինձ մի կանացի կերպարանք. ես կարող էի միայն որոշել նորա մեծութիւնը և ոչինչ աւելի։ Նորա երեսը ծածկած էր մի բարխտեայ դիմակով, գլուխը վերարկած քօղով. ուսերից ցած էր թափվում մի սպիտակ մետաքսեայ հանդերձ, ամենևին ծածկելով նորա մարմնի ձևակերպութիւնը։ Ինձ, որ այսպիսի բաների մէջ ունիմ սուր աչք, ամենևին անկարելի էր թէև ամենափոքր տեղեկութիւն ստանալ նորա հասակի ու կերպարանքի մասին։ Թող այդ. չը մնաց ինձ և ժամանակ նկատութիւնք անելու. հասել էր խօսելու րոպէն. բայց ի՞նչ ունէի ասելու։ Իմ բոլոր կեանքումը չէր պատահել ինձ լինել այսպիսի դժուարութեան մէջ. իմ դիւրընտել բարքը որ այնքան հաճելի էր կացուցած ինձ գեղեցիկների աչքին, ամենևին հրաժարվեցաւ ինձանից։ Ես չը գիտէի ոչինչ ելք հնարքի, քան թէ այնպիսի վայելչութեամբ, որ պատիւ էր բերելու մի կաքաւուսոյց վարժապետի, ածել այդ կինը դէպ ի սօֆան և նորա առաջև նստել մի աթոռի վերայ։ Վերջապէս թոթովեցի բերանիցս, արդարև անհեթեթաբար — այդ խոստովանում եմ ես — այս խօսքերս։

— «Ես ստացել եմ ձեր բարեմիտ տոմսակը, որ տալիս է ինձ այս բաղդաւոր հանդիպումը ձեր հետ.»

— «Ի՞նչ ունիք ասելու ինձ.» մեղմիկ ու վախկոտ շշնջիւնով լսվեցաւ դիմակի տակից։

Բայց, թէպէտ ձայնը մեղմ էր, այնու ամենայնիւ իմ սուր և վարժ ականջը որոշեց իսկոյն, որ նորան պակաս էր մանուկ հասակի դալարութիւնը։

—«Տիկին, ես մի այնպիսի դրութեան ու հասակի մէջ եմ, որ այսուհետև բարի չէ ինձ, միայն լինել։»

— «Ուրեմն դուք որոնումէք ձեզ մի կենակից. բայց պիտոյ է ձեզ խոստովանել, որ դուք ընտրել էք մի անսովոր ճանապարհ, այդպիսի անձն գտանելու համար։»

— Ոչ այնքան ամենևին անսովոր ճանապարհ.» — պատասխանեցի ես — «բոլոր լրագրերի մէջ շատ անգամ գտանվումեն այնպիսի յայտարարութիւնք, որպիսի այն է, որ տուել է ինձ այս բաղդաւոր հաղորդակցութիւնը ձեր հետ. և եթէ կարելի է հաւատալ լուրերին, ապա, սո-

փորաբար, առաւել երջանիկ են այն ամուսնութիւնքը որ առանց յառաջագոյն ծանօթութեան հաստատվումեն մի բարի դիպուածով։»

— «Այդու ամենայնիւ, պարոն, միշտ պիտոյ է լինի մի առանձին պատճառ, որից ստիպուած էր մի մարդ այդպիսի ծանրակշիռ գործի մէջ հաւատալ դիպուածին։ Կարո՞ղ եմ ես հարցանել թէ ինչ շարժառիթ ունէիք այսպիսի ճանապարհով կին խնդրելու ձեր համար, դիցուք թէ այդ ճանապարհը և սովորական էր։»

Ոչ մի հարցուած կարող չէր այդպէս անցանկալի և անակնունելի լինել ինձ, քան թէ այդ։ Իմ յայտարարութեան մէջ այդ խնդիրը ճարտարապէս վարագուրել էի մի գաղտնածածուկ մթութեամբ, և ընթերցողը կարող է մտաբերել, թէ ինչպէս ամուր հիմնաւորել էի իմ յոյսերը այս յաջողակ քօղարկութեան վերայ, առանց մտածելու թէ դա պիտոյ է գրգռէր կանայի սեռի հարցասիրութիւնը։ Եւ այժմ պիտոյ էր յետ քարշել այդ վարագոյրը։ Ինչ ունէի ասելու. մի՞ թէ ճշմարտութիւնը. բայց ինչ երեսով կարող էի խոստովանել թէ ամենասոսկալի հարկաւորութիւնը ստիպել է ինձ այդպէս վարվիլ։ Մի՞ թէ այնգեղեցիկ պատրուակները որով աշխատումէի ծածկել իմ ստոյգ պատճառները, չէին իսկոյն ոչնչանալու և դառնալու մի շատ հասարակ բան։ — «Կարո՞ղ եմ նոյն հարցուածով պատասխանել ձեզ,» — ասացի ես — թէ ինչ շարժառիթ ունէիք դուք թոյլ տալու ինձ ունել ձեր հետ այսպիսի հանդիպումն։»

— «Այժմ, թո՛ղ խօսենք յառաջ ձեր պատճառների վերայ.» — պատասխանեց նա հանդարտութեամբ — «ի հարկէ պիտոյ է մեզ ծանօթանալ միմեանց, և մտ դնելով բարեկարգ ընկերութեան բոլոր կանոնները, ձեր պարտականութիւնն է սկսանել խօսակցութիւնքը։ Ես կարող չեմ թաքուցանել ձեզ, որ ինձ գրեթէ անհասկանալի էր թէ ինչու խնդրումէք ձեզ կին լրագրերի ճանապարհով։»

— Ինչու մտածումէք դուք այդպէս։»

— Ո՞րթէ այդ բանը զարմացնումէ ձեզ. բայց մի այդպիսի մանուկ և, եթէ կը ներէք ինձ յաւելացնել դորա վերայ, մի այդպիսի փառաւոր տղամարդ — »

Ես խոնարհեցուցի գլուխս, ժպտելով քաղցրապէս։

— Դորա վերայ պիտոյ է յաւելացնել և այն, որ դուք ձեր կենցաղավարութիւնը կարող էք ստացած լինել առաւել ընտիր հասարակութիւնների մէջ. — ես քաջահաւատ իմ, որ կանանց ազգի հետ ծանօթութեան պակասութիւնը չէ, որ պատճառ է տուել ձեզ այսպէս ընթանալ։»

Եթէ գործը շատ խորհրդաւոր եղած չը լինէր, ես կը ծիծաղէի այդ

խօսքերի վերայ։ Վա՜յ ինձ, իմ վատաբաղդութիւնը այն է եղած միշտ, որ ես չափից դուրս ծանօթ եմ եղած կանանց ազգին։

— Ոչ, ոչ.» — բացագանչեցի ես, կատակային ոճ տալով իմ խօսքին — «ես չեմ կարող գանգատաւոր լինել այդ մասին։ Բայց մի՛ թէ գտանումէք դուք զարմանալի, որ մի երիտասարդ որին ծանօթ էին շատ կանայք, այնու ամենայնիւ չէր գտանում մի հատ, որի հետ կարող էր յանձն առնուլ վճարել իւր կեանքը։»

— «Գուցէ թէ հաստատուն կամքով երբէք փորձած չէք այդ բանը. կամ թէ, որ աւելի հաւանական է երեւում ինձ, ժամանակ չէք ունեցած դուք այդ բանի համար։ Դուք շատ զբաղված էք, դուք մի գործունեայ տղամարդ էք. ձեր ժամերը թանկ են, դուք չը կամիք վատնել նորանց, երկար ու ձիգ որոնելով ու ընտրելով։ Իրա՛ւ է խօսքս։»

Մե՞ծ փոխարէն հատուցած կը լինէի ես, եթէ այս րոպէիս կարողացած լինէի տեսանել այդ կնոջ երեսը. Նորա հանդարտ խօսակցութեան ոճի մէջ չը կարողացայ ես գտանել, արդեօք դա ծաղր էր առնում ինձ, թէ խօսումէր ծանրութեամբ։ Բայց ինչպէս եւս լինէր, հեգնութիւն թէ արդարամիտ խօսուածք, երկուքը եւս միապէս անախորժ էին ինձ։ Ես տեսայ իմ անձը մի հարցափորձի քաւարանի մէջ, որի հետ համեմատելով իմ պատասխանատուութիւնքը տէրութեան հարցափորձողների առաջեւ, երեխայական խաղալիք էին։

— «Ես սիրող եմ» — յառաջ տարաւ նա խօսքը, տեսանելով թէ ոչ իսկոյն պատասխանեցի նորան — գործունեայ մարդերի։ Այս պատճառով ուրախանալու էի եւ աւելի յարգելու ձեզ, եթէ լսէի ձեզանից, որ ունիք մի պատուաւոր թէեւ ոչ այնքան նշանաւոր պաշտօն։ Անպատճառ պարտական էք դուք ասել ինձ այդ բանը, մինչեւ կ՛անցանէինք մեք դէպ ի գլխաւոր խօսելիքը։

— «Ո՛ր չար դեւը թաքուցած էր այս դիմակի քամակում։ Սա շօշափեց իմ առաւել վիրաւորելի տեղերը այնպիսի հանդարտութեամբ, որ շատ բնական էր, քան թէ կարող էր լինել յառաջուց խորհրդածութեան պտուղ, եւ այդու ամենայնիւ ցուցանումէր մի սահմանեալ նպատակ։ Այնպէս էր սիրտս, ինչպէս լինումէ ջրաբուժական տների մէջ եղած հիւանդինը, որի վերայ ամենայն րոպէ թափվումէ մի սափոր ջուր։ Բայց ես սրտապնդվեցայ եւ ասացի վստահաբար.

— «Ես ուսած եմ իրաւաբանութիւն։»

— «Ունի՞ք դուք պաշտօնական թօշակ։»

— «Ոչ. դեռ եւս փաստաբան (ադվօկատ) եմ ես, առանց ընդարձակ գործակատարութեան»։

Եթէ բոլոր աշխարհը տային ինձ, կարող չէի յաւելացնել այս

խօսքերս․ ,առանց օրինաւոր վկայագրի՝։ Բայց նա դուրս հանեց ինձ դժուարութեան միջից և ասաց մի անհամեմատելի պարզմտութեամբ։

—«Ուրեմն, ստուգապէս, փաստաբան էիք դուք առանց օրինաւոր վկայագրի։ Ի հարկէ, վատ բան է այդ․ բայց մի այդպիսի տղամարդ կարող է դիւանապետ դառնալ Անգլիայի մէջ, եթէ ունի քանքար, ժրաջանութիւն և մի փոքր արծաթ, «յաւելացրեց նա գրեթէ հեգնական ոճով։

Վերջին խօսքը առաւել խելացին էր նորա խօսած բաների մէջ։ Իմ գրեթէ սառած յոյսերը կենդանացան վերստին և ես մեծ մխիթարութեամբ միտ առայ այդ խօսքերը։

—«Ներէ՛ք, պարոն,»— ասաց նա ինձ բարեսրտութեամբ— անկեղծաբար խօսենք միմեանց հետ․ ինչ հարկաւոր է մեզ խաբել իրեար։ Ինձ յայտնապէս երևումէ, որ դուք որոնումէիք մի կին, որ ունէր արծաթ։»

—«Ոչ․ այդ չէ միայն իմ ցանկութիւնը,» ձայն տուեցի ես, ըղգալով որ իմ բոլոր արիւնը վազեց թշերիս մէջ։

—«Բայց դա գլխաւոր խնդիրն է։ Խոստովանեցէք, որ դուք չէիք յղանալու ձեր մէջ այդ խորհուրդը, այս «ոչ ևս այլ անսովոր կերպով» ընտրել ձեզ կենակից, եթէ չը որոնէիք մի գեղեցիկ դոյք և նոյնպէս —ըստ որում մինը անկարելի է առանց միւսին—» մի կին։

—«Ո՛հ, շատ ծանր խօսք է այդ։»

—«Բայց ճշմարիտ միայն— պատասխանեց նա հանդարտութեամբ» այժմ, իմ պարոն, հասած ենք այն տեղ, որ կարող ենք սկսանել մեր գործը։ Ես ունիմ դոյք։ Ասացէ՛ք ինձ այժմ, թէ ինչ գին էք սահմանում ձեր գլխի համար։ Բայց ոչ․ այս մի յանդուգն հարցուած է․ ինչքան արծաթ բաւական կը համարէիք դուք, մի յարմարաւոր կեցութիւն հաստատելու ձեզ։»

Չեմ կարող ես ուրանալ, թէ այն կծողական ծաղրաբանութիւնը որ կարծումէի գտանել այս խօսքերի մէջ, շատ դառն էր ինձ։ Արիւնը վազեց դէպ ի սիրտս և ես վեր կենալով իմ աթոռից և ձեռք ձգելով գդակիս, ասացի շատ ծանրապէս․

—«Գուցէ թէ աւելի բարւոք կը լինէր երկուքիս ևս, տիկին, կտրել մեր խօսակցութիւնը։ Ամէնը, ինչ որ դուք ասացիք ինձ, երևումէ ինձ օտարոտի, և անհաւանելի է ինձ։ Ամենևին չը գիտեմ ես, ծաղրածութիւն էիք առնում իմ հետ, թէ խօսումէիք ստուգապէս։ Եթէ ուղիղ է առաջինը, ապա սխալված էք դուք իմ մասին։ Այն ընթացքը որ ես գործ եմ դրել, արդարև յառաջացած է մի դառն հարկաւորութե-

նից, բայց պատուաւոր էր և ուղղամիտ։ Ես չը կամիմ յաւելացնել և ոչ մի բառ, այլ մնացէ՛ք բարեաւ։»

—«Ոչ· սպասեցէ՛ք, խնդրում եմ ես·» —կրկնեց նա իսկոյն և քաղաքավարութեամբ ստիպեց ինձ վերստին նստել — «մեք դեռ ևս չենք հասած գլխաւոր խօսելի բանին։ Դուք յիշեցիք մի դառն հարկաւորութիւն։ Արդարև դառն է մի տղամարդու համար, որպիսի դուք էք, լինել մանուկ, պատուասէր, սիրտը յոյսերով լի, և հառաչել ճնշող հոգսերի և դժուարութենների ծանրութեան տակ։ Ես ունիմ, ինչպէս ասացի ձեզ, այն կախարդական դաւաղանը որ կարող է հալածել դորանց։ Հաւա՞ն էք երեսուն հազար ֆունտ ստերլինգի։

Երեսուն հազար ֆունտ ստե՛րլինգ։ Վեր թռայ ես, որպէս թէ ականջիս տակից մի թնդանօթ արձակվեցաւ, երբ որ լսեցի այս անչափելի գումարը։ Գուցէ թէ շատ յիմարաբար խեղաթիւրեցի (ծռմռեցի) ես դէմքս· պատճառ, այն կինը յառաջ տարաւ խօսքը այսպէս·

—«Խնդրեմ աներկմիտ լինել իմ ասածի ստուգութեան վերայ։ Պատրաստ եմ իսկոյն տալ ձեզ ամենայն կարելի ապացոյց իմ հարըստութեան մասին։ Այնուհետև քաջահաւատ կը լինիք դուք, թէ ես մի փոքր պակաս քան թէ աւելի ասացի։»

—«Բայց—զարմանալի՛ իրողութիւն·» —բացագանչեցի ես— երեսուն հազար ֆունտ ստե՛րլինգ· դա մի այնպիսի հարստութիւն է, որ այնքան ևս տղամարդեր կարող էր խոնարհեցնել ձեր ոտքի տակ։ Ուրեմն, ինչու՞ որոնում էք դուք մի ամուսին այդպիսի կերպով, որովհետև կարող էիք մի ազատ ընտրութիւն գործել շատ լաւերի ու գերազանցների միջից։»

—«Դուք ունէիք ձեր պատճառքը· կարող չե՞մ ես ունենալ և իմ պատճառքը, շշնջեց նա մեղմաբար և ամաչելով։»

Ո՛հ· այժմ շատ բացայայտ հասկացայ ես նորա պատճառքը· որպիսի անճոռնի հրէշ պիտոյ է լինէր այս կինը, եթէ երեսուն հազար ֆունտ ստերլինգը ևս կարող չէին տալ նորան մանկութիւն և գեղեցկութիւն։ Թէպէտև բարձրացաւ իմ մէջ մի ճշմարիտ փոթորիկ խռովութեան, բայց ես յաղթեցի անձնիս և ասացի նորան կեղծաւորված խաղաղութեամբ·

—«Կարծեմ թէ կարելի էր մտքով նկարագրել ձեր պատճառքը, տիկին· կարո՞ղ եմ ասել իմ կարծիքը։»

—«Խօսեցէք, պարոն· անօգուտ էր ծածկել այն բանը որ մի րոպէից յետոյ պիտոյ է յայտնվի։»

—«Դուք կամեցած էիք» —յառաջ տարայ ես խօսքս— դիմակ դը-

նել ձեր երեսի վերայ մեր առաջին հանդիպման միջոցին, գուցէ թէ երկմիտ լինելով ձեր գեղեցկութեան վերայ։»

—«Իմ գեղեցկութեան վերայ։ Ով իմ պարոն, մի՛ ստիպէք ինձ մի ցաւելի խոստովանութիւն անել։ Ես գեղեցիկ չեմ։ Այս խօսքը նա դուրս հանեց բերանից մի այնպիսի հառաչանքով, որ աւելի բան հասկացրեց ինձ, քան թէ նորա բառերը։

—«Ոչ ոք կարող չէ դատաւոր լինել իւր յատուկ գործի մէջ։ Կայ մի գեղեցկութիւն որ չէ հիմնաւորված երեսի կերպարանքի վերայ, այլ հոգու վերայ, որ և իւր աստուածեղէն ծագման, և ազնուականութեան կնիքը տպաւորումէ մի գեղեցիկ դէմքի վերայ։ Ինչու չը կամիք դուք, ցած դնելով այդ դիմակը, ինձ թողուլ վճռահատութիւնը։»

—«Ոչ, ոչ. անկարելի է այդ. «պատասխանեց նա հաստատապէս։—«Դուք չէք տեսանելու իմ դէմքը, մինչև վճռած էր մեր գործը այո և ոչ ասելով։ Ձեր ասածը կարող էր ճշմարիտ լինել, եթէ — լինէի ես մանուկ։»

—«Ուրեմն մանուկ չէք դուք.»—հարցրեցի ես դանդաղելին, որ գոնեայ մի բան ասէի։

—«Ոչ, իմ պարոն. իմ մանկութեան օրերը թվումեն ինձ մի երազ։

—«Այդ իրողութեան մէջ, նոյնպէս զանազան են անձնական կարծիքը.» — կրկնեցի ես ջերմութեամբ — «Ինչ որ դուք ասումէք չմանուկ, գուցէ թէ հասուն և նստած տարիք են, ուր հաստատուն և արժանապատիւ կատարելութիւնք մի ճոխ փոխարէն էին մանկութեան անցաւոր և միշտ տարակուսական վայելչութենների համար։» — Այս պատասխանից բացայայտ է, թէ ինչ խոր արմատներ արձակել էին իմ սրտի մէջ այն երեսուն հազար՝ ֆունտ ստեռլինգը, և թէ ինչպէս պատրաստ էի ես ամենայն կերպով պաշտպանել նորան։

—«Ինչ էք իմանում դուք, հասուն և նստած տարիք ասելով.» —հարցրեց նա այնպէս մեղմաբար, որ հազիւ թէ կարող էի հասկանալ։

—«Մի րոպէ յետ ձգեցի ես իմ պատասխանը.— «Ես ծանօթ եմ եղած այնպիսի սիրարժան կանանց հետ, որ հասած էին կեանքի միջասահմանին, երեսունի ու քառասունի մէջ։»

Մի բարձրաձայն ցաւալից «վա՜յ ինձ» հնչեց դէպ ի ականջս, և ես կարող չէի ուրանալ, թէ այս «վայտուութեան» միջոցին սարսափ եկաւ իմ վերայ։

—«Ես չը կամիմ խաբել ձեզ,—շշնջեց կինը և՛ դժուարանալով և՛ ամաչելով — «կրկնապատկեցէք երեսուն տարին, և ահա գիտէք իմ հասակը։»

Մի կայծակի շանթ կարող չէր այնքան ահացուցանել ինձ, ինչ-

քան այդ խօսքը · — «մի՞թէ վաթսուն տարօք հասակ ·» ձայն տուեցի ես և վեր թռայ ։

—«Այո, պարոն, իմ կեանքի մէջ տեսած եմ ես վաթսուն ամառըն · եթէ ասեմ ձեզ նոյնպէս, որ ես այրի կին եմ, այնուհետև բաւական շատ գիտէիք դուք, որ կարողանայիք խնդրել կամ թէ մերժել իմ հարսնութիւնը ձեզ ։»

—«Այո ես գիտեմ բաւական շատ,« — ասացի ես դառնալէս» որ կարողանայի խելամուտ լինել թէ իմ քիմարական ընթացքը պատճառել է երկուքիս ևս մի դժուարացուցիչ հանդիպումն ։ Ամենից բարւոքը այն էր, որ շուտով վճռէինք գործը ։ Կարծեմ, տիկին, որ մեր հասակների տարբերութիւնը լինելու է մի անյաղթելի խափան մեր զուգաւորութեանը ։ Եւ որովհետև մի բաղդաւոր դիպուածով ծանօթ չենք մեք միմեանց ընտանեկան հանգամանքներին, ուրեմն կարող ենք բաժանվիլ միմեանցից և մոռացութեան տալ ինչ որ անցած էր մեր մէջ ։»

—«Ոչ այդպէս, պարոն ·» — ասաց նա ծանրութեամբ և հաստատապէս — «Ես ամենևին յօժար չեմ այդպէս հեշտ արձակել ձեզ ։ Դուք պատճառ էք տուել ինձ յանձն առնուլ այս քիմարական ընթացքը, որ ինձ խայտառակելու է ձեր և իմ աչքումը ։ Ես իրաւունք ունիմ պահանջելու, որ դուք այս գործի մէջ, որ և իմն է, ոչ թէ կրքոտ շտապութեամբ, այլ խաղաղամիտ հասողութեամբ վճիռ տայիք ։ Կամիմ ժամանակ տալ ձեզ մինչև էգուց, այս ժամս · այնուհետև կը լսեմ ձեր կտրական վճիռը ։»

—«Բայց եթէ այդ վճիռը բացասական եղաւ ։»

—«Այնուհետև կը հանգստանամ ես ։ Ուրեմն դուք գալու էք ։» Ես պահանջումեմ ձեր խոստումը, որ դուք կամէիք գալ ։»

—«Երդվումեմ իմ պարծանքովս,» ասացի ես և հեռացայ ։

Ոչ · ամենևին անհնար էր նկարագրել մտքով այն զգայողութիւնքը և այն տրամադրութիւնը որի մէջ գտանվումէի ես, երբ որ միայն էի և արձակ օդի մէջ ։ Ես կարող էի ծիծաղել և նոյն միջոցին դէպ ի մահ զայրանալ ։ Ինչու համար պիտոյ էր ինձ ուրանալ թէ այն երեսունհազար ֆունտ ստեռլինգը մի զօրաւոր կախարդական ներգործութիւն արեցին իմ վերայ ։ Այդ վեր էր քան թէ իմ շատ համարձակ ակնկալութիւնքը ։ Իմ բոլոր հոգս ու տառապանքը միանգամայն բարձած կը լինէին, իմ ամենավերին ցանկութիւնքը և դիտաւորութիւնքը պսակված կը լինէին ։ Բայց միւս կողմից, այն փառաւոր այրի կինը վաթսուն տարօք, մնումէր իմ համար մի մեծ քար գայթակղութեան ։ Ես պատկերացուցի մտքով թէ ինչպէս պիտի լինէր իմ դրութիւնը, այն թանգագին պառաւի կողքում ման առնուլ, տեսանել իմ բարեկամների և ծա-

նօթների աչքը կծողական ծաղրածութեամբ իմ վերայ դարձուցած․ ես լսումէի նոցա արհամարհական խեղկատակութիւնքը, որ թունաւոր նետերի պէս վիրաւորումէին իմ սիրտը։ Անկարելի՛, անկարելի՛։ Բայց և դէպ ի իմ անձը արդարակշիռ լինելու համար, շարժվեցաւ սրտիս մէջ մի աւելի ազնիւ խորհուրդ, քան թէ ունայնասիրութիւն։ Ես ամենեւին անարժան տեսայ իմ պատուին մի այդպիսի վաճառաշահական դաշն կապել․ և մի՛ թէ այլ բան էր քան թէ մի ամօթալից վաճառաշահութիւն, իմ յատուկ անձը, իմ մանկութիւնը մատնել մի պառաւ այրի կնոջ ձեռք, կեղտոտ արծաթի համար և հաւաստի գիտելով, որ երկուքս ևս պիտոյ է անբաղդանայինք։ Արդարև, շատ երկար չը դժուարացայ ես վճռել իմ մէջ, թէ պիտոյ է հաստատ մնալ իմ առաջին կամքի վերայ, և պինդ ու ամուր որպէս մի ապառաժ գնացի ես սահմանեալ ժամին դէպ ի հիւրանոցը։ Ես գտայ այն կինը նոյն սենեկի մէջ, դիմակը երեսի վերայ, ինչպէս մի օր յառաջ։

— Տիկին — ասացի նորան պատկառանքով — «Նախ և յառաջ պարտ է ինձ թողութիւն խնդրել ձեզանից, որ ես իմ անխոհական ընթացքով ձգել եմ ձեզ այդպիսի անախորժ դրութեան մէջ։ Թէ ինչ բան պատճառ է տուել ձեզ միտ դնել իմ յայտարարութեանը և պայմանախօսել իմ հետ, չը գիտեմ ես․ բայց որպէս և եղած է պատճառը, ես անկեղծօրէն խնդրումեմ ձեզանից բաց թողուլ որ և իցէ մտածութիւն մեր զուգաւորութեան վերայ։ Մեք կարող չենք բաղդաւոր լինել։ Իմ խիղճը և պատիւը արգելումեն առաջարկել ձեզ իմ փեսայութիւնը և ընդունել ձեր հարսնութիւնը։ Մեր հասակների տարբերութիւնը այնքան մեծ է, և ձեր դոյքը այնքան ճոխ, որ ամենայն մարդ տեղիք ունէր կարծելու, թէ ամենացած շարժառիթներ միայն ստիպել են ինձ առնուլ ձեզ կնութեան։ Ուրեմն, թող բարեաւ մնա ասենք միմեանց։»

— Մի՛թէ այդ է ձեր կտրական, անփոփոխելի կամքը․» հարցրեց նա հազիւ թէ լսելի ձայնով։»

— Այս է իմ անայլայլելի կամքը,» կրկնեցի հաստատապէս։

— Ուրեմն, այժմ վնաս չունի, եթէ վեր առնում ես իմ դիմակը։» Այս բառերը արագ ու զուարճ դուրս հանելով բերանից, ցած դրեց դիմակը։

— Տէ՛ր իմ Յիսուս․ ինչ տեսայ ես․ մի մանկական դէմք․ միւսանգամ նայելով նորայ վերայ, բացագանչեցի, «Լուցիա, Լուցիա»։

Սա էր իմ չքնաղ անծանօթը, աւելի զմայլեցուցիչ, աւելի ծաղկափթիթ, քան թէ իմ երևակայութիւնը պատկերացուցել էր նորան ինձ։ Ես կամէի շտապով մօտենալ նորան։

— «Յե՛տ դարձիր, պարոն, ձայն արձակեց նա իւր պայծառ, արծա-

թաշնչիւն ձայնով և փայլուն աչքերով — «Դուք մերժել էք իմ անձը։»

— «Ոչ ձեր անձը, Լուցիա, ոչ ձեր անձը։ Ոչ, ես ուխտադրուժ չեմ գտնուած դէպ ի ձեր մանկութիւնը, գեղեցկութիւնը և սէրը։»

Այս րոպէիս բացվեցաւ դուռը և լսվեցաւ մի այլ ձայն. «բարի Աստուած, այս ինչ անցք է այս տեղ։»

Ես շրջեցի դէմքս. նոր հիացք, նոր սքանչելիք. — իմ մօրաքոյրս իւր կենդանի կերպարանքով կանգնած էր իմ առաջև։ Ես կորցրեցի զգայութիւնս, որպէս թէ տեսանուէի իմ առաջև մի ոգի։

— «Այ, վա՜յ» ասաց նա կատակօրէն յանդիմանական ոճով. «այս, դո՞ւք էք, պարոն քուերորդի. ինչ բան ունիք իմ զաւակի հետ։»

Կեղևանքը վայր ընկան իմ աչքերից։

— Ո՜հ, այժմ լուսափայլ է ամենայն ինչ — ձայն արձակեցի ես — «Դո՞ւք, դո՞ւք էիք այն բարեսիրտ այրի կինը, որ երեկ յոյս տուեց ինձ, թէ ստանալու էի նորա ամուսնական սէրը։»

— Այո՛, անպիտան դու. դու մերժեցիր ինձ ամենևին — հեռացի՛ր աչքիցս։»

— «Ոչ, մօրաքոյր իմ. այս տեղ կայ մի մագնիս որ ինձ անընդդիմանալի մօտ է քարշում. ուրեմն Լուցիան, իմ Լուցիան է ձեր հոգեզաւակը։»

— «Ի՞նչ Լուցիան։ Խելացի չես դու, իմ բարեկամ. դու հինգ տարի յառաջ մերժել ես նորա հարսնութիւնը։«

— «Ո՜վ. ինչո՞ւ համար յիշեցնումէք ինձ այդ բանը։ Ո՛վ կարող էր մտածել թէ Լուցիան Վալէսի սարերի մէջ և Զելթընհեմեան որբիկը մի և նոյն անձն էին։ Եթէ ես այն ժամանակին անհամեստաբար և մերժողապէս պատասխանեցի, մի՛ թէ դորա պատճառը չէր իմ անսահման սէրը դէպ ի նա։ Այս բանի մէջ արժան չէր ձեզ յանդիմանել ինձ, այլ գովել։»

— «Այո՛, և ի վերայ այդր ամենայնի, որպէս վարձատրութիւն, բաղդաւորե՛լ քեզ այս հրեշտակի սիրովը, դու անպիտան։»

— «Ես համարձակվումեմ յուսալ, իմ պատուական մօրաքոյր.» — կրկնեցի ես. յիրաւի դուք ունէիք դիտաւորութիւն զուգաւորել մեզ, երբ որ դուք պատասխան տուեցիք իմ յայտարարութեանը։»

— «Դու չե՞ս կարող այդքան անխել լինել և մտածել, որ ես արած էի այդ բանը իմ օգտիս համար։»

— «Բայց, պատուական մօրաքոյր, քո արածը մի վտանգաւոր փորձ էր. ինչ ահարկու փորձութեան տակ դրեցիր դու իմ գլուխը. մի՛ թէ բերեցէք միայն երեսուն հազար փունտ ստերլինգը։ Եթէ այդ ճոխու-

թեամբը կուրանալով կամեցած լինէի ընդունել ձեր ամուսնութիւնը։»

— Այնուհետև չէիք ստանալու ոչ ինձ և ոչ Լուցիան, այլ մի սաստիկ խրատ, որ վերջ դրած կը լինէր ձեր բոլոր ցանկութեններին, այսպիսի կերպով կին ստանալ ձեզ ։»

— «Ուրեմն տեսանումէք ահա, որ ես այնքան վատ չեմ, ինչպէս դուք կարծումէիք։

— «Ոչ․ եթէ այդպէս լինէր, ապա հաւատացած կացիր, որ մեք գալու չէինք այս տեղ։ Շնորհակալ եղիր քո բարեկամ Ուաթսոնից Չելթընհեմումը, որ միշտ եղած է քո եռանդնոտ ջատագովը (պաշտպանը)։ Նորա ձեռքով գիտեմ ես, որ դու եղած ես թեթևամիտ, բայց ոչ վատթարասիրտ, և թէ դու որոշել էիր խելացի և պատուաւոր կեանք վարել։ Նորա ձեռքով նոյնպէս իմացայ ես քո պատուական դիտաւորութիւնը հարսնախօս լինելու։

— «Ո՜վ, ինչպէս ուրախ եմ ես այժմ այն նամակների խառնաշփոթութեան վերայ, որ սկզբումը այնքան անախորժ էր ինձ։

— «Անտարակոյս էր դա այն շատ բաղդաւոր սխալմնքը որ դու երբէք և իցէ արած ես քո կեանքի մէջ․ քո բարեկամի համոզելովը մեք յղացանք ու կատարեցինք այդ առաջարկութիւնը։»

— «Բայց դու, իմ ամենաթանգ Լուցիա,» — հարցրեցի ես քնքշութեամբ դառնալով դէպ ի նա, գիտէի՞ք դուք, թէ այս տեղ գտանելու էք ձեր բարեկամը, որին հանդիպած էիք Վալէսի սարերումը։»

— «Այո՛, ես գիտէի այդ բանը,» ասաց նա զմայլեցուցիչ շփոթութեան մէջ և ամենևին կարմրատակելով։

— «Բայց ինչպէս կարելի էր այդ․ ինչքան որ կարող եմ ես մտաբերել, ասած չէի ձեզ իմ անունը։»

— «Այդ բանի մէջ կրկին անգամ օգնական գտանվեցաւ քեզ քո բարեկամը․» — ասաց իմ մօրաքոյրը — «Նա պատմեց մեզ քո անակնկալ պատահարը առանց որչափ և իցէ յիշելու Լուցիայի մասնակցութիւնը դորա մէջ։ Բայց որովհետև Լուցիան այս պատմութեան միջոցին ցոյց տուեց մի մեծ անհանգստութիւն, այնուհետև յառաջ տանելով հետաքննութիւնը վերահասու եղայ ես, որ դա պիտոյ է լինէր այն կնամարդը որ արած էր այդպիսի խոր տպաւորութիւն քո սրտի վերայ։»

— «Այլև պիտոյ է ինձ տեղեկութիւն տալ ձեզ, որ ես շատ անբաղդացած էի, զրկվելով նորանից, որ ես երբէք մոռացած չեմ նորան, միշտ սիրած եմ նորան և մինչև այս ժամս սիրումէի։ Ով Լուցիա, կարո՞ղ եմ նոյն բանը լսել ձեզանից։

Աւելորդ էր ինձ սպասել Լուցիայի պատասխանին․ նորա ճառագայթազարդ աչքը, նորա թշերի կարմրութիւնը ասացին ինձ աւելի շատ

բան, քան թէ հազարաւոր խօսքեր կարող էին ասել։ Նորա պատասխանելի խօսքը խորասոյզ եղաւ այն առաջին համբոյրի մէջ, որ ես համարձակվեցայ տպաւորել նորա վարդակարմիր շրթունքի վերայ։

## ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ·

Հայաստանի գիւղերումը, ինչպէս երեւումէ ասիական ծաղկափթիթ երեւակայութեան ծնունդ, պատմութիւն է լինում թէ ժամանակով եղած է մի հայ քահանայ որ ունէր մի հատիկ դուստր Ասլի անունով․ բայց սոյն այս քահանային յանձնված էր նոյնպէս դաստիարարակելու մի պատանի Թուրք իշխանորդի, Քեարամ անունով։ Այս երկուքը միասին ուսանումէին այդ քահանայի մօտ․ բայց շուտով, երեխայական տարիքը անցանելով, բորբոքվեցաւ նոցա մէջ մի ախտաւոր սէր։ Այս բանը զարհուրելով ու տրտմութեամբ նկատեց հայրը։ Գուշակելով թէ ինչ վտաբաղդութիւն նորա և իւր զաւակի համար պիտոյ է ծնանէր սորանից, ըստ որում խելքի մօտ բան էր, թէ իւր մի հատիկ դուստրը ուրանալով իւր ծնողքը, իւր ազգը, իւր կրօնը, իւր նախնիքը, գուցէ թէ դառնար դէպ ի մահմետականութիւն, իւր աղջկայ հետ միասին ծածուկ փախստական եղաւ սարերի ներսը։ Պատանի իշխանորդին տրտում ու կարօտով լիք, առաւ Աշըղի կերպարանք և սար ու ձոր ընկաւ, որոնելու իւր սիրականը, հարցուփնդիր անելով ծառերից ու ծաղիկներից, ջրերից ու աղբիւրներից, լուսնից ու աստղներից, որ գուցէ ցաւակից լինելով նորան, տեղեկութիւն տան իւր սիրականի մասին։ Շատ ու շատ անօգուտ խնդրելուց և որոնելուց յետոյ, տարիներ գալով ու գնալով, վերջապէս Աշըղը գտանումէ իւր սիրական Ասլին, բայց ինչ դրութեան մէջ։ Ասլին ոտքից մինչև գլուխ պատած է մի անթափանցելի, անլուծանելի, անխորտակելի կախարդական շապիկով որ նորա հայրը, մի մեծ մոգ (հմայող, գաղտնագէտ), գուշակելով նորա ճակատագիրը, դեռևս չմեռած, իւր ձեռքով հիւսել ու պատրաստել էր, իւր աղջիկը ապահով կացուցանելու ամենայն տեսակ փորձութենից։ Երբ երկու սիրականքը գտել էին միմեանց, այրող սիրու կրակը որ երկար ու ձիգ կարօտութենից ու փափագից սնունդ ստանալով, անշէջ պահպանված էր, իսկոյն բորբոքվեցաւ ու բոցավառվեցաւ երկուքի մէջ մի անյաղթելի զօրութեամբ։ Երկուքը ևս սկսեցին երգել իւրեանց սըրտի փոխադարձ ձգտողութիւնը, իւրեանց անպատում խնդութիւնը, իւրեանց սէրը, իւրեանց վտաբաղդութիւնը, օր ու գիշեր, առանց փակելու աչքերը։ Զուր էր նոցա աշխատութիւնը արձակել այն կախարդահիւս շապիկը որ վերևից մինչև ներքև ամրացած էր շարակից կոճակ-

*ներով. երբ որ բացվումէր երկրորդ կոճակը, դարձեալ ինքնին փակվումէր առաջինը: Չլցուցած կարօտութեան տանջանքը ևս առաւել բորբոքելով նոցա սրտի կրակը, երկուքը ևս միասին վառվեցան մի ճշմարիտ բոցի պէս և այրվելով, մոխիր դարձան: Այս մոխիրը ցաւակից մարդերի ձեռքով հաւաքվեցաւ և ամփոփվեցաւ մի և նոյն գերեզմանի մէջ, և այսպէս երկու սիրականքը միաւորվեցան գոնեայ մահից յետոյ: Բայց, ո՜վ քաղցր տեսարան. երկու վարդի թուփեր նոցա գերեզմանից բուսանումեն այժմ և ծաղկումեն. նոքա խոնարհումեն դէպ ի միմեանց կողմ, նոքա աշխատումեն գրկախառնել միմեանց, բայց մի փշի ճիւղ (Հաւատը) երկուքի մէջ դուրս երևելով և ներս մտանելով, յաւիտեան բաժանումէ մինը միւսից [1]:*

## ՄԻ ՔԱՆԻ ԱՍԻԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼՔ.

*Մի շինական, երկիրը վարելու ժամանակին, գտանումէ ծակի մէջ մի ցրտից սառած օձ. վեր է կալնում նորան և ջերմացնումէ իւր ծոցումը, մինչև նա վերստին կենդանանումէ. այնուհետև օձը կամենումէ խածանել երկրագործին:*

*Շինականը ասումէ.* *Այ օձ, ես քո կեանքը փրկեցի, և դու կամենո՞ւմես խածանել ինձ,*

*Օձը ասումէ.* *Այսպէս ևս արժան է. ընութիւնը հրամայել է մեզ խածանել ամենայն մարդ. պատճառ, քան զմարդը առաւել ապերախտ արարած չը կայ աշխարհի վերայ:*

*Շինականը ասումէ.* *Ուղիղ չէ այդ. երեք դատաւորք պիտոյ է վճռեն վէճը:*

*Օձը ընդունումէ այդ առաջարկութիւնը. նախ գանչումեն վճիռ տալու մի խոհեմ, ծերացած ձի. սա խօսումէ. «Այո մարդը ապերախտ է. ահա շատ տարիներ հաւատարմապէս ծառայելով նորան, պատերազմի մէջ փրկելով նորա կեանքը, վերջումը հրամայումէ նա մորթել ինձ և իմ կաշին ծախել քերթիչին:» Գանչեցին յետոյ մի պառաւ գոմէշ, և*

---

[1]) *Այս գեղեցիկ բանաստեղծական զրոյցը, ինչպէս երևումէ, պիտոյ է տեղ տեղ հիւսած լինի երգերով ու տաղերով. բայց մեք այս շարքերը գրելու միջոցին ունէինք միայն այս պատմութեան լոկ և անզարդ նիւթը: Շատ ցանկալի կը լինէր մեզ ստանալ Հայաստանի մարդերի ձեռքից այս պատմութեան ամբողջութիւնը, և Հիւսիսափայլի հրատարակողը խոստանումէ վարձատրել մի այդպիսի ծրար 15 մանէթով:*

սա տուեց նոյն վճիռը։ Ապա խնդրեցին աղուէսից, որ դատ անէ․ սա շշնջեց մարդու ականջումը․ «Տուր ինձ հաւաբունի առաւել պատուական հաւը, և ես կ՚օգնեմ քեզ քո դժուար դրութեան մէջ։» Շինականը նշանացի արեց, թէ յօժար էր։ Այնուհետև աղուէսը դատաւոր նստեց և հարցափորձ արեց մանրամասնաբար, խօսելով դէպ ի շինականը այսպէս․ «Ցոյց տուր ինձ այն ծակը որի մէջ օձը դրած էր սառած․ անկարելի է թվում ինձ, թէ կարող էր օձը տեղաւորվիլ այդ ծակի մէջ․ այդ բանին պիտոյ է ինձ ականատես լինել․ օձ դու, ներս սողացիր քո ծակի մէջ։» Օձը ներս սողացած լինելով, իսկոյն աղուէսն ու շինականը ծածկումեն և փակումեն ծակը, և այսպէս փրկութիւն է լինում շինականին։ Միւս օրին գալիս է աղուէսը, որ ստանայ խոստացած հաւը․ բայց շինականը քնած է, և նորա ծառայքը թակումեն աղուէսը ողբալի կերպով և կոտրումեն նորա ոտքը։ Ապա և աղուէսը վճիռ է հատանում նոյնպէս, ինչպէս առաջին դատաւորքը․» Մարդը արդարև առաւել ապերախտ է բոլոր արարածների մէջ։»

## ԵՐԱԽՏԱԳԷՏ ՀՈԳԻՆ․

Միանգամ ճանապարհորդումէ անտառի միջով մի ունևոր մարդ․ այդ տեղ հանդիպումէ նա մի քանի մարդերի որ մի մեռածի մարմին կախել էին ծառից և անողորմ կերպով թակումէին այդ դին։ Ճանապարհորդը հարցանումէ, ինչ էր շարժառիթը մի այդպիսի սրբապղծութեան դէպ ի հանգուցեալը․ նոքա պատասխանումեն թէ հանգուցեալը պարտական էր նոցա և չէ հատուցել․ ճանապարհորդը վճարումէ նոցա հանգուցելու պարտքը և թաղումէ նորան։ Անց են կենում տարիներ, նա հետզհետէ աղքատանումէ։ Բայց նորա հայրենի աշխարհումը բնակումէր մի մեծատուն մարդ որ ունէր մի հատ աղջիկ, որ և կամենումէր հայրը մարդու տալ։ Բայց հինգ փեսայք արդէն հարսանիքի առագաստումը մեռած էին, և ոչ մինը չէր համարձակվում այնուհետև հարսնախօսել այդ աղջիկը և մօտենալ նորան։ Այժմ հայրը աչք է ձգում այս աղքատացած մարդու վերայ և առաջարկումէ նորան իւր աղջիկը․ բայց այն մարդը տարակուսանքի մէջ է, արդեօք պիտոյ էր նորան իւր կեանքը վտանգի տակ ձգել, և խնդրումէ մտածելու ժամանակ։ Այս միջոցին գալիս է նորա մօտ մի մարդ և կամի սպասաւորի պաշտօն յանձն առնուլ նորա մօտ։ Աղքատացած մարդը ասումէ․ «Ինչպէս կարող եմ առնուլ քեզ սպասաւոր ինձ, ըստ որում ես այնքան չքաւոր եմ, որ հազիւ կարողանումեմ իմ անձս պահպանել։» Ես քեզանից չեմ պահանջում վարձ, ասաց միւսը, և ոչ կերակուր, այլ միայն քո ապագայ ունեցածի

և գդալքի կէսը։» Նոքա համաձայնեցան և սպասաւորը խորհուրդ տուեց իւր տիրոջը ընդունել առաջարկած ամուսնութիւնը։ Հարսանիքի գիշերին, սպասաւորը մի սուր ձեռքին ներս մտաւ հարսի ու փեսայի առագաստը՝ փեսան ձայն տուեց «ինչ կամիս դու։» Ասաց սպասաւորը․ «Մեր դաշնադրութեան զօրութեամբ պատկանում է ինձ քո բոլոր ունեցածի ու գդալքի կէսը․ ես չը կամիմ այժմ քո կինը, բայց կամիմ այս տեղ կանգնած մնալ։» Երբ որ ապա նորընծայ ամուսինների քունը տարաւ, նորահարսի բերանից դուրս սողաց մի օձ, որ առ ի մահ խածանէ նորափեսան. բայց սպասաւորը սուրը քարշած կտրում է օձի գլուխը և դուրս է ձըգում օձը։ Մի քանի ժամանակից յետոյ սպասաւորը պահանջում է տիրոջ ունեցածի ու գդալքի կէս բաժինը, որ և ստանում է, բայց սորանով բաւականանում. չէ նա, այլ պահանջում է և կնոջ կէսը։ «Սա պիտոյ է գլխիվայր կախ տրվի, և ես միջից կը կիսեմ նորան։» Այնուհետև կնոջ բերանից դուրս է գալիս և միւս օձը․ ապա խօսում է սպասաւորը՝ «Այս վերջին օձն էր, որ դուրս եկաւ․ այսուհետև կարող ես անվտանգ և երջանիկ ապրել քո կնոջ հետ․ բայց ես ոչինչ չեմ պահանջում քեզանից․ ես այն մարդու հոգին եմ, որի դին միանգամ ազատեցիր դու ծեծի անարգանքից ու տանջանքից և երկիւղածութեամբ թաղեցիր» և անհետացաւ իսկոյն։

## ՄԻ ԹԱԳԱՒՈՐ, ՈՐ ԻՒՐ ԾԵՐՈՒԹԵԱՆ ՕՐԵՐՈՒՄԸ ԲԱՂԴԱՒՈՐՎՈՒՄԷ։

Մի ժամանակ եղած է մի քաղցր և բարեացակամ թագաւոր։ Սորան միանգամ մօտենում է մի ոգի և խօսում է այսպէս․» Ես ուղարկած եմ Աստուծուց ասելու քեզ․ կամէիր արդեօք բաղդաւոր լինել քո մանկութեան, թէ ծերութեան օրերումը․ ինչպէս կամիս, ընտրիր։ Թագաւորը ընտրում է վերջինը։ Այնուհետև ձախորդութիւնքը փոթորկի պէս յարձակվումեն նորա վերայ․ նա կորուսանում է իւր թագաւորութիւնը, ապրում է որպէս աղքատ քաղաքացի, ապա մի հարուստ վաճառական յափշտակում է նորանից իւր կինը, և երբ որ նա իւր երկու որդիներով կամենում է ընկնել յափշտակողի քամակից, հասանում է մի գետի։ Նա կամենում է մի որդին շալակով անցուցանել գետի միջից, բայց այս միջոցումը մի գայլ ըմբռնում է գետափումը յետ մնացած որդին, և երբ որ հայրը շտապում է օգնելու նորան, միւսին տանում է ջուրը։ Երկու որդիքը ևս կարծումէր նա թէ մեռած են։ Երբ որ արդէն աղքատ, անօգնական, ամուսինը կորուսած, որդիներից զրկուած, օտար աշխարհներում տարիներով պանդխտացած էր, գալիս է մի աշխարհ, ուր այն

բոպէին անժառանգ մեռած էր մի Թագաւոր։ Քահանայքը և ժողովուրդը սահմանադրումեն, որ Թագաւոր նստի նա, որի վերայ ցած կ՚իջանէ մի սպիտակ արծիւ։ Մի արձակ դաշտի վերայ ժողոված է բոլոր բազմութիւնը․ յանկարծ արծիւը երեք անգամ Թեւարկելով ցած է գալիս մի օտարական մուրացկանի վերայ, և սա դառնումէ մի շատ կարող Թագաւոր։ Մի հարուստ վաճառական մօտենումէ Թագաւորին և խնդրումէ նորանից, որ հրամայէ սորա կինը որ փակած էր մի արկղի մէջ, խստիւ պահել։ Երկու սպասաւորք պատուէր են ստանում այս գործի մասին, և գիշերին արթուն մնալով պատմումեն մինը միւսին իւրեանց գլխի անցքը, ուստի բացայայտվումէ, որ դոքա եղբարք են։ Այս միջոցին փականքի մէջ դրած կինը անհամբերութեամբ Թակումէ արկղի դուռը և ձայն է տալիս որ բանան, ըստ որում նա լսել էր նոցա խօսակցութիւնը և իմացել էր դորանից, որ նոքա իւր զաւակներն էին։ Նոքա ազատումեն իւրեանց մայրը և պատմումեն միմեանց իւրեանց գլխի անցքը, ապա միասին քնումեն նոքա։ Այս դրութեան մէջ, առաւօտուն գտանումէ նորանց վաճառականը և վազումէ Թագաւորի մօտ, արդարութիւն պահանջելու։ Բայց շուտով լուսափայլումէ բանի իսկութիւնը, Թագաւորը դարձեալ գտանումէ իւր կինը և իւր զաւակները, և գլխատվումէ վաճառականը։

## ՉԻՆԷԱԿԱՆ ԱՌԱԿ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՔԻ ՄԱՍԻՆ․

Չինէացոց Թագաւոր ու իմաստասէր Ֆոհին ճանապարհորդելով շատ տեղեր, գալիս է մի գիւղ, զարկումէ մի հարուստ կնոջ դուռն և խնդրումէ հիւրընկալութիւն։ Այդ կինը ասումէ․ «Ինչպէս կարող եմ ես ներս ընդունել ամեն մի շրջմոլիկ մարդ, այդ անպատշաճ էր մի պարկեշտ կին մարդու․ գնա դու մի այլ տեղ»։ Ֆոհին հեռանումէ և զարկումէ մի աղքատ կնոջ խրճթի դուռն․ այդ կինը իսկոյն քաղցրութեամբ ներս է հրաւիրում ճանապարհորդը, բերումէ հիւրին այն մի հատիկ բանը որ ունէր, այսինքն մի փոքր այծի կաթն, բրդումէ նորա մէջ մի փոքր հաց և ասումէ․ «Թող Ֆոհին օրհնէ այս սեղանը, որ մեք երկուքըս յագենանք դորանով»։ Ապա այն աղքատ կինը պատրաստումէ օտարականին մի հանգստարան յարդից, և երբ որ հիւրի քունը տարել էր, նկատեց կինը որ այդ մարդու վերայ շապիկ չը կայ․ այդ պատճառով նստումէ նա բոլոր գիշերը և իւր դառն վաստակով ձեռք բերած կտաւից պատրաստումէ նորա համար մի շապիկ, որ և առաւօտուն տանումէ հիւրին և խնդրումէ խոնարհաբար, որ չարհամարհէ նա մի աղքատ կնոջ չնչին պարգև։ Ճանապարհորդը նախաճաշիկ արած, կամի հեռա-

նալ. տանտիկինը մի փոքր տեղ ճանապարհ է ձգում նորան, և երբ որ նոքա պիտի հրաժարվէին միմեանցից, փոհին ասում է այս կնոջը. «Թող քո առաջին աշխատութիւնը որ դու այսօր սկսանելու էիր, տևէ մինչև երեկոյ»: Երբ որ կինը յետ է գալիս տուն, կամենում տեսանել թէ ինչքան կտաւ մնումէր դեռ ևս այն շապիկացուի կտրելուց յետոյ: Նա սկսանում չափել, չափում և չափում, բայց կտաւին վերջ չը կայ: Մինչև երեկոյ լցվում տունը և գաւիթը կտաւով. կինը չը գիտէ, թէ ինչպէս պարտակէ իւր այդքան հարստութիւնը: Մի դրացի հարուստ կին տեսանելով այդ բանը, զայրանում աղքատ կնոջ բաղդաւորութեան վերայ, բայց մտածում իւր մէջ, թէ պիտոյ էր զգուշանալ, որ միւսանգամ չը փնասվի իւր անհիւրասիրութենից: Եւ արդարև, մի քանի ամսից յետոյ, այս հարուստ կինը տեսանում այն ճանապարհորդը, որ միւսանգամ մտանում այն գեղի մէջ: Իսկոյն յառաջ է գնում օտարականին և ստիպագին խնդրում նորանից իջևանել իւր տնումը: Հիւրը մեծարվում փառաւոր կերպով և ստանում մի նուրբ շապիկ, որ այն կինը վաղուց պատրաստել էր տուած: Բայց այս կինը բոլոր գիշերը վառ էր թողել իւր սենեկի մէջ մի ճրագ, որ օտարականը կարծիք ստանայ, թէ տանտիկինը ժրաջան աշխատում, շապիկը կարելով: Առաւօտուն, նախաճաշիկից յետոյ, տանտիկինը նոյնպէս ճանապարհ է ձըգում հիւրը, և սա հրաժարվելով գիւղից ասում նորան. «Թող քո առաջին աշխատութիւնը որ սկսանելու էիր այսօր, լինի տևողական մինչև երեկոյ: Կինը գալիս է տուն, միշտ մտածելով իւր դրացու կըտաւի և նորա զարմանալի առաւելութեան վերայ: Այս րոպէին լսում նա իւր կովերի բառանչիւնը և խօսում ինքը իւր հետ. «Յառաջ քան թէ կ'երթայի չափելու կտաւը, թող շուտով ջուր տանեմ անասունին»: Բայց երբ որ կինը ամանից թափում ջուրը տաշտի մէջ, ամանը չէ դատարկվում երբէք, այլ հոսում ու հոսում, և ջրի հեղեղը աւելի ու աւելի սաստկանալով ծածկում տունը և գաւիթը. դրացիք գանգատումեն, բոլորը աւերվում, անասունը խեղդվում, և կինը հազիւ թէ փրկում իւր կեանքը, երբ որ արևամուտին դադարում ամանից ջրի հոսանքը:

## ՄԻ ԽԱՅՏԱՌԱԿՎԱԾ ՔՈՒՐՄ (ԿՌԱՊԱՇՏ ՔԱՀԱՆԱՅ ՀԵԹԱՆՈՍ ԱԶԳԵՐԻ ՄԷՋ)։

(Սանսկրիտեան լեզուից.)

Զախնավլի ծովակի եզերքումը դրած է մի քաղաք Մականդիկա անունով, ուր մի քուրմ ուխտ էր դրել իւր վերայ միշտ լուռ մնալ: Դա

քուրմերի բազմութեան մէջ ապրումէր միայն մուրացկանութեամբ, և բնակումէր մի աբեղայական վանքի մէջ, որ պատկանումէր մի կռքատան։ Այդ քուրմը մի օր որպէս մուրացկան մօտեցաւ մի հարուստ վաճառականի տան· սորա դուստրը, մի նազելի աղջիկ, ինքը դուրս բերեց տուրքը և յանձնեց նորան։ Քուրմը տեսանելով այս հրաշագեղ աղջիկը, սիրով վառված ձայն արձակեց վատթար հոգին այսպէս· Ափսոս, ափսոս։ Այս բանը լսեց վաճառականը։ Քուրմը ստանալով տուրքը, վերադարձաւ տուն· բայց վաճառականը գնաց ծածուկ նորա քամակից և շատ զարմանալով հարց արեց այսպէս· «Այդ ի՞նչ բան է, որ դու այսօր խախտեցիր քո ուխտը և խօսեցիր։ Քուրմը լսելով հարցուածը, պատասխանեց վաճառականին այսպէս· «Պարոն, քո զաւակը ունի մի չար նշան· երբ որ դա միանգամ մարդու գնայ, դու քո բոլոր գերդաստանով կորնչելու ես անյապաղ։ Երբ որ ես տեսայ քո աղջիկը, սիրտս ցաւեցաւ, որովհետև դու երկիւղած մարդ ես։ Այս պատճառով խորհուրդ եմ տալիս քեզ, որ դու, երբ այս օրս գիշեր կը դառնայ, դնես քո աղջիկը մի արկղի մէջ և ձգես Գանգայի գետը· բայց չը մոռանաս մի ճրագ ամրացնել արկղի վերայ»։ Բարի է, ասաց վաճառականը և երկիւղի մէջ վերադարձաւ տուն, և գիշերին ամենայն բան պատրաստեց այնպէս, ինչպէս ասած էր քուրմը· ով որ երկիւղոտ է, նա չէ մտածում երկար։ Այս միջոցին խօսեց քուրմը իւր աշակերտների հետ այսպէս·» Գնացէք դէպ ի Գանգա, և եթէ այն տեղ կը գտնէք մի արկղ որ լող էր տալիս ջրի երեսին, մի ճրագ վառվելով արկղի վերայ, ապա առէ՛ք արկղը և ծածուկ բերեցէք ինձ· բայց չունի՛ք համարձակութիւն բանալու նորան, թէև լսէի՛ք, որ նորա միջից ձայն է գալիս։» Բարի է, ասացին աշակերտքը և իսկոյն հեռացան։ Բայց յառաջ քան թէ քրմի աշակերտքը կը հասանէին Գանգա գետին, ցած էր իջանում նորա հով ջրերի մէջ լուացվելու մի իշխանորդի Գանդհարվայի սահմանից։ Երբ որ սա ճրագի լուսաւորութեամբը նկատեց այն տեղ վաճառականի արկղը, հրամայեց իւր սպասաւորներին շուտով դուրս հանել նորան, որ և բացեց իսկոյն անհամբերութեամբ։ Ո՜վ քաղցր տեսարան· մի մանուկ օրիորդ, մի սիրտ կախարդող աղջիկ· իշխանորդին իսկոյն հարսանիք արեց նորա հետ, ինչպէս Գանդհարվացոց սովորութիւնն էր։ Բայց արկղը թողեց Գանգայի մէջ, ճրագը նորա վերայ, այլև փակեց նորա մէջ մի կատաղի, անզգամ կապիկ (մէյմուն)։ Գտած օրիորդ-գոհարը վեր կալաւ իշխանորդին և վերադարձաւ դէպ ի տուն։ Նոյն ճանապարհով եկան յետոյ և քրմի աշակերտքը։ Մի փոքր յետոյ նկատեցին նոքա արկղը և ըմբռնեցին նորան և բերեցին իւրեանց վարժապետին, որ, ուրախութեամբ լցված սիրտը, խօսեց իւր

աշակերտների հետ. «Ես վեր կ՚առնում իմ հետ այդ արկղը և կամիմ առանձնապէս աղօթել. դուք գնացէք և քնեցէք ամենևին հանգարտ»։ Այսպէս խօսելով վեր առաւ քուրմը յիշեալ արկղը և տարաւ իւր մօտ։ Այրվելով վաճառականի աղջկայ սիրուց, սկսեց բանալ արկղը, և նոյն րոպէին դուրս թռաւ կատաղի կապիկը կեղծաւոր քրմի վերայ, և խածանելով ու ճանկռտելով իսկոյն վայր բերեց նորա քիթ ու ականջը։ Այսպիսի ողբալի դրութեան մէջ գնաց քուրմը իւր աշակերտների մօտ, որ տեսանելով նորան, հազիւ թէ կարողացան պահել իւրեանց ծիծաղը։ Միւս առաւօտուն հրատարակվեցաւ գործը և ամենայն մարդ առ ի սրտէ ծիծաղումէր. բայց վաճառականը ուրախ էր, նորա աղջիկը նմանապէս, որ այդպիսի կերպով դարձաւ մի օրինաւոր մարդու ամուսին։

Ս. Նալբանդեանց.

## ԱՂՔԱՏ ԿԻՆ։

Ցուրտը փչեց. ձմեռ սաստիկ.
Ձիւնը ծածկեց գետինը,
Ամենայն մարդ մտաւ իւր տուն,
Պատսպարվիլ ցրտիցը։
Ժամի դռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին.
Նորա հանդերձը պատառ, պատառ,
Չունի շապիկ իւր հագին.
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզումէ անց կացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»
Ձեզ, սիրելիք, ասե՛մ ով էր
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը, ոտաբոկիկ
Կանգնած, ժամի դռնումը.
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատւով
Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով.
Այժմ, վախով նա իւր ձեռքը
Պարզումէ անց կացողին—

«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»
Մինչ թատրոնում յայտնվումէր,
Մինչ խաղումէր հանդիսում.
Դղրդումէր թէատրոնը,
Նա դափնիք շատ էր հնձում.
Ժողովուրդը հաւաքվումէր
Մօտ թատրոնի պատշգամբին.
Չէր կշտանում նայել նորա
Քնքոյշ չքնաղ երեսին.
Այժմ նորան չեն ճանաչում,
Մոռացել են բնաւին —
«Ողորմութիւն արէք, պարոն
Անտուն, անտէր աղքատին։»
Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին շատ կառքեր.
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուագարան ու տաղեր.
Ամենայն ոք ցանկանումէր
Լինել նորան բարեկամ.
Ամենայն ժամ նորան բաց էր
Շռայլ քսակը մեծատան.
Այժմ զրկված ամեն բանից,
Զունի անգամ հացի գին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»
Ամենայն օր իւր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լուանումէր, մազը սանրում
Կրիայի սանրով.
Նա հագնումէր բեհեղ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանգագին.
Նա չգիտէր ի՞նչ ասել է
Արծաթի կարօտութիւն.
Այժմ անլուայ, մազերն արձակ,
Զունի հագուստ թէև հին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին։»

Նորա շքեղ ննջարանում
Բնակվումէր Աստղիկը·
Նորա որդին փայփայումէր
Նորան ամբողջ գիշերը . . . .
Ախտաբորբոք երիտասարդք
Իւրեանց անձը երջանիկ
Կը հաշուէին, թէ լինէին
Նորա ձեռքում խաղալիկ . . . .
Այժմ փողոցում քնումէ նա
Խոնաւ պատերի տակին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»
Քամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ծուռ·
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան, «խղճուկ,
Եկ դու մեր մօտ, մեք կ՚առնքենք
Քո վիճակի դառնութիւն,
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն:»
Նա տանումէ տառապելով,
Այս սոսկալի վշտերին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»

## ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ·

Հայ մարդ, Հայ ազգ, ասա, արդեօք
Ո՛ր տեղ է քո հայրենիքդ.
Կամ ունիս դու ուր և իցէ,
Ո՛վ են արդեօք ազգակիցքդ:
Հայ մարդ, ասա, ո՞ւր է տունդ,
Հայ մարդ, ո՛ր տեղ քո կենտրոնդ,
Ունիս մի բան քեզ սեպհական·
Ցոյց տուր ինձ դու քո պարծանքդ:
«Ի՞նչ հայրենիք, յիմար զքեզ,
Հարցանումես դու ինձանից·
Ուր եմ ծնած, ա՞յդ ես քննում·

*Այս տեղ եկած եմ Թիֆլիզից։*

*Ես տուն ունիմ և այն քարեայ*
*Երկու յարկով շէնք փառաւոր.*
*Ծառաներիս թիւը չը կայ,*
*Իմ հիւրերը հարիւրաւոր։*

*Աղբարք ունիմ, ունիմ որդիք,*
*Դստերք ու այլ շատ ազգական,*
*Ընտիր ծանօթք, շատ մեծատունք,*
*Ունիմ փեսայ և այն իշխան։*

*Իմ պարծանքը, յիմար գլքեղ.*
*Ցոյց տուր ինձ դու յառաջ քոնը.*
*Ճաշ եմ ուտում, ազնիւ ընթրիք,*
*Որ չէ կերել Լուկուլլոսը։*

*Ես խմումեմ Շամպայն, Մադէռ,*
*Ուտցնումես դու փորդ ջրով.*
*Ունիմ քանի տեսակ կառքեր,*
*Բայց դու ման ես գալիս ոտքով։*

*Ոսկի, արծաթ, գոհարեղէն,*
*Իմ պարծանքը, իմ գանձերը.*
*Թէ դոցանով չես բաւական,*
*Տե՛ս իմ երկու պատուի նշանքը։*

*Դու ի՞նչ կենտրոն ես հարցանում,*
*Իմ կենտրոնը է իմ փորը.*
*Ոսկի, արծաթ, հարստութիւն,*
*Ահա կեանքիս լոկ խորհուրդը։*

*Ի՞նչ էք ուսել, յիմար գլքեղ,*
*Թէ հայրենիք պիտի սիրել.*
*Բայց թէ ի՞նչպէս հարկաւոր էր,*
*Ամենևին չկամիք լսել։*

*Ես սիրումեմ հայրենիքը,*
*Նորան միշտ ու միշտ գովումեմ.*
*Օտար ազգի առաջևը*
*Պակասութիւնքը ծածկումեմ։*

*Թէ մի աղքատ կը գայ իմ մօտ,*
*Նորան կը տամ ողորմութիւն.*
*Բայց թէ ո՞րքան, կամ ի՞նչ չափով,*
*Այդ քո գործ չէ, ներողութիւն։*

Ամենայն օր դուք մեր ազգը
Բամբասումէք անխղճմտանք,
Ազգի գլխից ձերպէսներով
Եկաւ անցաւ այնքան փորձանք . . .
Ողորմելի, դու կարծումես,
Թէ հայրենիքդ սիրելով
Բան կը շինես· սխալվումես,
Այդպէս յիմար մտածելով:
Քո ուսումը չէ կշտացնում
Իմ, կամ իմպէսների փորը·
Մեզ պիտոյ է հարստութիւն,
Որ պարարենք մեր մարմինը:
Հոգու համար ուսում պէտք չէ,
Ո՛ր սուրբերը ուսեալ էին.
Կրօնի ծէսերը պահելով,
Անշուշտ կ'երթամ արքայութիւն:»
Ուրախացիր, դու Հայաստան,
Լսելով քո որդու խօսքը·
Փառք ու պատիւ քեզ կը բերեն
Քո մարմնապաշտ մեծատունքը:

Կոմս Էմմանուէլ:

## ԱՇԽԱՐՀԻ ԿԱԶՄԱԾԸ ԵՒ ՆՈՐԱ ՀՐԱՇՔՆԵՐԸ·

## ԵՐԿԻՆՔԸ ԵՒ ՆՈՐԱ ԱՇԽԱՐՀՆԵՐԸ:

Մի զարմանալի տեսարան է, երբ որ մարդս արձակ դաշտի մէջ նկատումէ երկինքը և երկիրը: Մի շրջանակաձև, բոլորակ տափարակի պէս պարզվումէ երկիրը մեր ոտքի մօտ, մինչ երկինքը մեր գլխի վերայ ձևաւորվումէ մի իբրև գոգաւոր կիսագունդ որ կամարակապ դրած էր երկրի վերայ: Եւ ահա երևումէ մեզ, որպէս թէ կանգնած էինք այն տափարակի միջնավայրումը (մէջ տեղումը), և որպէս թէ այն կիսագունդի ամենաբարձր կէտը դրած էր ուղղակի մեր գագաթի վերայ: Շատ հեռի չէր երևում մեր կայքի (կանգնելու) տեղից մինչև այն տեղը ուր երկնքի եզերքը շօշափումէին երկիրը· մի քանի ժամի մէջ պիտոյ էր կարծել թէ կը հասանէիր այն տեղ: Բայց այդպէս չէ բանը· պատճառ, եթէ հասած էիր դու այն տեղ, ապա կը տեսանէիր երկինքը նոյն կերպով և իւր երևութաբար ամենաբարձր տեղովը դրած քեզանից վեր, և երկիրը քե-

ղանից ցած. քո երկրորդ նկատողութեան տեղը կը ցուցանէ քեզ նոյն շրջահայեցութիւնը, ինչպէս առաջինը։ Քո տեսութիւնը խաբումէ քեզ, և արդարև մոլորութիւն էր դա. պատճառ, չը կայ ոչինչ ամուր երկնածածկոց քեզանից վեր, և ոչինչ տափարակաձև երկիր քեզանից ցած։ Դո՛ւրս գնա դու մի աստեղափայլ գիշերով, և ո՛րպիսի զարմանահրաշ տեսարան հանդիպելու է քո աչքին։ Տե՛ս այն լուսապայծառ կէտերը, նոցա շողշողիւնը, վե՛ր ցոլանալը և դորանից յետոյ նայի՛ր դէպ ի փոքրիկ կէտերը մինչև այն սպիտակային, լայն, աստեղանշոյլ ժապաւէնը, որ է Կաթնեղէն ճանապարհը (Ցարդգողը, դարմանի գողը) որ մի հսկայաձև գօտու պէս պարզվումէ երկնքի վերայով։ Հապա, տե՛ս դու աստղեները երկնակամարի վերայ. կարո՞ղ ես դու համարել նորանց։ Թէև դու ցանկանումէիր դորան, թէև դու կարծումէիր մեծ, աշխարհաստեղծ արարչի գործերը հասկանալ, բայց արի՛, նայիր դու այն հեռացոյց փողովակների մինուլը, որ մեծ սրամտութեամբ հնարել է մարդկային հանճարը և գիտութիւնը. ուղղի՛ր աչքդ դէպ ի դուրս, այն անեզրական տարածութեան մէջ, և միլիոնաւոր նոր նոր մարմիններ կը հանդիպեն քեզ, հիացք բերելով քո խելքի վերայ. բայց տիեզերքի սահմանները և աշխարհային մարմինների թիւը կարող չես դու քննել ու իմանալ։ Պատճառ, այն բոլոր լուսաւէտ կէտերը մեծ մեծ մարմիններ են, աւելի մեծ քան թէ մեր երկիրը, հաւասարվումեն արեգակի հետ։ Ազատ ու արձակ կախված են նոքա ամենեքեան տիեզերքի տարածութեան մէջ, պահպանվելով այն էակի ձեռքով, որ այս որդնիկին ցածումը երկրի վերայ տուել է կենդանութիւն, որ և մարգագետինքը և դաշտերը կանաչապատ զարդարումէ, որով բոլորը կենդանի է, շարժվումէ և կայ։ Բայց դու դարձեալ վե՛ր ուղղիր հայեացքդ և տես. Աստղների մեծ մասը, որ նկատումէ քո աչքը, են Անշարժ աստեղք, որ, ինչքան մեր տեսութիւնը կարող էր նկատել, երբէք չեն փոխում իւրեանց դրութիւնը, եթէ համեմատէինք նոցա կացութիւնը փոխադարձաբար։ Եթէ հեռացոյցներով ևս նայէինք նոցա վերայ, չեն երևում նոքա աւելի մեծ. և սորանից բացայայտվումէ, որ նոքա լինելով անսովոր մեծ, պիտոյ է անչափ հեռակայ լինէին մեզանից։ Արդարև, միտ դնելով աստղների շատ կամ փոքր պայծառութեանը, սովորաբար բաժանումեն նորանց առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ կարգի աստղներ, ըստ որում դոքա յաջող դիպուածների մէջ նկատելի էին պարզ աչքով, բայց աստեղաբաշխը խօսումէ քսաներորդ և աւելի ստորակարգ աստղների վերայ, որ կարող էր նա ամենամեծ հեռացոյց փողովակներով ճանաչել որպէս փոքրիկ մառախլային կէտեր։ Թէև այս աստեղքը առ հասարակ շատ նման էին միմեանց, բայց, երկնային մար-

մինների գիտութիւնը աւելի ճիշդ կացուցանելու համար, այդ աստղները կարգաւորած են դաս դաս, որ և ասվում են համաստեղութիւնք կամ կենդանակերպք, ըստ որում մի կամայական պատկեր որպէս հիմք տուած են նոցա, և այս պատկերի վերայ ձևացնում են նորանց։ Այս կենդանակերպերից շատերը յայտնի են շատ անգամ և հասարակ մարդերին, մանաւանդ թէ Մեծ արջի կենդանակերպը որ սովորական կեցութեան մէջ ասվումէ և Երկնքի կշիռ։ Նորա մէջ, բաց ի փոքրիկ շատերից, դրած կան մանաւանդ թէ եօթն աւելի խոշոր աստղներ, որ ձևանում են այսպէս



Այս կենդանակերպների մէջ կան յատկապէս 12 հատ, որ, թէպէտև չէին միշտ ամենագեղեցիկքը և առաւելապէս աչքի տակ ընկնողքը, այնու ամենայնիւ արժանի են մեր առանձին ուշադրութեանը, ըստ որում տարու ընթացքումը արեգակը երևումէր թէ հետ զհետէ մտանումէր նոցա մէջ։ Եթէ բաժանենք նորանց, միտ դնելով տարու եղանակներին, ապա հետևում են նոքա միմեանց, այս կարգով.

*Գարնան ժամանակին.*

| | | |
|---|---|---|
| ԽՈՅ. | ՑՈՒԼ. | ԵՐԿՈՒՈՐԵԱԿՔ. |
| 21 ՄԱՐՏԻ. | 20 ԱՊՐԻԼԻ. | 22 ՄԱՅԻՍԻ. |

*Ամառնային ժամանակին.*

| | | |
|---|---|---|
| ԽԵՑԳԵՏԻՆ. | ԱՌԻՒԾ. | ԿՈՅՍ. |
| 22 ՅՈՒՆԻՍԻ. | 23 ՅՈՒԼԻՍԻ. | 23 ՕԳՈՍՏՈՍԻ. |

*Աշնան միջոցին.*

| | | |
|---|---|---|
| ԿՇԻՌ. | ԿԱՐԻՃ. | ԱՂԵՂՆԱՒՈՐ. |
| 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ. | 23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ. | 22 ՆՈՅԵՄԲԵՐԻ. |

*Ձմեռան միջոցին.*

| | | |
|---|---|---|
| ԱՅԾԵՂՋԻՒՐ. | ՋՐՀՈՍ. | ՁԿՈՒՆՔ. |
| 22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ. | 20 ՅՈՒՆՎԱՐԻ. | 18 ՓԵՏՐՎԱՐԻ. |

Այս բոլոր 12 համաստեղութիւնքը կերպաւորում են Զոդիակոսի կենդանաշրջանը։ Ամեն մի կենդանակերպի տակ նշանակած օրումը, ա-

րեգակը մտանումէ նորա մէջ։ Արդարև, այս բանը երևոյթ էր միայն. պատճառ, արեգակը դադարուն կանգնած է, բայց մեք մեր երկրի հետ միասին շարժվումենք արեգակի չորս կողմով, այնպէս որ նա ամենայն օր մի այլ յետնակողմն ունի, ինչպէս որ մեզանից մի ոչ շատ հեռաւոր տեղի աշտարակ փոփոխումէ իւր յետնակողմը, երբ որ մեք տեղից փոխվումենք դէպ ի միւս տեղ։ Նոյնպէս երևութաբար շարժվումէ բոլոր երկինքը, այնպէս որ Մեծ արջի կենդանակերպը վեց ժամից յետոյ պիտոյ է մի ամենևին այլ տեղում որոնվի, քան թէ յառաջ, և այս երևութական շարժողութիւնը արևելքից դէպ ի արևմուտք լինելով, որ պատճառվումէր մեր երկրի շրջանապտոյտից իւր չորս կողմովը յառկապէս, անդադար ելանումեն աստղները արևելքումը և մտանումեն արևմուտքումը։

Այս բոլոր տեսարանքը դարձուցանումեն մեր ուշադրութիւնը մեր արեգակի վերայ, նորա չորս կողմով պտոյտվող մոլորակների, լուսինների, կոմետների (պոչաւոր աստղների) հետ միասին, կամ թէ արեգակի համակարգութեան վերայ, որով հասկանումենք այն Զուգակարգութիւնը որ պարունակումէ իւր մէջ Արեգակը և նորա չորս կողմով պտոյտվող տիեզերական մարմինքը։

Մեր արեգակը է մի անշարժ աստղ, ինչպէս միւս աստղների մեծ մասը երկնքի վերայ. տարին աւարտած ու տարին սկսած, նա անփոփոխ պահպանումէ մի և նոյն դրութիւնը դէպ ի աստեղքը երկնքի վերայ, ոչ մինիյը հեռանալով և ոչ մինին մօտենալով։ Ինչպէս որ Մեծ արջի աստղները միշտ մի և նոյն կարգի մէջ են, երբէք մօտաւորվում չեն միմեանց կամ թէ իւրեանց դրութիւնը չեն փոփոխում, նոյնպէս ևս մեր արեգակը երբէք չէ փոխում մեր դրութիւնը դէպ ի ինքը։ Ամենևին այլ է մոլորակների կամ թէ թափառական աստղների որպիսութիւնը. սոքա չեն պահպանում մի և նոյն ուղղութիւնը դէպ ի իրար, կամ թէ դէպ ի արեգակը։ Պատճառ, եթէ զոր օրինակ Իւպիտեր մոլորակը այսօր գտանվումէ երկու աստղների մէջ, ապա գալոց տարումը վաղուց արդէն հասած էր դոցանից մինին, այլև անցած էր նորա մօտից և թողած երկուսը ևս իւր յետևումը։ Այնպէս է, որպէս թէ այս աստղները երկնքի վերայ զբօսնումէին և քաղցրութեամբ ողջոյն էին մատուցանում ամենայն մարդու, և ամենևին անհոգ էին ժամի ու ժամանակի մասին։ Բայց դոքա ամենեքեան կատարումեն իւրեանց ընթացքը անփոփոխելի կարգով, և մեք մարդիկս վաղուց արդէն նոցա ընթացքը շատ տարիներ յառաջ հաշուել ենք, և մեր հաշիւը այնպէս ուղիղ է, որ չը կայ նորա մէջ և ոչ ամենափոքր սխալանք։

Այս առաւել պիտոյ է ուշադիր լինել այդ մոլորակների այսպիսի

յատկութեններին. Նախ և յառաջ, Մոլորակները բոլոր աստղներից առաւել մօտակայ են մեր երկրին, աւելի մերձաւոր քան թէ որևիցէ անշարժ աստղ. երկրորդ, նոքա շարժվումեն և մեր երկիրը նոցա հետ, որովհետև նա ևս մոլորակ է, կատարելով մեծ մեծ շրջանակներ արեգակի չորս կողմով. բայց այս շրջանակները մեծ ու փոքր են, նայելով այս կամ այն մոլորակին։ Երրորդ, մոլորակները ի բնէ մութն աշխարհային մարմինք են և ստանումեն իւրեանց լոյսը, ինչպէս մեր երկիրը, արեգակից։ Ինչ որ մեք գիշերով նոցա վերայ տեսանումենք որպէս շողշողուն, այդ է արեգակի փայլողութիւնը որ իբրև մի հայելուց բացարձակվումէ մեր վերայ, այնպէս որ և շատ խաւար գիշերի մէջ չենք մեք ամենևին զուրկ այս ուրախացուցիչ լուսից։ Ամեն մոլորակ է մի մեծ գունդ, որ անդուլ և անդադար շարժվումէ իւր և արեգակի չորս կողմով։ Նորա այն կողմը միայն, որ արդէն դարձած էր դէպ ի արեգակը, ունի լոյս, բայց միւսը խաւար է։ Նոցա մէջ կայ Օ ր ի և Գ ի շ ե ր ի փոփոխութիւն։ Չորրորդ, մի մոլորակ չէ միշտ հաւասարապէս հեռի արեգակիցը, այլև ոչ միշտ ունի նոյն ուղղութիւնը դէպ ի արեգակը. այս պատճառով մոլորակքը, որպէս և մեր երկիրը, ունի զանազան եղանակներ տարու, իւրեանց ջոկ ամառն ու ձմեռն։

Այն մոլորակը, որ յայտնվել է մեզ որպէս առաւել մերձաւորը արեգակին, է Մերկուրիոսը։ Սա թէպէտ 8 միլիոն մղոն հեռի է արեգակից, բայց այնու ամենայնիւ այնքան մօտ է որ կարելի էր նորան, թէև ոչ յաճախ, տեսանել պարզ աչքով։ Նա առաւօտուն, արևաբացից մի փոքր յառաջ կամ յետոյ ծագումէ, և երեկոյին մտանումէ։ Նորա շըրջանառութեան միջոցը արեգակի չորս կողմով, է մի տարի որ տևումէ 88 օր։ Երկրի քանակութենից կարելի է պատրաստել 16 հատ գունդեր, ինչպէս Մերկուրիոսն է։ Սորանից յետոյ գալիս է Վենուսը որ յայտնի է անունով Առաւօտեան և Երեկոյեան աստղ. սա 14 միլիոն մղոն հեռի է արեգակից և կատարումէ իւր ընթացքը 224 օրի մէջ։ Սորա հետևից յաջորդումէ մեր Երկիրը, համարեա թէ 21 միլիոն մղոն հեռաւորութեամբ արեգակից, կատարելով իւր ընթացքը 365 օրի և համարեա թէ 6 ժամի մէջ։ Նորա տարեկան ճանապարհորդութիւնը արեգակի չորս կողմով բաղկացնումէ 131 միլիոն մղոն։ Մարսը 32 միլիոն մղոն հեռի է արեգակից և կատարումէ իւր ընթացքը մի տարու և 322 օրի մէջ։ Նա աւելի փոքր է քան թէ երկիրը, և սորանից կարելի էր յօրինել 5 հատ գունդեր ինչպէս Մարսը։

Մարսի և Իւպիտերի մէջ, որի մասին ներքևումը խօսք կը լինի, պիտոյ է լինէր մի աստղ. բայց աստեղագէտքը, թէև շատ աշխատումէին, բայց չէին կարողանում գտանել նորան, մինչև 1801 թուականի

յունվարի 1 ին, ուրեմն այն օրին երբ սկսվեցաւ նոր դարը, յայտնագործվեցաւ մի փոքրիկ աստղ վերոյիշեալ երկու աստղների մէջ տեղումը։ Շատ չանցաւ սորանից յետոյ, և յայտնագործեցին մի երկրորդ և երրորդ, ապա և 1807 թուակ. հինգերորդ աստղը մի և նոյն տարածութեան մէջ։ Այնուհետև տևեց մի երկար դադար, մինչև սկսեալ 1845 թուականից յայտնագործեցին այլ ևս 11 միւս մոլորակներ, և ո՛ գիտէ թէ քանի՛ այդպիսի մարմիններ նոյն տարածութեան մէջ կախուած գտանելու են դեռ ևս, անդուլ և անդադար որոնող մարդիկը։ Այս մոլորակների անունները, որոնցից մինը յատկացած չէ դեռ ևս, են Փլօրա, Վեստա, Իրիս, Մետիս. Հեբէ, Պարթենոպէ, Իրենէ, Եգերիա, Աստրէա, Իւնօ, Գերիս, Պալլաս, Հիւգիէա, Վիկտորիա։ Ամենքեան սոքա հեռի են արեգակից 45—57 միլիոն մղոն և աւելի փոքր են քան թէ մեր երկիրը։ Նոցանից յետոյ, 108 միլիոն մղոն հեռաւորութեամբ, յաջորդում է վերոյիշեալ Իւպիտերը որ ամենամեծ և ամենափառաւոր մոլորակն է մեր արեգակի համակարգութեան մէջ։ Նորա ճանապարհորդութիւնը արեգակի չորս կողմով տևում է 12 տարի. 1414 երկրագունդեր կարելի էր ձևացնել նորա նիւթից։ 197 միլիոն մղոն հեռի արեգակից կանգնած է հսկայամարմին Սատուռնոսի գունդը, որ արարիչը շրջապատել է երկու օղերով կամ բակերով, որոնց մէջ ազատապէս շարժվում է։ 735 երկրագունդեր կարելի է շինել Սատուռնոսից. և իւր ընթացքի համար արեգակի չորս կողմով կարօտ է նա $29^1/_2$ տարու։ Երկար ժամանակ կարծումէին մարդիկ, թէ այս մոլորակը բովանդակում է իւր մէջ արեգակի համաստեղութիւնը. բայց երկնքի Տէրը խօսեց. մի՞ թէ մտածումես դու թէ ճանաչել էիր ինձ։ Տե՛ս. կայ այս տեղ և մի այլ աստղ։ Եւ ահա մեծանուն գերմանացի Հերշելը 1781 թուականին յայտնագործեց Ուրանոսը, 400 միլիոն մղոն հեռաւորութեամբ արեգակից, որ 82 անգամ աւելի մեծ է քան թէ երկիրը։ Իւր շրջանառութեան համար արեգակի չորս կողմով կարօտ է նա 83 տարու։ Վերջապէս 1847 թուականին, երբ որ արդէն կայքի մասին տեղեկութիւն էր տուած Լըվերրիէ ֆրանսիացին, Գալլէ աստղաբաշխը Բերլինի մէջ յայտնագործեց մի այլ մոլորակ Նեպտուն անունով, որ 746 միլիոն մղոն հեռի է արեգակից և իւր ընթացքի համար նորա չորս կողմովը գործ է ածում 217 տարի։ Թէ նա վերջին երկնային մարմինն էր մեր արեգակի համակարգութեան մէջ, այս բանը ընդունելու պատճառ չունինք, մանաւանդ թէ արած փորձերից յետոյ։ Կարելի, է որ դեռ ևս մի քանի մոլորակների գունդեր անչափելի տարածութենների մէջ կատարումեն իւրեանց անյայտ ընթացքը մայր մարմնի, արեգակի չորս կողմով և նորանից, ինչպէս մեք կարող ենք մտածել, ստանումեն անչափ շատ փոքր մասն լոյս և ջերմութիւն։

Թէպէտև Մոլորակները, նայելով նոցա մեծութեանը, յատկութեանը և շարժողութեանը, շատ և շատ զարմանալի են, բայց մի մարմին գերազանց է նոցա ամեններից և սա է

## ԱՐԵԳԱԿԸ·

Թէպէտև սա երևումէր մեզ բաւական մօտ, երբ որ մտանումէր սարերի քամակումը որպէս մի մեծ հրեղէն գունդ, այնու ամենայնիւ համարեա թէ 21 միլիոն մղոն հեռի է մեզանից, և թէ ինչքան ահագին էր այդ տարածութիւնը, կարելի է հասկանալ, եթէ մտածենք, թէ մի թնդանօթի գնդակ որ մի սեկունդի մէջ անցանումէ 600 ոտնաչափ, կարօտ էր 25 տարի ժամանակի, մինչև արեգակից հասանէր երկրին։ Բայց ինչ է այս հեռաւորութիւնը, համեմատելով Ուրանոսի կամ Սատուռնոսի, կամ թէ այլ անշարժ աստղների հեռաւորութեան հետ, ըստ որում աստեղաբաշխքը հաստատումեն, թէ առաւել մօտաւոր անշարժ աստղը 4 բիլիոն մղոն հեռի է մեր արեգակից։ Նոյնպէս արժանահրաշ է արեգակի մեծութիւնը· եթէ մեր երկրի տրամագիծը ունի 1719 մղոն, արեգակի տրամագիծը 112 անգամ աւելի մեծ է կամ թէ 192492։ Եթէ, կամենումէ մի մարդ պատկերացնել մտքով այս ահագին գունդը, ապա թող մտառու լինի այս բանիս· լուսինը 50000 մղոն հեռի է մեր երկրից· եթէ արեգակը լինէր այնպէս դատարկ, ինչպէս մի ապակեղէն գունդ, և երկիրը գտանուէր նորա միջնավայրումը, այնուհետև լուսինը ոչ թէ միայն հաւասար հեռաւորութեամբ պիտոյ է կատարէր իւր ընթացքը նորա չորս կողմով, այլև պիտոյ է լուանից դուրս մինչև արեգակի եզերքը մնար մի տարածութիւն 46000 մղոնի։ Ցիրաւի, եթէ կարելի լինէր արեգակի նիւթից ձևացնել երկրագունդեր, ապա դուրս կը գային նորանից 1400000 հատ, ամեն մինը այնքան մեծ, ինչպէս մեր երկիրը։ Եւ այս հսկայամարմին գունդը նոյն ձեռքի ստեղծուած է որ մեկոնի (խաշխաշի) սերմի հատիկը իւր կեղևի մէջ կերպարանագործելով հասուցանումէ· թէ մինը և թէ միւսը մնումէ անքննելի։ Երկար ժամանակ կարծումէին շատ ուսեալ աստեղագէտք թէ արեգակը մի այլ բան չէ, եթէ ոչ մի վառուն հրեղէն գունդ· բայց յետոյ իմացան, որ այս կրակի լոյսը և ջերմութիւնը պիտոյ է վերջապէս նուազէր· և այսպէս մեր օրերումը համարումեն արեգակը մի մութ մարմին, որ շրջապատած էր մի շողեղէն շրջանակից, որ արեգակի պտոյտվելուց սկսումէ թռթռալ, և այս բանը զգալի է լինում որպէս լոյս և ջերմութիւն։ Ի հարկէ այս տեղ մի քանի բան դեռ ևս մնումէ մեզ անվճռելի· մեծ և սքանչելի է Աստուած իւր գործերի մէջ, և քանիքը նոցանից միշտ մնալու են մեր համար անքննելի։

Թող յիշատակենք այս տեղ մի փառաւոր տեսարան, որին մեր ընթերցողներից շատերը ականատես եղած կը լինին, այսինքն

## ԱՐԵԳԱԿԻ ԽԱՒԱՐՈՒՄԸ.

Երբ որ լուսինը կատարում է իւր ընթացքը երկրի չորս կողմով, պատահում երբեմն, որ լուսինը գալիս է կանգնում երկրի և արեգակի մէջ, այնպէս որ նա ոչ թէ միայն երկրի մի մասը զրկում է արեգակի լուսից, այլև ծածկում է նորանից արեգակի տեսութիւնը։ Մի այդպիսի տեսարան, որի միջոցին կարելի է պարզապէս նկատել, թէ արեգակի մարմինը հետ ըհետէ ծածկվում էր լուսնագնդովը, յատկացնում ենք վերոյասացեալ անունով Խաւարում։ Եթէ արեգակի բոլոր մակերևոյթը ծածկվում է լուսնովը, ապա ասում ենք դորան ամենևին խաւարում։ Սա պատահում է շատ սակաւ. սորա հակառակ աւելի յաճախ պատահում են մասնաւոր խաւարմունքը, երբ որ երբեմն մեծ, երբեմն փոքրիկ մասը արեգակի անտեսանելի է լինում երկրաւոր աչքին։ Արեգակի խաւարմունքը 8ին Յուլիսի 1842 թուականի և 28 Յուլիսի 1851 էին ամենևին, առաջինը հարաւային Գերմանիայի և երկրորդը հիւսիսային Գերմանիայի համար։ Առաջին միջոցին, երկնքի վերայ, մարդկային, շնչաւոր և բուսական աշխարհի մէջ նկատած արժանայիշատակ տեսարանքը, մանաւանդ թէ լուսեղէն պսակը արեգակի չորս կողմով և մինչև այժմ անքննելի վարդակարմիր ուռոյցքը լուսնի եզերքի վերայ, անսովոր և առանձին բաներ են։ Այն աշխարհների մէջ, ուր խաւարումը ամենևին էր, պատահեցաւ մի արշալոյս, որի մէջ ցերեկով կարելի էր ճանաչել մի քանի մանաւանդ լուսափայլ աստղներ. և այս բանը տևեց 10 մինուտ արևի կրկին երևելուց յետոյ. Այս միջոցին նոյն իսկ երկինքը այն սահմաններումը, ուր խաւարումը չէր ամենևին, ստացաւ մի գունաթափ կապոյտ տեսութիւն, մարդերի կերպարանքը դիակնատեսիլ կամ սպիտակ կանաչային գոյն. դաշտերումը երևեցաւ ցօղ, կարելի էր նկատել մի զգալի հովութիւն օդի մէջ, թռչունքը թռչում էին դէպ ի իւրեանց բոյները, մինչ քանի մի տեսակ բոյսեր փակվում էին, որպէս սովոր է պատահել երեկոյին։ Այն սահմաններումը, ուր խաւարումը բոլորովին էր, ամենից առաւել արեգակի չորս կողմը պատած ճառագայթեղէն պսակը գրաւեց ամենների ուշադրութիւնը, և արեգակի առաջին շառաւիղը կրկին անգամ դուրս փայլատակելով, բարձրացան իսկոյն ուրախական ողջունի աղաղակներ։ Մի ալիքանման դողդողուն, սպիտակային կախարդական լոյս, արագապէս թռչելով նկատողի աչքի տակից, տարածվեցաւ անյապաղ երկրի մակերևութի վերայ։ Այս ամե-

*նմին խաւարումը արեգակի այս դարու մէջ դեռ ևս փոքր է հանդիպելու Եւրոպայի մէջ։*

*Յերեկի մեծ լուսաւորի, արեգակի նկատելուց անցանենք դէպ ի գիշերային լուսաւորը, այսինքն*

## ԼՈՒՍԻՆԸ·

*Ո՛վ մինչև այժմ հիացած չէր այն լուսի վերայ, որ գիշերային դաշտերի վերայ տարածված էր, երբ որ լուսինը որպէս մի կատարեալ բոլորակ երկնակամարի վերայ փայլելով յառաջ էր գնում։ Այն տեղ երևումէ նա համարեան թէ այնպէս մեծ, որպէս արեգակը· բայց դա երեւոյթ է միայն։ Լուսինը աւելի քան թէ 400 անգամ մօտ է մեզ քան թէ արեգակը, և ունի մի տրամագիծ 468 մղոն երկայնութեամբ, ուրեմն աւելի քան թէ 400 անգամ փոքր է քան թէ արեգակի տրամագիծը։ Այնու ամենայնիւ, նորա տեսութիւնը շատ արժանի է ուշադրութեան, ըստ որում նա առաւել մօտաւոր աստղն է մեր երկրի և առանձին յարակցութիւն ունի նորա հետ։ Նա երկրի հանապազորդ ուղեկիցն է նորա ճանապարհի վերայ արեգակի չորս կողմով և 13 անգամ կատարումէ իւր շարժողութիւնը տարու միջոցին։ Բայց որովհետև նա, ինչպէս մեր երկիրը, մի մութ մարմին է, որ իւր լոյսը ստանումէ նոյնպէս արեգակից, և սա ի հարկէ լուսաւորումէ միայն այն կողմը որ դարձուցած է դէպ ի նա, որ և ոչ միշտ միատեսակ դարձուցած է և դէպ ի մեր երկիրը, այս պատճառով ամենեւին բնական է, որ նա զանազան կերպարանքով, երբեմն բոլորովին, երբեմն կիսով չափ և երբեմն մանգաղի պէս լուսաւորված երևումէ, բայց երբեմն և անյայտանումէ ամենևին։ Այս կերպարանափոխութիւնքը որ եօթն եօթն օրամէջ միմեանց հետևից լինումեն, ասումենք նորալուսին, առաջին քառորդ, լրութիւն լուսնի, վերջին քառորդ։ Աւելի արժանի յիշատակութեան է լուսնի և նորա յատկութենների քննութիւնը։ Արդէն պարզ աչքով նկատումենք մեք մութ ու լուսաւոր բիծեր շատ, լուսնի մակերևութի վերայ· եթէ առնունք մի լաւ հեռացոյց ապակի և նորանով նայենք լուսնի վերայ, այնուհետև կը տեսանենք, որ այդ բիծերը բարձրութիւնք ու խորութիւնք են լուսնի մակերևութի վերայ, որոնց տեսութիւնը շատ փառաւոր է այն միջոցին, երբ որ լուսինը աճումէր կամ թէ նուազումէր։ Բայց եթէ քննէինք լուսինը այն մեծ հեռացոյց ապակիների միջով, որ գիտութիւնը և ճարտարութիւնը կարող են այժմ տալ մեզ ամենակատար կերպով, որ և լուսնի մէջ եղած մի առարկայ գուցէ թէ 500 պատիկ մեծացրած և այդքան ևս աւելի մօտեցրած ցուցանումեն մեզ, ապա երևելի էր մեզ մի անչափ փառահեղ, զարմանահրաշ տեսարան։*

Այնուհետև, ասես թէ մի աշխարհացոյց տախտակ, մի գաչից շինած գաղափար դրած էր քո աչքի առաջև։ Ահագին սարեր բարձրանում են նորա տափարակից, երբեմն առանձին առանձին, կղզիների պէս, երբեմն շղթայակապ, և երբեմն որպէս օղաւոր սարեր։ Նոցա բարձրութիւնը նշանաւոր է. աստեղագէտքը հաշուած են աւելի քան թէ եօթանասուն սարեր և 30 հատ այնպիսիք, որոնց բարձրութիւնը հասանում է 1/2—1 մղոնի. 13 հատ, մի մղոնից աւելի։ Մտառութեան արժանի և փառաւոր են այն սևագոյն, սրածայր ստուերքը որ նոքա ձգում են, նայելով արեգակի կացութեանը, լուսնի մակերևութի վերայ։ Միւսները տարածվում են որպէս ահագին սարադօտիք լուսնի մի բաւական մեծ տարածութեան վերայ. տեսանելի են մարմինները և նոցա կերպարանքը. այնպէս էր, որպէս թէ կարելի է ձեռքով շօշափել նորանց։ Բայց ևս առաւել արժանի են մտառութեան և լուսնի առանձին յատկութեններին պատկանում են օղաւոր սարերը։ Որպէս թէ մի ահագին պարսպով շրջափակվում է երբեմն մեծ և երբեմն փոքրիկ տափարակ, որ շատ անգամ աւելի ցած դիրք ունի քան թէ օղի շրջապատը։ Հազիւ չէր պատահում, որ այս օղերի մէջ բարձրանային և ապառաժի սրածայրեր 6—8000 ոտնաչափ բարձրութեամբ. այս ձևակերպութեններից բացայայտվում է, որ այս տեղ պիտոյ է ահարկու հրաբուղխ սարեր կատաղած լինէին և մի մասով դեռ ևս ներգործում էին։ Միւս կողմերը աւելի հաւասար են. այտ գտանվում են ևս շատ և նշանաւոր խորքեր, որ ըստ մեծի մասին երևում են աւելի մռայլ լուսով լուսաւորված։ Մի բանի հետք միայն չը կայ լուսնի մէջ, այսինքն ջրի հետք. այլև հաստատում են, թէ չը կայ այն տեղ մերի նման ատմօսֆերա. բայց այս մասին բաժան բաժան են մեծամեծ աստեղաբաշխների կարծիքը։ Խօսենք այժմ ամենևին համառօտ լ ո ւ ս ն ի խ ա ւ ա ր մ ա ն վերայ, որ յառաջանում է նմանապիսի պատճառներից, որոնց վերայ հիմնած է արեգակի խաւարումը։ Լուսնի խաւարումը կարող է միայն յառաջանալ, երբ որ երկիրը գալիս է ուղղակի կանգնում է լուսնի և արեգակի մէջ և այն լուսի ճառագայթները որ պիտոյ է հասանէին լուսնին, ընդունվում են երկրից, որ այնուհետև իւր ստուերը ձգում է լուսնի վերայ և խաւարեցնում է նորան։

Ոչ թէ միայն մեր երկիրը իւր ընթացքի միջոցին արեգակի չորս կողմով, ունի իւր հետ քաղցր ուղեկից լուսինը, այլև մեծամեծ մոլորակները այդպիսի ուղեկիցներ շատ ունին. զոր օրինակ Իւպիտերը չորս հատ, Սատուռնոսը եօթն հատ և Ուրանոսը վեց հատ։ Ի՞նչպէս փառահեղ պիտոյ է լինէին կարճատև երեք մինչև հինգ ժամաչափ գիշերները այն մոլորակների վերայ, երբ որ մի և նոյն միջոցին երկու կամ աւելի շատ լուսիններ փայլելով կանգնած էին երկնակամարի վերայ։ Մի

երեւութական նմանապիսի բան ունինք մեք երկրի վերայ, այսինքն այն, մտառութեան արժանի բնական իրողութիւնքը որոնց տալիս ենք անունս Երկրորդական արեգակ, կամ Երկրորդական լուսին։

## ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԻՆ·

Այս տեսարանի միջոցին, որի պատճառը է մի առանձին կերպաւորութիւն շողիների և դրութիւն ամպերի, տեսանումենք մեք, որպէս մի հայելու մէջ, ճշմարիտ արեգակի մօտ մի այլ կամ թէ միւս այլ ցոլացմունք երբեմն արեգակի վերայ և երբեմն ներքոյ, և երբեմն մի շրջան ձեւաւորելով։ Բոլոր երկրորդական արեգակները և լուսինքը երեւումեն բակերով զարդարված, որ գեղեցկութեամբ և գունափայլութեամբ շատ փոքր պակաս էին ծիածանից։ Ափսոս, որ այս փառաւոր երեւոյթները ըստ մեծի մասին կարճատեւ են և չքանումեն մի քանի րոպէից յետոյ, այնպէս որ շատ մարդիկ կային, որ երբէք տեսած չէին մի այդպիսի հոյակապ տեսարան։

Արեգակներից, երկիրներից կամ մոլորակներից և լուսիններից յետոյ մնումէ մեզ քննել մի այլ տեսակ տիեզերական մարմիններ· սոքա են

## ԿՈՄԵՏՆԵՐԸ (ՊՈՉԱՒՈՐ ԱՍՏԵՂՔ)·

Ամենեւին զարմացնելով մեզ, ժամանակ առ ժամանակ երեւումեն դոքա գիշերային երկնակամարի վերայ որպէս ահագին լուսեղեն մարմինք, որ բաց ի մի լուսաւոր, աստեղանման փայլուն մասնից որ նոցա արմատական հիմքն է, ունին մի լուսեղէն պոչ, որ աւելի յաճախ բաց էր դարձուցած արեգակից, որ և շատ անգամ ձգվումէր շատ միլիոն մղոն երկայնութեամբ։ Այս ամենեւին անակնկալ երեւոյթը, որպէս և նորա կերպարանքը առիթ են տուել տգէտ մարդերի համարելու նորանց որպէս մեծ, ահարկու անցքերի գուշակողք· և փոխանակ ուրախանալու այն զարմանալի տեսարանի վերայ, սնապաշտութիւնը և տգիտութիւնը ահ ու դողով նկատած են այն հոյակապ կոմետները որ երեւեցան 1811, 1819, 1835 և 1843 թուականներին։ Եւ կոմետքը բաղկանումեն մարմնեղէն թէև շատ աւելի նուրբ նիւթից, քան թէ մոլորակների նիւթն էր· և նոքա ստանումեն իւրեանց լոյսը արեգակից և ստորադրած են այնպիսի օրէնքների, որպէս ստոյգ և երկրորդական մոլորակները· բայց նոցա ընթացքը չէ շրջանաձև բոլորակ, ինչպէս փոքր ինչ խոտորմամբ, մոլորակների ընթացքն է, այլ երկայնաձիգ բոլորակ կամ, խօսելով գիտ-

նական լեզուով, էլլիպսեան։ Մինչ արեգակը համարեա թէ միջնավայրումն էր երբ որ մոլորակները կատարումէին իւրեանց ընթացքը, նա կոմէտների մնառութեան միջոցին կանգնած է երկայնաձիգ բոլորակի (էլլիպսի) համարեա թէ մի աղեղի վերայ, այնպէս որ նոցա մէջ պիտոյ էր յատկապէս որոշել երկու կէտք, զոր օրինակ արեգակի մերձաւորութեան և արեգակի հեռաւորութեան կէտեր։ Եւ ինչքան առաւել մօտենումէ կոմէտը արեգակին, այնքան ևս արագ վազումէ նա, մինչ արեգակից հեռանալով, ծանրացնումէ իւր ընթացքը և դանդաղ քայլով կատարումէ իւր տխուր անընկեր ճանապարհը տիեզերքի տարածութեան մէջ։ Տարևոր ժամանակներից յետոյ, դարձեալ ուղղումէ իւր ընթացքը դէպ ի արեգակը․ և ուսումնականքը հաշուած են այդ ճանապարհորդութեան տևողութիւնը 1300 և 5000 տարի, զոր օրինակ 1811 և 1680 թուականի կոմէտների համար։ Արդարև, մի քանի բան այս տեղ անհաւաստի էր, բայց դորա հակառակ շատ կոմէտների ընթացքներ, որպէս և կոմէտների կանոնաւոր վերադարձը բաւական ճշդութեամբ հաշուած ու սահմանած են։ Կոմէտների կերպարանքը ենթարկված է բազմապատիկ փոփոխութենների․ երբեմն երևումեն նոքա պոչաւոր, երբեմն առանց պոչի։ Բայց տեսած են կոմէտներ երկու, այո և աւելի շատ պոչերով։ Ամենեքեան սոքա առեղծուածք են, որ Աստուած ժամանակ առ ժամանակ առաջարկումէ մարդկութեանը, նոցա հայեացքը ցածից դէպ ի վեր ուղղելու համար և նոցա ցոյց տալու, որ նա մի անըսպառելի ճարտարապետ է, միշտ նորանոր ձևեր և կերպարանքներ յօրինելով ամենափոքրից մինչև ամենամեծափառը և ամենավսեմը։

Այս առեղծուածներից թող մի ուրիշը յիշատակենք այս տեղ, այսինքն,

## ՎԻԺԱԿԱՆ ԱՍՏՂՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ

Այսպիսի աստղների անկումը պայծառ երեկոների և գիշերների մէջ, երբեմն ունեցած ենք միջոց տեսանելու։ Թէ ինչ է պատճառը այս արժանի ուշադրութեան երևութի, այդ մասին ուսումնականք առնումեն կշռադատութիւնք միայն։ Առաջին միջոցներումը կարծումէին թէ դոքա էին շոգիք, որ բարձրանումէին երկրից և բորբոքվումէին օդի մէջ․ բայց յանկարծ, սովորաբար, ահարկու թնդիւնով վայր էին ընկնում երկնքից մարմիններ, որ աւելի մօտ քննելով տեսանումէին, թէ նոցա նիւթը բաղկանումէր հողեղէն մասներից և զուտ երկաթից։ Նիւթեր 171 մինչև 3000, այո մինչև 14,000 փունտ ծանրութեամբ։ Անկարելի էր, որ լինէին նոքա երկրի ծնունդ․ այնուհետև սկսեցին մտածել լուսնի վերայ և համարումէին այն վայր ընկած մարմինքը որպէս վուլ-

կանական արտաձգութիւնք։ Բայց և այս կարծիքից հրաժարված են մեր օրերումը, մանաւանդ թէ միտ դնելով այն շատ կանոնաւոր կարգին, որով կրկնվումէ այդ աստղների անկումը, այնպէս որ այժմ համարվումեն դոքա փոքրիկ մարմիններ, աշխարհների փոշի, որ մեր երկրի պէս ընթացքներ կատարելով արեգակի չորս կողմով, երբ որ շատ մօտեցած էին երկրին, մօտ են քարշվում սորանից և վայր են ընկնում նորա վերայ։ Առաջին գիտնաւորը, որ այս անհասկանալի երևութին առաւելապէս ուշադիր եղաւ, էր մեծանուն Ալէքսանդր ֆօն Հումբօլդը՝ երբ նա իւր ուղեկից Բօնբլանի հետ 1799 թուականին, գիշերով 11 ից դէպ ի 12 Նոյեմբերի գտանվումեր Պանամայի երկրանեղուցի վերայ, տեսաւ մի այնպիսի բազմութիւն վիժական աստղների, որ չորս ժամ հազարաւոր այդպիսի աստղներ երկնքի վերայ անց կացան նորա աչքի առաջև։ Նոյն երևոյթը հանդիպեց և հիւսիսային Ամերիկայի, Գրեօնլանդիայի և նոյն իսկ Գերմանիայի մէջ։ Այդ աստղները գալիս էին արևելքից և հիւսիսակողմեան արևելքից և անցանումէին երկնակամարի վերայով, որ հարաւումը և հիւսիսումը դարձեալ վայր ընկնեն։ Դոցանից շատերը՝ունէին շատ կանգուն երկայնութեամբ պոչեր և շատ անգամ աւելի մեծ ու լուսափայլ էին քան թէ Վենուսը և Իւպիտերը երևումեն պարզ աչքի համար։

Այս աստղների առաւել արժանայիշատակ յատկութիւնը, բաց ի նոցա մեծ բազմութենից և կանոնաւոր կարգով վերադարձից, է և նոցա շարժողութեան ուղղութիւնը, որ, ինչպէս կարծումեն, երկրի շարժողութեանը ներհակ է։ Այս պատճառով, չէր մի համարձակ կշռադատութիւն, ընդունել թէ բաց ի մեծ մեծ մոլորակագունդներից այլև ամբողջ բազմութիւնք փոքրիկ մարմինների շարժվումեն տիեզերքի տարածութեան մէջ արեգակի չորս կողմով, և թէ այս մարմինները աւազեղէն կամ քարեղէն ամպի պէս կատարումեն իւրեանց ընթացքը արեգակի չորս կողմով, նոյն օրէնքների ներքոյ, ինչպէս երկիրը և միւս մոլորակները։ Եթէ ընդունենք, թէ մեզ առաւել մօտաւոր, այս տեսակ մոլորակային ամպը կատարումէ արեգակի չորս կողմով մի այնպիսի ընթացք, որ փոքր միայն զանազան էր մեր երկրի ընթացքից. այլև գուցէ թէ մեք մեր մեծ երկրաւոր նաւովը ամենայն տարի շատ անգամ նորա եզերքը միջից կտրելով անցանումենք, — ըստ որում նկատած են նշանաւոր վայրանկութիւնք վիժական աստղներերի բաց ի այն Մեծիցը որ լինումէ Նոյեմբեր, Մարտ, Օգոստոս, և Սեպտեմբեր ամիսների մէջ և յատկապէս միշտ 12 ից մինչև 15 — եթէ ընդունենք այդ բանը, ապա չէ կարող օտարոտի թուել մեզ նոցա յաճախ և կանոնաւոր կարգով վերըստին երևելը։ Բայց մի բանի վերահասու է լինում մարդու մտածող

*հոգին նկատելով և այս փոշին տիեզերքի․ այսինքն է այն օրէնքների հաւասարութիւնը որոնց ստորադրված են բոլոր տիեզերական մարմինները, սկսեալ ամենափոքրից մինչև ամենամեծը, և մի մեծ գուշակողական խօսք էր այն, որ լսումենք հոգիազգեաց գերմանական բանաստեղծի բերանից․*

*«Երկիրների չորս կողմով լուսիններ շրջումեն,*
*Երկիրներ արեգակների չորս կողմով․*
*Բոլոր արեգակների խումբերը շրջումեն*
*Մի մեծ արեգակի չորս կողմով․*
*«Հ ա յ ր մ ե ր ո ր յ ե ր կ ի ն ս ե ս։»*

# Ե Ր Կ Ի Ր Ը

## ԻՒՐ ՀՐԱՇՔՆԵՐՈՎ ՈՒ ՏԵՍԱՐԱՆՆԵՐՈՎ։

### ՆԱԽՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ․

*Երբ որ արարչագործութեան օրումը տիեզերքը հանդիսացան Ամենակարողի ճարտարապետական ձեռքովը, այն միջոցին պէտք է գոյացած լինի և մեր տիեզերական մարմինը, այսինքն Երկիրը։ Եթէ նկատումենք նորա հետ զհետէ կերպարանագործութիւնը, դա մի առեղծուած է, որ թէև մեծիմաստ գիտնաւոր մարդիկ աշխատած էին լուծանել և բացայայտ կացուցանել, ի վերայ այսր ամենայնի բոլոր համարձակ ենթադրութիւնքը այդ մասին հանդիպած են հակառակութեանների, և խնդիրը մնումէ միշտ դժուար և տարակուսելի։ Արդարև, մեր աչքի առաջև դրած են այս քարեղէն պատմական տախտակները երկրակեղևի․ մեք մին մին բացումենք այն հողաթերթերը, որոնցից նա բաղկացած է, մեք ժողովումենք այն խառնափնդոր տառերը, ցան և ցիր մնացորդքը անհետացած էակների, մեք բաղադրումենք նոցանից բառեր և ամբողջ խօսքեր․ բայց մի՞թէ գտանումենք և նոցա կենդանի խորհուրդը, այն մշտնջենաւոր, մի բան միւսի հետ կապակցող թելը որ ձգվումէ բնութեան և նորա մէջ եղած անցքերի միջով։ Այն տեղ ընաղնին մարդը հազարաւոր վտանգներ յանձն առնլով ելանումէ ամենաբարձր սարակատարների վերայ, մինչ միւսերը երկրի խորքի մէջ որոնումեն մետաղների երակները, ծակամուտից դէպ ի ծակամուտ ցած իջանելով աշխատումեն երկրի կաղմածի գաղտնիքը հասկանալ․ բայց գնալով գնալով աւելի դժուարիմաց և խառնափնդոր է լինում այն բարբառը որ խօսումէ*

երկրագունդը իւր սարերի ծայրերից մինչև ցած դէպ ի ստորերկրեայ ջրերից ձայնարկու յատականիստքը։ Ամեն մի նոր նկատողութիւն և յայտնագործութիւն յառաջացնում է նորանոր խնդիրներ, մի հրաշք երևում է միւսի քամակից, և հիացած բնագէտը երկրի խորքի մէջ հանդիպելով հսկայաձև կենդանական ոսկրայօդերի և ապառաժի մէջ տպաւորված կերպարանքների, կամ թէ ահագին ծառաբուների և կամ թէ մեծամարմին վառելի, քար դարձած ածխակոյտերի, պիտոյ է խոստովանէ թէ նա գտանվում էր այս տեղ մի այնպիսի աշխարհի մէջ, որի լաբիրինթոսների մէջ և ամենավերին գիտութիւնը կարող չէր գործ կատարել որպէս տեղեակ ուղեցոյց։

Ի վերայ այդր ամենայնի մեք ունինք մեր աչքի առաջև մեր երկրակեղևի մի չնչին մասն միայն. և ամենախոր ստորերկրեայ տեղերը որ յայտնի են մեզ, չեն աւելի 1500 կանգունից, և ամենաբարձր սարերը որոնց վերայ ոտք էր կոխել մարդս, դեռ ևս չեն հասանում 10,000 կանգունի. բայց սակայն երկրամարմինը մինչև իւր կենտրոնը ունի 959 մղոնի խորութիւն։ Որպիսի, մարդկեղէն աչքին երբէք անհանդիպելի տեսարաններ ու առարկայք պիտոյ է լինէին այս տեղ. այս հարցուածին չը կայ պատասխանի։ Երկրի խորքիցը նայելով դարձեալ մեր հողակեղևի և նորա կերպարանագործութեան վերայ, կարելի է ընդհանրապէս, շատ կամ փոքր հաւանականութեամբ ընդունել որ առաւել հին ժամանակներից մինչև առաւել նոր ժամանակները երկրի կերպարանագործութիւնը հետ զհետէ յառաջ է գնացել, որ ըստ օրէ անընդհատ գոյանալով նորանոր առաւել կատարեալ բուսական և կենդանական մարմիններ, թէպէտ առաջինքը չեն անհետացած իսկոյն։ Առաւել նախնի ծովերը, որ միանգամ ջրհեղեղով պատել էին երկրի մի բաւական մեծ մասը, սնուցանում էին իւրեանց մէջ օտարատեսիլ խոցեմորթեր միայն, շատ սակաւ բուսակենդանիք որ շնչական թագաւորութեան վերջին դասակարգումն են։ Աւելի յետոյ յառաջացան օդ շնչող Ամֆիբիայքը, զարմանալի կերպարանքով կազմած շնչաւորք, ըստ մեծի մասին հսկայաձև մեծութեամբ։ Ապա յառաջացան թռչունք և կաթնակեր անասունք, որ ըստ օրէ աւելի բազմանալով և տարածվելով յետոյ։ Բայց թէ երբ բարձրացան սարերը երկրի խորքից, երբ կերպարանվեցան ծովից շրջապատված կղզիները. թէ երբ դուրս բղխեցին գետերը սարերի կողից գոգաւորելով իւրեանց ձորերը. և թէ ինչքան ժամանակ անցած էր, երբ որ այդ գետերը ջրհեղեղ բերելով դրացի եզերական սահմանների վերայ, հետ զհետէ կերպաւորեցին հարթակշիռ անդաստանները և դաշտակները։ Թէ երբ կապտագոյն օդապատը կամար կապեց երկրի վերայ. երբ կենդանացան ջրերի խորքը, կանա-

չաղարդ երկրի երեսը և երկնակամարի ցածը․ և երբ Աստուծոյ կենդանի շունչը փչվեցաւ այն հողի կտորի վերայ, որ կերպարանվեցաւ որպէս մարդ։ Այս հարցուածներին կարող չէ մարդկեղէն իմաստութիւնը պատասխան տալ։ Նախնի աշխարհի գերեզմանները որ ծածկումէ երկրակեղևը, վկայումեն Աստուծոյ կարողութիւնը որ ներգործել է նորա վերայ։ Մի մեղմ գուշակութիւն միայն հասանումէ մեզ այն կերպարանքների մասին որ ցուցանումէ երկրի կեղևը։ Յառաջ քան թէ մարդս բնակումէր երկրի վերայ, կար մի ժամանակ, երբ այլ տեսակ արարածներ ունէին իւրեանց բնակարանը այս երկրի վերայ։

## ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀՐԱՇԱԼԻ ԿԵՆԴԱՆԻՔԸ։

Թէպէտև մեք շատ սակաւ տեղեակ ենք մեր երկրի որպիսութեանը հազարաւոր տարիներից յառաջ, բայց որպէս ապացոյց թէ եղած է մի սաստիկ յեղափոխութիւն որ տուած էր մեր երկրին մի այլ կերպարանք և համատարած ջրերին օրէ օր աւելի սահմանափակութիւն, հանդիպումեն մեզ ահագին կենդանական ոսկրներ որ պատկանումէին մի նոյնպէս ահագին բնութեան։ Բնագէտների բանահիւս հանճարը այս ոսկրեղէն կերպարանքներից արել է շատ տեսակ եզրակացութիւններ և յայտնագործած կմախքները միմեանց հետ զուգաւորելով տուել է նոցա ամբողջութիւն և համակարգութիւն։ Այն իրողութեններից որ արդէն հաւաստի յայտնի են, թող մի քանի արժանի գիտութեան բաներ դնենք այս տեղ։

Այն ահագին կենդանական մարմինների մնացորդքը, որ ասվումեն և հանքային (հողի տակից հանած), գտած են սովորաբար, պատահմամբ փորելով գետինը; և նոցա այլանդակ կերպարանքը հիացք է բերել ոչ թէ միայն հասարակ ժողովրդի, այլև ուսումնական քննողների վերայ։ Մտածեցէք այն զարմացքը, որ պիտոյ է դար շատերի վերայ, երբ որ անցեալ դարումը մի գետնափորի մէջ Փարիզումը գտան մի բալենայի գլխի ոսկր, որի ատամները և կազմուածքը այնպէս անսովոր մեծ էին, որ այս բալենային անուն տուեցին հսկայական բալենայ։ Այսպէս, ջրհեղեղով բերած ու շինված յատակի մէջ գտան փիլերի, ռնգեղջիւրների և Նիլոսեան ձիերի տեսակներ, որոնց սեռքը ոչինչ յարակցութիւն չունին այժմաւս ապրողների հետ, եթէ միտ դնենք նոցա մեծութեանը։ Առաւել ծանօթը այն հանքային հսկայական կաթնակեր անասունների մէջ է

## ՄԱՄՄՈՒԹ,

Կամ թէ Մամմօնթ ասած կենդանին, որ Եւրոպայի մէջ և դորանից

դուրս, առաւել տափարակ սահմաններում, քան թէ լեռնային տեղերում գտած են։ Դոցա առաւել ճոխ շտեմարանը է Սիբիրիայի աշխարհը, ուր գտանվում է Մամմութի խեթկող ատամների ահագին բազմութիւն. ճանապարհորդ Հայը կարող է տեսանել Սիբիրիայում գտած մի Մամմութի կմախք, որ պահպանվում է Պետերբուրգեան մուզէոնի մէջ։ Երբ որ 1806 թուականին Ռուսաստանից պատգամաւորք էին արձակված դէպ ի Չինաստան, որոնց առաջնորդը էր գրաֆ Գօլօվկինը, ճանապարհի վերայ լոյս ձգեց այդ կմախքը բնագնին Ադամսը, որ ուղեկից էր եղած յիշեալ պատգամաւորներին։ Երբ որ սոքա վերադարձի վերայ էին, Ադամսը հասաւ Իրկուտսկ, և այս տեղ մի վաճառական Պօպօվ անուն, պատմեց նորան, թէ սառնապատ ծովի եզերքումը, Լենա գետի բերանին շատ մօտ գտանվում է մի կենդանի ահագին մեծութեամբ։ Ադամսը, իւր հետ առած մի Տունգուզեան մեծաւոր որին պատկանում էր այն սահմանը, յանձն առաւ ճանապարհորդել դէպ ի սառնապատ ծովը և վտանգաւոր ու տառապագին ուղևորութիւնք շատ առնելուց յետոյ, վերջումը հասաւ այն տեղ, ուր ասած էին թէ գտանվում է այն ահագին գազանը։ Տունգուզեան գլխաւորը Ցովսէփ Շումախով պատմեց նորան թէ ինչպէս լոյս էր հանված Մամմութը. այդ մարդու արժանի ուշադրութեան պատմութենից դնումենք այս տեղ այս ծանօթութիւնքը։

Տունգուզները, լինելով մի թափառական ազգ, չեն մնում մի և նոյն տեղում։ Նոքա, որ բնակումէին անտառների մէջ, և նոքա որ տուն ու տեղ ունէին ծովեզերեայքի մօտ, սահմանեալ միջոցներով միասին դուրս են գնում չորքոտանի անասուներ և ձուկն որսալու համար։ Այսպիսի որսորդական ճանապարհորդութեան միանգամ մասնակից լինելով յիշեալ գլխաւորը Շումախով, լոյս հանեց Մամմութը սառցակոտորների մէջ, բայց չը կարողացաւ իսկոյն ձեռք բերել այդ պլանդակ կենդանին։ Վերադառնալով դէպ ի տուն, յայտնեց նա այս խորհրդաւոր յայտնագործութիւնը իւր կնոջը և բարեկամներին. բայց սոցա կարծիքը այդ բանի մասին, ահ ու տրտմութիւն բերեց նորա վերայ։ Ծերունիքը պատմեցին այնուհետև, թէ նոքա իւրեանց հօրերի ու պապերի բերանից լսած են, թէ վաղ ժամանակներում մի այդպիսի պլանդակ գազան լոյս է ընկել կղզու վերայ, բայց ազգ ու ցեղը այն մարդու որ առաջին անգամը տեսած եր դորան, շուտով բնաջինջ է եղել երկրի երեսից։ Ուրեմն Մամմութը համարվեցաւ մի չարագուշակ նշան և տունգուզեան գլխաւորը մտատանջութեան մէջ ընկաւ, այլև հիւանդացաւ ծանր ցաւով։ Բայց ազատվելով այս հիւանդութենից, իսկոյն սկսեց կրկին դարձուցանել իւր ուշադրութիւնը այդ գազանի վերայ, մտածելով թէ դորանից կարող էր շատ շահաւէտութիւնք ստանալ, ըստ

որում դորա խեթկողական ատամները շատ մեծ ու սպիտակ էին։ 1804 թուակ. Մարտ ամսի մէջ, Շումախովը ձեռք բերեց այն Մամմութը որ սառցային սարերի մէջ բաւական անարատ, մորթով ու մսով պատած պահպանվել էր. Նա դուրս հանեց ատամները և վաճառեց նորանց։ Երկու տարի անցած սորա վերայ, եկաւ այս կողմերը յիշեալ Ադամս բնագէտը, և նորա բոլոր ջանադրութիւնը այն էր, որ այս գազանի բոլոր մնացորդքը դուրս հանէ սառուցի միջից դէպ ի ցամաքը, որ և յաջողեցաւ նորան բոլորովին. այլև նորա բարի բաղդը այնպէս բերեց, որ նա կրկին ձեռք բերեց այդ գազանի խեթկողական ատամները որ վաճառել էր Շումախովը։ Այսպէս Ադամսը վերադարձած լինելով Պետերբուրգ, կարող էր այդ կմախքը իւր կատարեալ սարք ու կարգով յանդիման կացուցանել։

Արժանի է ուշադրութեան, որ և Բուրեատների մէջ, որ Չինացոց ազգի ցեղից են, մինչև այժմ պահված է այն կարծիքը որպէս թէ այդ գազանը ապրումէր և մեր ժամանակումը, այլև թէ արդէն 16 դարու մէջ չինէական լեզուով շարադրած մի բնապատում գրքի մէջ, որ ասվումէ Բուն-լօօ-գան-մու, պատմութիւն է լինում այս գազանի ուժեղութեան, կերպարանքի և փոսերի մէջ կացութեան մասին։ Այս պատմութիւնը համաձայն է վերոյիշեալ ազգերի զրոյցներին, ըստ որում և սոքա կարծումէն թէ Մամմութը այժմ ևս ապրումէ ամենևին մութ և անայցելու տեղերում, և այնքան սակաւ դուրս էր գալիս իւր խաւար փոսերից, ինչքան որ շատ երկիւղ ունէր արեգակի ճառագայթերից և լուսնի փայլողութենից։ Այս զրոյցները հասարակօրէն համաձայն են Ամերիկայի նախնական բնակիչների զրոյցներին. այդու ամենայնիւ երևումէ, թէ, ըստ որում գոցա ստուգութիւնը չունի ոչինչ ապացոյց, այս տեղ ևս գերակշիռ էին վաղաժամանակեայ աւանդութիւնք, և թէ սոքա ժառանգութեան պէս զաւակից զաւակ յառաջ գնալով տարածված էին։

Այն աշադին գազանի պատկերը ցուցանումէ, որ նա շատ նմանութիւն ունի կենդանի փիղի հետ, բայց մեծութեամբ շատ առաւել գերազանց է ամենամեծ և ամենավիթխարի փիղի տեսակից, այսինքն Հընդկաստանի փիղից. պատճառ, նորա մնացորդքը շատ անգամ ունին 800 ից մինչև 1000 փունտ, և նորա խեթկողական ատամները յաճախակի բաղկացնումեն 15 ոտնաչափ երկայնութիւն։

Արևակայութիւնը հազիւ թէ կարող էր պատկերացնել իւրեան այդպիսի հսկայաձև կենդանիք որ եղած էին նախնի աշխարհումը։ 1830 թուակ. մի Մամմութի գլուխ ամենևին անթերի պահված գտել են Միսսուրի գետի մէջ, մի այնպիսի աշադին բան, որ եթէ կամենայինք

դորանից եզրակացուցանել նորա բոլոր մարմնի մեծութիւնը, ապա այդ հսկայ գազանը հազիւ թէ տեղաւորվելու էր ամենամեծ եկեղեցու մէջ․ պատճառ, գլուխը միայն բռնումէ մի չափաւոր սենեկի չափ տեղ ։ Նորա ամեն մի ատամը ունէր 5 կանգուն երկայնութիւն և դոցա ծայրերը պարզվումէին դէպ ի դուրս, այնպէս որ 10 կանգունից աւելի էր միջոցը երկու ծայրերի մէջ ։ Եւ այդպիսի շնչաւորք երամակով արածումէին այնպիսի բազմութեամբ, ինչպէս մեր ոչխարները․ ո՛վ սքանչելիք ։ Պատճառ, Սիբիրիայի գետեզերեայքումը և սառնապատ ծովի մօտակայքումը հանդիպումենք այդպիսի ոսկրների միմեանց վերայ կուտած․ նոյն բանը տեսանվումէ շատ տեղ Անգլիայի և Ֆրանսիայի ծովեզերեայքումը, և ո՛ գիտէ, թէ այդպիսի շնչական մարմինք այդպիսի բազմութեամբ ուր կարելի էր դեռ ևս գտանել պատահմամբ ։ Բայց խնդիրը այն է, թէ ինչպէս կարող էր մեր պէս մի մարդ պահպանել իւր անձը այդպիսի հսկաներից նախնական աշխարհի մէջ․ որպիսի թզուկ էր նոյն ինքն փիղը, համեմատելով սորան նոցա հետ ։

## ՄԱՍՏՕԴՕՆԸ

Է նոյնպէս այն վաղաժամանակեայ հսկայ շնչաւորներից մինը, որ ամենևին անհետացած են ։ Հաւանական է թէ սա և Մամմութ կենդանին ապրած էին մի և նոյն ժամանակում, և միապէս թաղվեցան փլատակների տակ, յեղափոխութիւն պատահելով երկրի վերայ․ պատճառ, շատ անգամ գտանումեն երկուքի կմախքը միասին ամփոփած ։ Մի փոքր նմանութիւն ունի և սա փիղի հետ․ առ հասարակ փիղն է որի չափով պիտոյ էր չափել անհետացած նախնական շնչաւորների մեծութիւնը ։

Մի հսկայամարմին ռնգեղջիւր որի վերայ դեռևս անարատ մնացած էին մազերը, կաշին և միսը, գտած են սառած աւազի մէջ Վիլուի գետի մօտ հիւսիսային Սիբիրիայումը․ բայց ամենայն տեղ, ուր հանդիպումեն հանքային մնացորդք վաղաժամանակեայ փիղերի, գտանումեն ռնգեղջիւրների ոսկրներ․ բայց սոցա ազգը նախնական ժամանակներումը աւելի մեծ էր քան թէ այժմեանը ։ Եւ նիլոսեան կամ թէ գետային ձիու կմախքներ գտանումեն Գերմանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի մէջ, բայց առաւել յաճախ Իտալիայումը Արնօ գետաձորի մէջ, որ բաւական զգալի նմանութիւն ունէին այժմեան նիլոսաձիու հետ որ ապրումէ Եգիպտոսումը ։

## ՄԵԳԱԹԵՐԻՈՆԸ․

Մի հսկայ դանդաղկոտ կենդանի, կամ բառացի մտքով «մեծ գազան», որ նշանաւոր է իւր գլխի, ոտերի և ճանկերի օտարատեսիլ անհե-

*թեթ կերպարանքով ։ Նորա մարմինը ամենևին զրահապատ է, ունի 14 ոտնաչափ երկայնութիւն և 8 ոտնաչափ բարձրութիւն, և ահագին ծանրութիւն, այնպէս որ անկարող էր դէպ ի վեր մագլցել ։ Առաջի ոտքերը ունէին համարեա թէ մի կանգուն բարձրութիւն և մի ոտնաչափից աւելի լայնութիւն, և նոցա վերայ կային ճանկեր որ յարմարաւոր էին գետինը փորելու և քանդելու։ Դորա սնունդը էին հիւթաւոր բուսականների արմատներ ու կոճեր, և դորա եօթն ճկութաչափ ատամները կազմած էին այն բանի համար մանաւանդ, որ ջաղջախեն բուսական նիւթերը ։ Գտած են հատուկտոր ոսկրեր, զոր օրինակ տաշտը, բարձքեր, վզի յօդեր, ճանկեր, այս գրեթէ բոլորամասն, լաւ պահված կմախքը Մեգաթերիոնի։ Շատ տեղ, հարաւային Ամերիկայումը գտանումեն այդպիսի մնացորդք հովիտների և լեռնադաշտակների փուխր յատակի մէջ, այլև կամպաս անունով դաշտերի աւազեղէն տափակակոյտերի մէջ․ Հիւսիսային Ամերիկայումը գտանվումեն դոքա ջրհեղեղով բերած ու կուտած հողի մէջ և գետերի տղմի մէջ ։*

*Մեգաթերիոնին յարակից է, թէ իւր կազմուածքով և թէ իւր կեցութեան եղանակով,*

## ՄԻԼՈԴՈՆ ԿԵՆԴԱՆԻՆ,

*Որի ոսկրները գտած են Ամերիկայումը։ Դանդաղկոտ շնչաւորքը որոնց դասակարգին պատկանումէ դա, մագլցումեն ծառերի վերայ, նոցա տերևներովը կերակրվելու համար ։ Նոյն սնունդը էր Միլոդոնի համար․ բայց նորա անճոռնի մարմնակազմութիւնը թոյլ չէր տալիս նորան ելանել ծառերի վերայ ։ Այս պատճառով բնութիւնը այլ կերպով հոգացել էր այդ գազանի համար․ նա տուել է նորան մի ուժեղ կազմութիւն մարմնի, այլև մի պոչ որ ուժի ու ամրութեան մասին չունի իւր նմանը։ Ինչպէս պիտոյ էր իմաստասիրել միտ դնելով Միլոդոնի ոսկրակազմին, դա իւր առաջին մագիլներով ըմբռնումէր ծառերը, ցնցումէր և շարժումէր նորանց, մինչև դոքա խորտակվումէին և ցած էին ընկնում, և այդպէս գտանումէր նա իւր կերակուրը։ Երկու յետնակողմեան ոտերը բաւական չէին այս գործի մէջ հաստատութիւն տալու այդ գազանին, այդ պատճառով բնութիւնը տուած էր նորան մի ամուր պոչ, և այս որպէս թէ երեք ոտքի վերայ ամրանալով, կարող էր նա յաջողութեամբ ցած խորտակել ամենապինդ ծառերը։ Ահա դուք տեսանումէք դարձեալ, թէ ինչպէս հոգս է տարել Արարիչը այն բանի համար, որ հարաւային Ամերիկայի նախնական անտառները, այս շնչաւորի հայրենիքը, չը խտանային չափից դուրս կամ թէ նոցա անճոռնի բազմանալուն մի խափան*

դրվէր այն միջոցումը, երբ որ մարդը դեռ ևս միտք չունէր յանձն առնուլ այդ գործը։ Դիցուք, թէ ամեն մի այսպիսի հսկայ կենդանի ամեն օր ցած էր խորտակել մի ծառ, այլև, թէ բազմութիւնք սպիտակ մրջիւնների, որ, ինչպէս հաւանական է, նոյնպէս աւելի մեծ էին քան թէ այժմեանքը, ապականումէին Միլոդոնից վայր ձգած ու թողած ծառաբունը և նորա ճիւղերը, այնուհետև կարող էիք դուք նկարագրել մտքով այն մեծօրինակ տնտեսութիւնը բնութեան, որ ոչ մի տեղ թոյլ չէ տուած չափազանցութիւն։

## ԴԻՆՈԹԵՐԻՈՆԸ·

Մի հսկայամարմին արարած, առանձին կերպարանքով, լայն ու անչափ կորացած խեթկող ատամներով, որ դէպ ի ցած գնալով նստած են նորա ծնօտների մէջ։ Այս շնչաւորի ազգը, ինչպէս հաւանական է, սնանումէր ըստ մեծի մասին բուսականներից, և բնակումէր լճերի և ճախինների մօտակայքում։

Երեք կամ չորս տեսակ Դինոթերիոն գտած են մինչև այժմ. սոցանից մի տեսակը ունի 15 ոտնաչափ երկայնութիւն և մօտ 10 ոտնաչափ բարձրութիւն։ Անտարակոյս, պիտոյ է զարմանալի երևէր մեզ, թէ ինչպէս կարողացած է այս կենդանին գործ գնել իւր անճոռնի երկար և ծանր խեթկողական ատամները. արդարև դուք պիտոյ է մտածէիք, որ դոքա շատ ու շատ անյարմար և ծանր էին գլխի համար։ Որովհետև բնութիւնը սահմանել է ջուրը որպէս բնակարան այս արարածի համար, ապա կարելի է նորա կազմուածքը հեշտութեամբ համաձայնեցնել նորա կեցութեան եղանակի հետ։ Տարակոյս չը կայ, որ այդ շնչաւորի ատամները ամենևին յարմարաւոր էին ջրի խորքից դուրս փորելու մեծ ջրային բուսականների արմատքը. և այս գործի մէջ, եթէ դոքա աւելի փոքրիկ եղած լինէին, ապա կարող էին հեշտ փշրվել, ըստ որում յիշեալ բուսականների արմատքը շատ խոր հաստատված են երկրի յատակի մէջ, և գտանումեն ընդդիմութիւն քարերի կողմից։ Այլև Դինոթերիոնի ատամները կարելի է համեմատել մի նաւի խարսխի հետ, որ իջանումէ ծովի մէջ և իւր ճանկերովը ցցվումէ յատակի մէջ, երբ որ հարկաւոր էր նաւի ընթացքը դադարեցնել։ Երբ որ Դինոթերիոնը իւր ատամները ձգումէր ջրեզերքին, այնուհետև կարող էր հանգիստ քնել հեղեղի մէջ, ըստ որում նորա մարմինը, որ թող լինէր ևս առաւել վիթխարի, ապահով էր ալիքների երեսից, և գլուխը դէպ ի վեր պահելով, կարող էր շունչ առնուլ իւր կնճթի ծակերով. վերջապէս կարելի է մտածել, թէ նա իւր խեթկողական ատամները գործ էր գնում այն-

պէս, ինչպէս ծովաձին (Արոքաս), այսինքն իւր մարմինը ջրից հանելու և իւր անձը պահպանելու համար։ Դինոթերեան ոսկրներ գտանուեն Բավարիայի, Ֆրանսիայի մէջ, Ռէյն գետի, Վիեննայի մօտակայքումը, Պիրինէյեան սարերի ոտքումը և Պօդօլիայի մէջ. սորանից բացայայտ է ահա, թէ այդ շնչաւորը պիտոյ է տարածված լինէր բոլոր այժմեան Եւրօպայի վերայ։ Այլև, երկրի վաղաժամանակեայ միջոցներումը, յառաջ քան թէ ստեղծած էր մարդս, ապրումէին տապիրանման կենդանիք, որոնց ոսկրները և ատամները մեծ բազմութեամբ հանդիպումեն Փարիզի մերձակայքումը և Գերմանիայի մէջ. դոցա ասումեն Պալէոթերիոն և Անապլոթերիոն։ — Ճիւղաւոր եղջիւրները հսկայամարմին եղջերուի նմանապէս արժանի են ուշադրութեան։ Բայց ոչ թէ միայն կաթնակեր անասունների կարգից ծանօթացել են մեզ օտարատեսիլ կենդանական ձևեր շատ, այլև գտած են հսկայաթռչունների ոսկրներ, որ, զոր ընինակ Դինօրնիս թռչունինը, տալիս են մեզ իմաստասիրելու, որ ունէին նոքա մօտ 16 ոտնաչափ բարձրութիւն։

Բաց ի սոցանից, Իխթիոսաւրոսի (ձկնախլէզի) և Պլեզիոսաւրոսի (խլէզանմանի) ոսկրները որ միասին կարգադրած են, պատկերացնումեն մեր առաջև միւս ահաւոր հսկաներ սողունների և երկակենցաղ շնչաւորների կարգից։

Սակայն բոլոր մինչև այժմ երկրի աւերակների տակից դուրս փորած շնչաւորների մէջ նշանաւոր է Պտերոդակտիլոսը, որ մի թևաւոր սողուն է, երկարավիզ, երկայնագլուխ և կարճամարմին, որ ուժեղ թևերի զօրութեամբ շարժվումէր և հանդստութեան միջոցին, հաւանական է թէ սկիւռի պէս նստած էր իւր յետնակողմեան թաթերի վերայ և գլուխը յետ ծռած, որ մարմնի ծանրութեամբ չը կորուսանէր իւր հաւասարակշռութիւնը։

Բաց ի դոցանից յայտնի են մեզ զանազան ազգեր հանքային հըսկայաձև կրիաների, արժանի ուշադրութեան գորտատեսակ շընչաւորների, ձկների և ողնայօդաւոր անասունների և ժժմակների մեծ բազմութեամբ։ Բայց ոչ մի ժառանգութիւն այն անցած գնացած վաղեմի աշխարհից չէ եղած այնքան նորանշան, որպէս այն վիթխարի մնացորդքը մի կաթնակեր անասունի, որ ուսումնապետ պարոն Քօխը Ալաբամայի մէջ (Հիւսիսային Ամերիկայումը) յայտնագործել է իւր երկրաբննական ճանապարհորդութեան միջոցին։ Կմախքը այս ահագին ծովաբնակ օձի, որ ասվումէ Հիւդրարքոս, է 114 ոտնաչափ երկայն և ունի 7500 ֆունտի կշիռ։ Նկատողի վերայ մի խոր հիացք է գալիս, մտածելով թէ ինչպէս այդ վիթխարի ոսկրանիւթը, մի ժամանակ եզրից եզր լող տալով, հալածումէր իւր առաջև բալէնայք, դուցէ և Մամ-

մութը և այլ անողնի կենդանիք արտաքսելով ծովեզերեայ տեղերից։ Նկատելով այս հսկայամարմին մնացորդները, չունինք տեղիք զարմանալու ժողովրդի հաւատի վերայ, որ ընդունում է թէ մինչև այսօր ծովի յատակի վերայ կային նմանապիսի անողնի կենդանիք, որոնց ասած են ծովային օձեր։

## ՄԵՐ ԵՐԿԻՐԸ։

Եթէ մեր դէմքը դարձուցանելով երկրապատենի և նորա նախաշխարհեան կերպարանքի գաղտնածածուկ խորհուրդներից, նայէինք նորա վերջին կերպարանքի, մեր երկրամարմնի մակերևութի վերայ, ապա երևում է դա նոյնքան ևս խորհրդաւոր։ Նախ և յառաջ կար նորա վերայ այն լայնատարած ջրանիւթը, որ ծածկում է համարեա թէ երեք քառորդաչափ տեղ մեր երկրային մարմնից։ Նորա միջից դուրս են բարձրանում երկու մեծ ցամաքահողք, այսինքն արևելեան կիսագունդի Ասիան նախադուռն Եւրոպա աշխարհովը և իւր մեծամարմին Աֆրիկա անդամովը, մինչ արևմտեան կիսագունդի վերայ բարձրանում է ջրերի միջից մեծ աշխարհաբաժինը Ամերիկա, որի երկու մեծ ցամաքահողքը կապակից են միմեանց հետ նեղ, բարձրալեառն հողանեղուցովը միջին Ամերիկայի։ Այն տեղ, արևելեան կիսագունդի հարաւահայեաց արևելքումը, Աւստրալիայի մէջ սկսում է գոյանալ մի նոր աշխարհ (Նոր Հոլլանդիա), որ իւր արտաքին կերպարանքովը տարբերվում է երկու միւս առաւել հին ցամաքահողերից, և թէ մի ժամանակ, գուցէ հազարաւոր տարիներից յետոյ, ինչքան հեռի ընդարձակվելու էին այս նոր ցամաքահողի սահմանքը և անդամքը, այդ բանը ցուցանում են ահա, յառաջընթաց նշանների պէս, այն բազմաթիւ կղզիքը Ասիայի հարաւումը և Ովկիանոսանի մէջ։ Եթէ կարելի էր միանգամայն դուրս թողուլ ծովի ջրերը, ապա նորա յատակը չէր այլապէս երևելու մեզ քան թէ մեր երկրի մակերևութի շատ տեղերը։ Այն տեղ տեսանելու էինք մեք մեծ մեծ, երկար աւազուտ տարածութիւնք և կրի ու գաճի սարեր, խառն արմատների և ծովային շնչաւորների մնացորդներով. պատճառ, եթէ մեք նկատումենք մեր սարերի մեծ մասը, շուտով իմաստասիրումենք որ նոքա գոյացած էին ծովի մէջ և ծովի տակ։ Եւ արդարև, շատերը նոցանից լցուած են խեցեմորթերով և ծովային շնչաւորների մնացորդներով, և Նոր Հոլլանդիայի քանի մի շատ բարձր, մղոնաւոր հեռաւորութեամբ ծովից բացակայ սարերի վերայ տեսանումենք մինչև այսօր բուստեղէն ծառեր կանգուն դրութեամբ, որ մի ժամանակ գոյացած են ծովի հիմքումը, և բոլոր յատակը առ հասարակ ունի այնպիսի կերպա-

*րանք, որպէս թէ յանկարծ ազատված էր ծովի ջրերից, որոնցով հազարաւոր տարիներ ծածկած է եղած նա: Բայց հարկաւոր չէ այդքան հեռի գնալ մեզ, թող ուշադրութեամբ քննենք մեզ առաւել մօտ հիւսիսային Գերմանիայի դաշտավայրը նորա ահագին աւազակոյտերովը, այն սաթի կտորներովը գետնի մէջ, որ մի ժամանակ պիտոյ է ջրհեղեղով միայն գոյացած լինէր. և այսպէս իմանումենք յայտնապէս, որ միանգամ երկար ժամանակ պիտոյ է աղի ծովաջուրը ողողած լինէր դորան, մինչև, հետ զհետէ յատակը բարձրանալով, հետ են քաշվել ջրերը:*

*Բայց եթէ կամենայինք մեր երկրամարմնի մակերևութի բոլոր խորհուրդները մանրամասնաբար քննել, եթէ կամենայինք նորա կերպարանագործութիւնը մի ըստ միոջէ նկարագրել և ուշադրութեան արժանի բաները բովանդակապէս յառաջ բերել այս տեղ, այնուհետև շատ կը մեծանար ճառը և կը ձանձրանային մեր ընթերցողքը: Ուրեմն թող մի բան մէջ բերենք այս տեղ, փոքրով գրգռելու նոցա հարցասիրութիւնը դէպ ի առաւելը, որ և յետոյ լցուցանելու միջոց կ՚ունենանք: Այս պատճառով մեր բնազննական ճառի մէջ, ուր նկատումենք աշխարհի քանի մի հրաշքները, տանենք ընթերցողը մի հրաբուղխ սարի մօտ, այսինքն է Հեկլա Իսլանդիան կղզու վերայ:*

*Վուլկան կամ հրաբուղխ սար ասելով հասկանումենք մեք ամենայն փողովակ որ պահպանումէ մի անընդհատ հաղորդակցութիւն երկրի ներսի հետ, որ և իւր ներգործութիւնը յայտնի է կացուցանում զանազան հրեղէն, ցամաք և հեղեղուկ մարմիններ դուրս արձակելով: Երկրի վերայ յայտնի են աւելի քան թէ 300 վուլկաններ, և յատկապէս միջին Ամերիկան, որպէս և Զունդա կղզիքը առաւելապէս ճոխ են այդպիսիներով: Վերոյիշեալ վուլկանը եւրոպական է, գտանվելով մի կղզու վերայ, որի ներսը, ինչպէս երևումէ, միշտ խառնակութեան մէջ է ստորերկրեայ կրակի երեսից. այլև նորա բոլոր կերպարանքը ամենայն տեղ ցուցանումէ մեծ վուլկանական ներգործականութեան հետքեր:*

*Հեկլայի ամենաբարձր կատարը նստած է երկու միւսերի մէջ և ունի մի ձիւնալից գոգաւորութիւն, որ նորա վաղեմի բերանն է: Նորա կատարը բաղկանումէ կղկղանքներից, կողքից կան շատ բացուածներ, որոնց միջից, ինչպէս երևումէ, հին ժամանակներում բղխումէր լավա: Այս սարի առաւել սաստիկ արտահոսանքից մինը պատահեցաւ 1755 թուականին: Այս տարու Հոկտեմբերի 17 ումը, առաւօտու 10 ժամին նկատեցին մի մերձակայ տեղում քանի մի երկրաշարժութիւնք, որոնցից վնասվեցան տները: Շուտով, երեք առաջքից դուրս թափվեցաւ ջուր սարից և հեղեղեց բոլոր շրջակայ սահմանը, հինգ մղոն երկայ-*

նութեամբ և մի մղոն լայնութեամբ։ Ջրի հեղեղքը բերեցին իւրեանց հետ սառցեղէն սարեր շատ, ճեղքված սառնամանիքի հատուկտորք, որոնց մէջ նստած էին ապառաժի կտորներ այնպիսի մեծութեամբ որպէս մի տուն։ Բաց ի սորանից ջուրը լցուած էր մոխրով ու չեչաքարով, այնպէս որ ասես թէ երկու տարրքը միաբանվել էին, որ ոչնչացնեն ամենայն բան։ Թանձր ծխային ամպեր բարձրացան դէպ ի երկինք և վառուն քարեր յարձակվեցան դէպ ի ցած սարի լայնատարած շրջակայքումը։ Երբեմն մեծ մեծ լուսափայլ հրագունդեր դուրս էին ձըգվում դէպ ի օդը, վերևումը ճարճատվելով անհամար կտորներ և ցած ընկնելով ամենահեռաւոր տեղերում։ Շատ ահարկու էր մանաւանդ թէ այն գիշերը որ պիտոյ է լուսանար դէպ ի Հոկտեմբերի 18 ը։ Բոլոր երկինքը ասես թէ դարձած էր կրակի ծով և երկիրը պիտոյ է մաշվէր ու սպառվէր հրկիզութենից։ Մի բարձր հրեղէն սիւն, որի միջից կայծակներ ու հրեղէն գունդեր դուրս թռան, այնպէս որ գիշերը լուսափայլ դարձաւ ցերեկի պէս, դուրս երևեցաւ սարի միջից։ Անդադար դոռացք լսելի էր օդի մէջ, երկրի ճարճատիւնը և որոտագին հնչիւնը ապառաժների մէջ այնպէս ահարկու էր, որ 25—30 վերստ տեղ լսելի էին դոքա։ Նոյնքան հեռուից տեսանելի էր և հրեղէն սիւնը։ Նոյեմբերի 7 ից միայն հանդարտեց սարը, դադարեց և որոտումը։ Զարհուրելի էին այս արտահոսութեան աւերածութիւնքը։ Ինչ որ խնայել էր կրակը, առան տարան իւրեանց հետ ջրի հեղեղքը․ մոխիր ու քարեր ծածկեցին դաշտերը և անտառները և աւազը տեղ տեղ նստած էր չորսից մինչև վեց ոտնաչափ բարձրութեամբ։ Այնուհետև գոյացան նոր ժայռեր ու սարեր շատ ծովեզերեայքի մօտ, որ յառաջուց չը կային այն տեղ։ Մօտ 50 կալուածք պիտոյ է բարձի թողի լինէին և նոցա բնակիչքը հասան մուրացկանութեան դաւաղանի։ Բոլոր խմելի ջուրը ապականվեցաւ այն ծծմբային շոգիներից որ արտահոսութեան միջոցին լցուցել էին բոլոր օդը։ Այս շոգիքը այնպէս սաստիկ էին, որ ծանր հիւանդութիւն բերեցին ժողովրդի վերայ։ 1783 թուականին մի այլ սար կրակ փսխեց և սորա լավայից գոյացան հրեղէն լիճեր 8 մղոն լայնութեամբ։ Բոլոր աշխարհը երևումէր թէ դարձել է հալած մետալի նիւթ․ բոլոր հետքերը միանգամ եղած բնակաւորութեան, շէնքերի և կենդանութեան, յանկարծ չքացել էին շատ տեղ շրջակայքումը։

Բայց վուլկաններ կան ոչ թէ միայն ցամաք հողի վերայ, այլև ծովի տակին, որ և ասվումեն

## ՍՏՈՐԵՐԿՐԵԱՑ ՎՈՒԼԿԱՆՔ,

Ինչպէս առաւել նոր ժամանակում եղած մի իրողութիւն ամենևին բացայայտ ապացուցանումէ։ Այս անցքը եղած է 1831 թուակ.

Յուլիսի 8 ին, երբ որ Սիկիլիացի նաւապետ Տրեֆիլետտին իւր ճանապարհորդութեան միջոցին Մալտայից դէպ ի Պալերմօ, անց էր կենում Ներիտայի բուստացանցառքի[1]) մօտ, ոչ հեռի փոքրիկ Պանտալարիա կղզուցը Սիկիլիայի հարաւահայեաց արևմտեան ծովեզերեայքի մօտ։ Այս տեղ, երկու և կէս մղոն հեռաւորութեամբ, դէպ ի հիւսիսահայեաց արևմուտք, նկատեց նա մի մեծ դէպ ի վեր ելանող ջրեղէն բազմութիւն և նաւը ուղղեցուց դէպ ի այն կողմը, Դեռ ևս $^{3}/_{4}$ մղոն հեռի լինելով այն տեղեց, լսեց նա մի որոտանման ձայն, և սորանից յետոյ սև ներկված ջրանիւթը բարձրացաւ ըստ բաւականին շատ, մինչև 82 ոտնաչափ, և այսպէս 10 րոպէ երկար դէպ ի վեր ցայտվեցաւ ջուրը և յետոյ ցած իջաւ, մինչ դորանից յառաջացած թանձր ծխային ամպերը լցուցին հորիզոնը․ այս տեսարանը կրկնվեցաւ 15, 20 մինչև 30 րոպէ անց կենալով միջոցումը։ Ծովի խռովութիւնը զգալի էր և նաւի մօտակայքումը, և սատակած ձկների բազմութիւն լող էին տալիս արդէն ջրի վերայ։ Երեք օր յետոյ, այն տեղից եօթն մղոն հեռաւորութեամբ բացակայ քաղաքումը Շիաքքա անունով, նկատեցին մեծ բազմութիւն թեթև քարերի որ թաւալվելով լող էին տալիս ջրի երեսին, որպէս և նորուց սատակած ձկներ շատ, և Յուլիսի 13 թուակ․ մի հրեղէն սիւն վեր բարձրանալով, ոչինչ տարակոյս չը թողեց այլևս, թէ մի նոր վուլկան գոյացել է ծովի մէջ։

Զորս գերմանացի բնագէտք որ Պալերմօ քաղաքումը լուր էին ստացել այս մասին, ճանապարհ ընկան դէպ ի Սիկիլիայի եզերքը և այն տեղ, ուր հասան նոքա Յուլիսի 24 ին։ Հեռուից արդէն տեսան նոքա մի նոր գոյացած կղզի և մօտեցան նորան $^{1}/_{8}$ մղոնաչափ հեռաւորութեամբ, այլև միտք ունէին ցամաք դուրս գալ այն տեղ, և ահա մի նոր արտաքսութիւն վուլկանի միջից յայտնի ցոյց տուեց նոցա, որ այս տեղ մեծ վտանգ կար։ Բոլոր կղզին ոչինչ այլ բան չէր, եթէ ոչ եզերքը մի հրաբուղխ սարի բերանի 60 ոտնաչափ բարձրութեամբ և 600 ոտնաչափ լայնութեամբ խոռքի մէջ։ Անընդհատ և մեծ սաստկութեամբ բարձրանումէին շոգիք այս լեռնաբերանից և ձևակերպումէին մի մեծ սիւն 2000 ոտնաչափ բարձրութեամբ։ Երեք երեք րոպէամէջ, փայլուն սպիտակագոյն գլխաւոր նիւթի միջից դուրս էին պրծնում սևագոյն կդկղանքի արտաձգութիւնք, այնպէս, որ միմեանց հետ խառնափնդորված շոգեղէն ամպերը թաւալվումէին աւելի սաստկապէս։ Երբ որ բնագէտին ճանապարհորդքը $^{1}/_{8}$ մղոն բացակայութեամբ նկատած էին այս փառահեղ տեսարանը, երևեցան յանկարծ այլ կերպարանքներ, որ

---

[1]) Ամպլիսի բարակ ջրեր, ուր գտանվումեն բուստեղէն (մարջանի) գոյացութիւնք։

աւելի ազդու տպաւորութիւնք էին գործում քան թէ առաջինքը։ Թանձր շոգեղէն ամպերի քամակից եկաւ մի անընդհատ արտաձգութիւն կըկղանքի, աւազի և մոխրի, այնպէս որ լեռնաբերանից սաստիկ արագութեամբ դէպ ի վեր ցայտելով այդ նիւթերը, ութ րոպէ երկար ձևացուցին ասես թէ մի սիւն 600 ոտնաչափ բարձրութենով, որի վերին մասը տարածվեցաւ որայքի պէս։ Դէպ ի վեր նետուած քարերը երևումէին ամենևին սև և նոցա հետ միասին դուրս էին բարձրանում աւազուտ շերտեր։ Նկատելի չէին ոչ բոց և ոչ որոտ, այլ լսելի էր միայն շառաչիւնը և ճարճատիւնը միմեանց զարկվող քարերի· և թէ այս նիւթերը պիտոյ է շատ ջերմացած լինէին, այդ բանը բացայայտ երևումէր այն թանձր շոգուցը որ արձակվումէր ջրիցը, երբ որ այն նիւթերը վայր էին ընկնում։ Արդէն Օգոստոսի 2 թուակ. լեռնաբերանը 200 ոտնաչափ բարձրացաւ ծովի վերայ և կերպարանված կղզին ունէր $^{1}/_{2}$ ժամի ճանապարհ շրջապատ, այնպէս որ Բրիտանացիք ներկայ լինելով այս տեղ, բրիտանական դրօշակը տնկեցին կղզու վերայ և օրինաւոր կերպով տիրապետեցին նորան և անուանեցին Գ ր ա հ ա մ ե ա ն կղզի։ Երկու օր յետոյ, Սիկիլիացիք տիրապետեցին նորան։ Օգոստոսի 12 թուականին դադարեց ծուխը, կղզին բաւական ընդարձակվեցաւ և արդէն Սեպտեմբերի 16 ին ունէր մի շրջապատ $1^{1}/_{2}$ ժամի ճանապարհ։ Ճանապարհորդ մարդիկ որ գնացել էին այդ նոր գոյացած կղզին տեսանելու, հասանելով մի բարձրութեան վերայ որ ունէր 50 ոտնաչափ, հանդիպեցին մի դաշտի որի վերայ կային երկու լիճք, որոնց ջուրը անդադար եռումէր։ Որովհետև բոլոր կղզին բաղկանումէր մոխրից, աւազից, և քարերից, ապա, պիտոյ էր կարծիք առնուլ, որ դա չէ լինելու երկարատև, և արդարև, ահա Դեկտեմբեր ամսումը այդ կղզին կրկին անգամ խորասոյզ եղաւ ծովի մէջ և չքացաւ ամենևին։ Այնու ամենայնիւ, մինչև այսօր, ժամանակ առ ժամանակ նկատած են այն սահմանումը ծխային ամպեր որ բարձրանումէին այն տեղից, ուր եղած էր կղզին։ Շատ և շատ կղզիներ բոլոր ծովերի մէջ պիտոյ է այդպիսի պատճառներից յառաջացած լինին։

Մ. Նալբանդեանց։

# ՀԱՅԱՍՏԱՆ

*Ամենայն առանձին մարդու որպիսութիւն կարելի է ճանաչել միայն, քննելով ու իմանալով նորա կեանքի ընթացքը և այն տեսակ տեսակ պարագայքը որոնց ազդեցութեան տակ կատարվել է այդ ընթացքը· այս տեղ պիտոյ էր մեզ մի ըստ միոջէ հարցաքննել թէ ո՛րպիսի ծնողների զաւակ էր նա, ո՛րպիսի հայրական ու մայրական ձեռքով դաստիարակված էր նա, ո՛վ էին նորա ուսուցիչքը և հոգաբարձուները, և ո՛րպիսի ընկերութեան մէջ չափ ու հասակ էր առել այն մանուկը, որ այժմ որպէս տղամարդ կանգնած է մեր առաջև և աշխարհի վերայ լցուցանումէ որ և իցէ պաշտօնի վիճակ։ Այսպէս ևս կամենալով մեք հասկանալ մի ազգի, մի ամբողջ ժողովրդի որպիսութիւն, պարտական ենք ամենայն կանխակալ (յառաջուց ստացած) կարծիքներ յետ դնելով, անաչառապէս քննել նորա գոյացութեան և աճելութեան առիթները, այսինքն արմատը, հողը և օդի որպիսութիւնը, որոնց ազդեցութեան տակ դաստիարակվել է նա։ Ամենայն ազգ, թէ նորա պարծանքը և թէ նորա ամօթը, հետևանք է նորա պատմութեան· ասել է այն գործերի ու անցքերի, որ եղած են ազգի կեանքի մէջ · և այսպէս ով որ կամի ծանօթանալ իւր ազգի որպիսութեանը, պարտական է ուսանիլ դորա պատմութիւնը, դորա անցեալը որի մէջ դրած է և իւր յատուկ ներկայի բանալին· այսինքն, հասկանալով անցած գնացածը, կարող է հասկանալ նա և ներկայի խորհուրդը, այն պարծանքը կամ ամօթը, որի մէջ գտանվումէ նա ինքը այժմուս · նա կ՚ուսանի այդպէս ճանաչել իւր ազգը և իւր անձը որ ինչպէս անբաժանելի անդամ ազգի, կցորդ ու մասնակից է դորա փառքին և դորա անարգութեանը, որպէս և իւր բարոյական արժանաւորութիւնը ստանումէ նա, լինելով այդ ամբողջութեան մի մասը։ Ա՛յս է ահա մի ազգի պատմութեան խորհուրդը ամենայն մտածող մարդու համար, և ա՛յս է մասնաւորապէս Հայկազնեան ժողովրդի պատմութեան խորհուրդը ամենայն բանական Հայի համար մեր լուսաւոր դարու մէջ։ Մեր օրագրի գլխաւոր նպատակների մինը, ինչպէս ասած է նորա յառաջաբանի մէջ, պիտոյ է լինի նոյնպէս ծանօթացնել մեր սիրելի ազգը իւր ազգային պատմութեան հետ, անաչառապէս մերկացնելով նորա առաջև նորա անցած գնացած կեանքի պատկերը, որպէս հարկաւոր ուսումն, փրկաւէտ խրատ և յանդիմանութիւն մեզ, բոլոր Հայերիս, միայն թէ կամէինք մեր նախահարց փորձերից ուսանիլ, իմաստնանալ և խելացի կերպով ընտրել մեր ապագայ ճանապարհը· և պարտական էինք այդպէս ընթանալ, ասումեմ ես եղբայրաբար ամենայն Հայի, որ դեռ ևս չէ ուրացել իւր հայութիւնը, որ դեռևս ունի իւր մէջ փոքր ի շատէ*

աղնիւ Հայկական զգացմունք, և կամի պատուել իւր անձը ոչ թէ սուտ և խարդախ Հայութեան անունով, այլ իսկապէս լինելով իմաստուն և առաքինի Հայ։

Մինչև այժմ Հայկական մարդը զուրկ է մնացել որպէս անհամար միւս բաների, նոյնպէս և իւր ազգային պատմութեան տեղեկութեննից, մանաւանդ թէ մեր շրջակայքումը։ Եւ ազգային պատմութիւնը որ առաւել ազգու և ներգործող դպրոցն է մի ժողովրդի համար, եղած թէ չեղած, մի և նոյն է եղել դորա համար, ուրեմն և չէ կարողացել դա մինչև այժմ մի բան ուսանել իւր պատմութեննից. պատճառ, Հայոց հընախօս հեղինակների պատմագրութիւնքը անհասկանալի էին ազգին, այլև զանազան պատճառներով դժուարաւ ձեռք բերելի նոցա համար։ Հայոց ուսումնականքը Ռուսաստանումը, փոխանակ այդպիսի անհասկանալի հնախօս մատենագրութիւնք Հայոց պատմութեան վերայ, թարգմանելու աշխարհաբառ և տալու ազգի մարդերին, թարգմանումեն դորանց ռուսերէն, կամենալով, ինչպէս երևումէ, Հայոց ազգին ուսուցանել իւր պատմութիւնը Ռուսաց լեզուով, ինչպէս դարձեալ Ֆրանսիացի պարոն Դիւլօրիէն նոյն բանը կամենումէ ֆրանսիական լեզուով։ Խօսք չունինք, եթէ Ֆրանսիացին կամենումէ մեր Հայոց պատմութիւնը ֆրանսիերէն տալ Ֆրանսիացոց ազգին. խօսք չունինք, եթէ մեր գիտնականքը Ռուսաստանի մէջ ռուսերէն թարգմանումեն մի հին, Հայոց պատմագիրք, այն խորհրդով, որ Ռուսաց ուսումնականներին տեղեկութիւն տային Հայոց ազգի պատմութեանը. բայց Հայոց պատմութիւնը ֆրանսիական և ռուս լեզուով տալ Հայոց ազգին և Հայոց մանուկին, երևումէ մեզ մի անբնական, կարգից ու օրէնքից դուրս, մի պլանդակ բան։ Ոչ մի ազգի մէջ տեսված չէ այդպիսի ապօրէն, ցանցառամիտ գործ. ո՞ր Իտալացին, ո՞ր Ֆրանսիացին, որ Անգլիացին կարո՞ղ էր ջղանալ իւր մէջ այդպիսի խորհուրդ, իւր պատմութիւնը, իւր ազգի մէջ արած գործերը և անցած անցքերը օտար լեզուով աւանդել իւր ազգին, և մտածել թէ այդպէս մի պաշտօն էր կատարում իւր սեփական ազգի համար։ Չէ. այդպիսի պաշտօնի խորհուրդը այն է, որ Հայոց մանուկը և ազգը այնպիսի անօրինակ տգիտութեան ու չհասկացողութեան մէջ էր, որ նա իւր ազգային պատմութիւնը կարո՞ղ է միայն օտարոտի լեզուով հասկանալ, բայց հայերէն ոչ։ Այս ինչ օտարանշան բան է, կը հարցանեն մեր բարեմիտ ընթերցողքը. մի՞թէ կարելի է այդպիսի խաւար դատողութիւն մեր լուսաւոր դարումը, և այն, ուսումնականների մէջ։ Այո՛ կարելի է, պատասխանումենք, երբ որ տգէտ կամակորութիւնը և սրտի խարդախութիւնը և հիւանդոտ պղտորութիւնը, ամենևին կուրացնումեն ուսումնականների միտքը ընդդէմ

ազգի ներկայ պիտոյքներին և կարօտութեանը. և դոքա փոխանակ հասկանալի լեզուով խօսելու ազգի հետ, աւելի լաւ են համարում կամ լուռ մնալ, կամ թէ ռուսերէն խօսել Հայոց ազգի հետ։ Եւ հասկանալի լեզուով ազգի հետ չխօսելու պատճառը ի՞նչ է. որովհետև դոքա միանգամ տնկել են իւրեանց խելապատակի մէջ, այո և հրապարակաւ քարոզումեն թէ աղքատ, անհամ, թոյլ, տգեղ, անհեթեթ լեզու է դա, թէպէտ դոքա, այդ խելացիները, մոռանալով իւրեանց ասածը, ամեն օր կրկին և դարձեալ պղծումէին դորանով իւրեանց շրթունքը։ Բայց կարծեմ, թէ աւելի խոր պատճառ ունի մի քանի ուսումնականների չկամենալը աշխարհիկ հասկանալի լեզուով խօսել ժողովրդի հետ։ Դոցա բերանը, դոցա գրիչը չէ եղած առաջինը, որ ձայն բարձրացրած լինէր, այն ճշմարտութիւնը մերկապարանոց քարոզելու ժողովրդի մէջ, թէ այժմեան Հայերի լուսաւորութիւնը պիտոյ է յառաջ գնայ նոր, աշխարհաբառ, ընկերական լեզուովը, և թէ հին, մեռեալ և անհասկանալի լեզուն անյարմար ու անպտուղ գործիք էր ազգի դաստիարակութեան համար։ Այդ անփոփոխելի ճշմարտութիւնը, թէ պիտոյ է պատուել ժողովրդի և ժամանակի սուրբ իրաւունքը և գործ կատարել հարկաւորութեանը համեմատ, այդ պարզ և մեծ ճշմարտութիւնը չէ քարոզվել դոցա բերանով. ուրեմն և չը կամին դոքա ուշադիր լինել օտարի բերանով քարոզված ճշմարտութեանը, ըստ որում այդ ճշմարտութիւնը և դորա իրագործութեան պտուղքը այլ մարդու պարծանք էին. բայց դոցա մասնակցութիւնը ճշմարտութեան հետ այնպէս է, որպէս կուրացած բռնակալների անձնապաշտութիւնը. եթէ կամին դոքա, կ՛ընդունեն ճշմարտութիւնը, երբ որ դա շահաւէտ էր իւրեանց անձնապաշտական խորհուրդներին. եթէ ոչ, ապա ոչինչ էր ճշմարտութիւնը և բան չունէր նոցա հետ. որպէս թէ ճշմարտութիւն ասած բանը պիտոյ է մեզ յարմարվի, և ոչ թէ մեք նորան։

Թոյլ տալով այդ ուսումնականներին յառաջ տանել իւրեանց ցնորամիտ և պղտոր կամեցողութիւնը, միայն թէ հնար էր դա մեր ժամանակներումը, վերադառնանք մեք դէպ ի մեր նպատակը, որ է ուսուցանել ազգին իւր պատմութիւնը. և այս ճառի մէջ դիտաւորութիւն ունինք պատմութենից յառաջ ծանօթացնել մեր ազգը Հայաստանի բնական, աշխարհագրական և տեղագրական որպիսութեններին, որովհետև մի ազգի պատմութիւն, առանց նորա աշխարհագրական և տեղագրական պայմաններին ուշադիր լինելու, անկարելի է հասկանալ։ Դոքա ազգի պատմութեան հիմունքն ու շրջանակներն են, որոնց վերայ և որոնց մէջ աճել է, զօրացել է և նուաղելով հասել է ազգը մինչև այս տեղ. և այս բաները ուսումնասիրելով մեք, պարտական ենք աշխատել վերստին

նորոգելու մեր հայրենիքը բարոյապէս և մտաւորապէս, .քաջ միտ դնելով այն պայմաններին, որոնց տակ իմաստութեամբ դաստիարակիչ նախախնամութիւնը դրել է մեր Հայոց ազգը։

## 1· ԲՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ։

Հիւսիսային լայնութեան 37 և 42 աստիճանների, այլև արևելեան երկայնութեան 50 և 65 աստիճանների մէջ, հաշուելով Ֆերրօ կղզու մերիդիանից (միջօրէական շրջանակից), բայց համարելով Գրինուիչի մերիդիանից, 32 և 84 աստիճանի մէջ պարզվելով փոքր Ասիայի մակերևոյթը, բարձրանում հսկայաձև ուռոյցքով, որ կերպաւորէ մի լեռնակղզի, որ սահմանված էր լինելու միջին յօդը փոքր Ասիայի և Իրանի մէջ։ Այս լեռնադաշտակը ձևացնում մի եռանկիւնի, որի հիմքը նշանակվում այն գծովը որ քարշվում Կասպից ու Սևու ծովի մէջ և կտրում միջից Թիֆլիզը, Գօրին, Սուրամը և Քութայիսը, սկսեալ Կուրի գետաբերանից մինչև Րիօնի (հին Փասիսի) գետաբերանը։ Այս եռանկիւնու գագաթնածայրը, Ալէքսանդրեան ծովախորշի մօտ (Սիրիայի և փոքր Ասիայի միջոցում) զուգաւորվում միջերկրական ծովի հետ, մինչ միւս գիծը ձգվելով Րիօնի գետաբերանից մինչև յիշեալ ծովախորշը, ձևակերպում նորա հիւսիսահայեաց արևմտեան կողմը, իսկ երրորդ գիծը սկսեալ նոյն ծովախորշից մինչև Կուրի գետաբերանը, Վանայ և և Ուրմիայի լճերի մէջ, սահմանում նորա հարաւահայեաց արևելեան կողմը։ Այս լեռնաշխարհը Հայաստանն է, եթէ նկատենք նորան, միտ դնելով բնական սահմաններին, որոնցից առ հասարակ սակաւ միայն խոտորվումեն և քաղաքականքը։ Աշխարհի ներսը լցուցանումեն 2600 մինչև 6000 ոտնաչափ բարձրանալով ծովի վերայ լեռնադաշտեր, որ ըստ մեծի մասին պարզվումեն արևելքից դէպ ի արևմուտք· սյս լեռնադաշտերի, իբրև իւրեանց հիմքերի վերայ, մի տեղ, բաժան բաժան վեր են ցցվում 16000 ոտնաչափ բարձրութեամբ կոնոնաձև (սրածայր) սարեր որոնց մեծ մասը ցուցանում հանգած վուլկաններ (հրաբուղխ սարեր)· միւս տեղ, տարածվումեն անչափելի դաշտերի շղթայակապք։ Սոցա մէջ առաւել նշանաւոր է Ալա-Դաղը, որ սկսանելով Արարատից մինչև Եփրատի երկու աղբիւրները, տափարակ երկիրները բաժանում հարաւային և հիւսիսային կիսամասն։ Հարաւային կիսաբաժնումը հանդիպումենք արևելեան Եփրատի լայնաձիգ ձորադաշտին, որ Մուշ քաղաքի մօտ բարձրանում մինչև 4100 ոտնաչափ ծովի վերայ· հիւսիսային կիսամասնումը դրած են լեռնադաշտակքը Բայազիդի, Արզրումի (5580 ոտնաչափ) Ղարսի, Ախալցխի և Երևանի (2680 ոտնաչափ)։ Առաւել ուշադրութեան արժանի կոնոնաձև սարերը հանդիպումեն մեզ

*Երևանի հողի վերայ, զոր օրինակ երկուգլխանի Արարատը (որին ասում է Տաճիկը Ագրի Դաղ, բայց մեք Հայերս Մասիս) որ հին աշխարհի ամենաբարձր կոնոնաձև սարն է, որի անունը յիշատակվելով արդէն մարդկային ազգի ամենահին պատմագրութեան մէջ, ստացել է սրբութիւն որպէս Նոյ նահապետի փրկութեան իջևանը համաշխարհական ջրհեղեղի երեսից։ Մեծ Արարատը, մօտ դնելով Պարրոտի բարօմէտրական չափմանը, բարձրանում է 16,234 փարիզեան ոտնաչափ, հաշուելով ծովի երեսից, բայց 13,254 ոտնաչափ, համեմատելով շրջակայ տեղերի հետ[1]. փոքր Արարատը բարձրանում է 12,284 ոտն. ծովի մակերևութի վերայ[2], և Ալագեազը որ Արարատի պէս երևում է թէ հաստատվում էր Աղբուլաղի վերայ որ է հարաւային ճիւղը Տաւրոսեան սարերի, մէջքը տալով փամբակեան սարերի գօտուն որ է հիւսիսահայեաց արևելեան ճիւղաւորութիւնը Տաւրոսի, իւր ատամնաւոր ժայռապսակովը ցուցանում է, ինչպէս հաւանական է, ահագին կատարքը և փլատակված եղերքը մի հրաբուղխ սարաբերանի որ սաստիկ դէպ ի վեր է բարձրանում մինչև 12870 ոտն. ծովի մակերևութի վերայ։ Հայաստանի լեռնադաշտակը, դէպ ի ամենայն կողմ հակվում է ձևակերպելով ցած հողեր։ Ա) Հիւսիսահայեաց արևելեան և հիւսիսային եզրը Հայաստանի այն տեղից ուր Արաքսէս (Արազ)գետը դուրս է երևում, այսինքն արևելեան երկայնութեան 60 աստիճանի տակ, տարածվում է հարաւահայեաց արևելքից դէպ ի հիւսիսահայեաց արևմուտք. դէպ ի հիւսիսահայեաց արևելք և դէպ ի հիւսիս ցածանում է նա Կուր և Րիոն գետերի դաշտավայրերի վերայ և առաւել մօտենալով Կովկասին 61 և 62 արևելեան աստիճանների մէջ, ճեղքվում է Կուրի ընթացքովը. դէպ ի հարաւ և հարաւային արևմուտք մէջքը տալիս է նա Ախալցխի, Ղարսի, Երևանի և Նախիջևանի լեռնադաշտակներին։ Այս կենդանագիր լեռնալարդ աշխարհը կերպարանվում է շատ և զուգահեռաբար ձգված սարերի շղթաներից որ մինը միւսի վերայ, հողաբլուրների պէս դէպ ի վեր են ելանում բարձրանալով Բեզօբդալումը մինչև 6270 ոտն. և նշա-*

---

[1]) *Այս մասին մեծ Արարատը ոչ թէ միայն գերազանց է Չիմբօրասոյից որ բարձրանում է Տալխայի տափարակի վերայ* 12,200 *ոտնաչափ, և որի միջակ բարձրութիւնը ծովի մակերևութի վերայ պիտոյ էր հաշուել* 8900 *ոտն., այլև Կոտոպաքսի սարից որ բարձրանալով Քվիտոյի և Թաքունգի ձորերի վերայ* 9590 *ոտն. կարող էր առաւելապէս համեմատվիլ մեծ Արարատի հետ, իւր հսկայաձև կերպարանքի և զուգապատշաճ ձևակերպութեան մասին. Տես պրօֆէսսոր Աբիխի գրուածը* Ueber die geologische Natur des armenischen Hochlandes. *Դօրպատ,* 1843. *երես,* 15.

[2]) *Հեռաւորութիւնը մեծ և փոքր Արարատի կատարների մէջ, ֆէօդօրովի սահմանելովը, ճշտապէս բաղկացնում է* 35,064 *փարիզեան ոտնաչափ։*

նաւոր են իւրեանց պորփիւրեան, բազալտեան և տրախիտեան սարերով։ Այս զուգահեռաբար երկայնված շղթաների մէջ պարզվումեն առատաջրւր լեռնադաշտակներ։ Երեք գլխաւոր ճանապարհներ տանումեն կուրաձորի միջից, անցանելով Հայաստանի հիւսիսահայեաց եզրից. մինը Թիֆլիզից Գօրու և Սուրամի վերայով դէպ ի Քութայիս, միւսը Թիֆլիզից դէպ ի Երևան, երրորդը Թիֆլիզից Ելիսաբեթօպօլի (Գեանջայի) և Շուշու վերայով դէպ ի հին Նախիջևան։ Բ) Հայաստանի հարաւահայեաց եզրը, կամ թէ Քուրդստանի լեռնաշխարհը տարածվումէ հիւսիսային լայնութեան 39 և 37½ աստիճանի մէջ, հաշուելով Ֆերրօ կղզու մերիդիանից, և արևելեան երկայնութեան 62 և 55 աստիճանի մէջ։ Առաւել ներքին և բարձր լեռնագօտին այս տեղ երևումէ Ալա-Դաղը, որ է Ելբրուսի և Իրանի հիւսիսային եզրի շարունակութիւնը. Նա իւր, մշտնջենաւոր ձիւնով պատած կրանիւթ սարերովը, որ Զուդգա-Դաղումը բարձրանումեն մինչև 1300 ոտն. գօտևորումէ Վանայ լճի տարածութիւնը և դէպ ի հիւսիս, անմիջաբար կողքը առլիս է այն լեռնադաշտակներին ուր անցանումէ հիւսիսային հօսանքը Եփրատի։ Մի քանի դժուարացուցիչ նեղ ճանապարհներ, որոնց կարգումն է Բիթլիզի ճանապարհը, տանումեն այս շղթայի մօտից։ Ալա-Դաղից դէպ ի հարաւ ձգվումէ աստիճան առ աստիճան վեր ելանելով մի բարձրութիւն, ուր Տիգրիս գետը Դիարբեքիրի ձորադաշտումը հօսումէ դէպ ի արևելք, իսկ Եփրատը մի փոքր տարածութեամբ դէպ ի արևմուտք։ Այս բարձրութիւնը դէպ ի հարաւ սահմանակից է Կարա-Դաղին (որ ասվումէ Մասիոս Ստրաբոնի աշխարհագրութեան մէջ) որ արևելքից դէպ ի արևմուտք բարձրանալով մինչև 3000 ոտն և լինելով Իրանի արևմտեան եզրի շարունակութիւնը, բաժանումէ նորան Մեսոպոտամիու (Ասորոց միջագետի) բարձրութեան նախադուռն-սանդուղներից։ Գ) Արևելեան եզրի մօտից, գնալով Ադրբեժանից (Ատրպատականից) հանդիպումենք մեք հետ ըհետէ վերելքին դէպ ի Հայաստանի լեռնադաշտակը. շարունակ դաշտավայրեր տարածվելով արևելքից դէպ ի արևմուտք, բաժանումեն միմեանցից այդ աստիճանաւոր վերելքը. Նոցա վերայից տանումեն ընդհատվելով նեղ ճանապարհներ, որ միաւորումէին իւրեանց մէջ հօղաբլուրներ։ Այն ճանապարհի վերայ որ Թավրիզից գնումէ դէպ ի Բայազիդ, երևումէ Խոյի դաշտավայրը. յառաջ գնալով Զաւլիէ և Կարա-Այնա տեղերից, երևումէ Բայազիդի լեռնադաշտակը կտրատվելով թեթև և ալիքանման սարերից։ Այս տեղ, առաջին անգամ, նկատողի աչքի առաջև հանդիսանումէ արծաթափայլ կատարը Արարատի։ Դ) Արևմտեան եզրի մօտից, այլև արևելեան կողմումը, աստիճանաւոր վերելքով բարձրացող հօ-

*ղերի միջնորդութեամբ կերպաւորվում մի շեղանկութիւն դէպ ի սեաւ ծովի եզերքը և դէպ ի աւելի ցածադիրք լեռնադաշտակները փոքր Ասիայի։ Այն ճանապարհը որ Արզրումի* 5500 *ոտնաչափ բարձրացող տափարակից տանում դէպ ի Տրապիզոն — որ* 25 *գերմանական մղոնի կամ* 245 *վերստի միջոց է — պահանջում սարերի շղթայի վերայից ցած գալ դէպ ի Բայբուրթի միջին աստիճանաւոր վերեւքը որոնց վերայից անցանում Ճորոխ գետը, իսկ յետոյ, միւս ցած սարերի գծի վերայով դէպ ի Պոնտոսեան ծովի եզերքը։ Այն սահմանների վերայ որ ձգվումեն Արզրումից դէպ ի Թոխաթ կամ Սիվաս, միջին աստիճան առ աստիճան բարձրացող աշխարհը կերպաւորում Կարայի ձորադաշտը· աւելի դէպ ի հարաւ, ձեւացնում Մալաթիայի կամ փոքր Հայաստանի ձորադաշտը որի միջից հոսում Եփրատ գետը։*

## 2· ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ·

*Հայաստանի լեռնադաշտակի ձեւակերպութիւնը ամենևին յառաջացել է վուլկանական պատճառներից, այսինքն հրաբուղխ սարերի զօրութեամբ եղած փոփոխութեններից· Յառաջ քան թէ դուրս էին երեւած հողեղէն նիւթերը, հաւանական է թէ Հայաստանի տեղը ցուցանումէր մի ծովապատ դաշտ, որի մնացորդքը ձեւացնումեն այժմուս Կասպից լիճը։ Գլխաւոր կարծրացած նիւթերը այս դաշտի բաղկացնումէին կաւեղէն սեաքարը* (schiste), *մոխրագոյն քվարցը* (quartz melé de schiste et de mica), *Իւրայական կրանիւթ գոյացութիւն, կաւիճ և երրորդակարգ կերպաւորութիւնք։ Այս նեպտունական (ջրհեղեղի զօրութեամբ յառաջացած) գոյացութիւնքը զանազան ժամանակներում, պլուտոնական (ստորերկրեայ) և վուլկանական նիւթերի զօրութեամբ դէպ ի վեր մղվեցան և նոցա դրութեան յարակցութիւնքը գորանով այնպէս խախտվեցան, որ այժմ այդ առանձին կերպաւորութիւնքը հանդիպումեն միայն շատ զանազան բարձրութեամբ ծովի մակերեւութի վերայ։ Վուլկանական զօրութիւնք ներգործական էին մանաւանդ, այն միջոցին, երբ որ Հայաստանի լեռնաքամակները վեր բարձրացան։ Դոքա իւրեանց սկզբնական տեղերը խախտելով խառնափնդորել են հին տեսակները սարերի, մանաւանդ թէ պորփիւրեան, տրախիտեան և բազալտեան քարերը հիւսիսային եզրի և Մոսխիկեան սարերի կարգի, նոյնպէս և երկրորդակարգ կերպաւորութիւնք, որ այժմ լցուցանումեն Կուր և Փասիս գետերի ձորը։ Այս յեղափոխութեան միջոցումը, վուլկանական քարերի մէջ յառաջացան խոր պատառուածք, որ այժմ սպասաւորումեն որպէս ջրանցք, զոր օրինակ Կուրի, Խրամի և Տեբեթէի գետաձորերը։*

Հայաստանի լեռնադաշտերը, այժմուս ցուցանումեն վուլկանական ամփիթէատրոնների կատարեալ լաբիրինթոս․ այս տեղ բարձրանումեն անհամար հրաբուղխ սարեր, որոնց բացուածքը տեղ տեղ լցուած են ջըրով․ զոր օրինակ, ծծմբային կոնոնասարը Ալագեզի որ եղած է մի ժամանակ զօրաւոր վուլկանական ներգործականութեան կենտրոն, և որի փլատակված լեռնաբերանը ձևացնումէ այժմ քաղցրաջուր լիճը Սևանու կամ Գոգչայի, հնումը ծով Գեղամայ [1]), որ Զանգու գետովը ցած է հոսում դէպ ի Երասխը (Արազը)․ այլև, կոնոնասարերը փոքր և մեծ Արարատ են միայն գլխաւոր օղերը, այս վուլկանների շղթայակապի մէջ, ուր տրախիտ, բազալտ, պորփիւր, լավայք և կղկղանք բաղկացնումեն գլխաւոր քարատեսակները։ Այս կենտրոնական հրաբուղխ սարերից շատ անգամ եղած են վուլկանական արտահոսութիւնք, հեղեղելով Հայաստանի բարձրութիւնքը։ Ուր և դարձուցանէինք մեր աչքը, ամենայն տեղ հանդիպումեն մեզ սեաւ և ծծմբային լավայի հեղեղք միայն, չեչաքար կամ օբղիդիան, կղկղանք միայն, թրաս կամ բազալտ խառնած պորփիւրի և աւգիտ-պորփիւրի հետ։ Այն միջոցին, երբ որ Հայաստանի լեռնաշխարհը ծովի խորքից դէպ ի վեր բարձրացվեցաւ, ծովը յետ թողեց կէս մի բաւական մեծ մնացուածք, որպէս Վանայ և Ուրմայի լիճերը, և կէս մի աղի վայրասուզութիւնք որ ուղիղ ցած են իջանում մինչև 4—500 ոտնաչափ։ Այդպիսի աղի վայրիջուածք, որ տալիս են շատ յստակ, բիւրեղանման գործածելի աղ, կամ թէ որպէս հալուածք բովանդակվումեն աղի լճերի մէջ, հանդիպումեն մեզ Հայաստանի զանազան տեղերումը․ զոր օրինակ Կողպումը, Երևանու լճի մէջ, Սալիանի շրջակայքումը։ Հայաստանի հրաբուղխ սարերի վառարանը չէ հանգած դեռ ևս․ դա շարունակաբար ցուցանումէ իւր ներգործութիւնը ոչ թէ իւր ջերմ հանքային աղբիւրների մէջ, որոնց կարգումն են տաք ծծմբային բաղանիքները Թիֆլիզի, 32 աստիճան ջերմութեամբ (հաշուելով հարիւրաստիճանեայ ջերմաչափի վերայ), այլև անդադար նոր ի նորոյ պատահող աւերիչ երկրաշարժութենների մէջ, որոնց գըլխաւոր տեղը է Արարատը։ Հայաստանը առատ է ազնիւ հանքերով, մանաւանդ թէ մետալներով․ առաւել հռչակաւոր հանքերը գտանվումեն այս տեղերումս, որ են Գիւմիշխանէ, Քուրէ, Բայբուրթ, Մադան, Արղանա, Ալլահվերդի, Շամլուղ և Ախթալա․ սոքա տալիս են ոսկի, արծաթ, արճիճ (կապար), առաւելապէս պղինձ և երկաթ։ Բաց ի սո-

---

[1]) Դիւբօա դը Մօնպերրէօ (Dubois de Montperreux) իւր գործի մէջ, որ է Voyage autour du Caucase, հատ 3, եր. 304, համարումէ Սևանայ լճի երկայնութիւնը 19 ֆրանսիական մղոն, իսկ առաւել մեծ լայնութիւնը 8 այդպիսի մղոն, ընդունելով նորա բարձրութիւնը ծովի մակերևութի վերայ, մօտաւորապէս 5000 ոտնաչափ։

ցանից մեք գտանումենք Սաղլիքումը և այլ տեղ Արսենիկի (մկնդեղի) և պաղլեղի փոսեր ։

## Յ· ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԵՐԸ·

Հայաստանի գետերը, բաց ի մի քանիքից, պատկանումեն չորս ջրասահմանների, որ են Եփրատ, Տիգրիս, Երասխ (Արաքսէս, Արազ) և Կուր գետերի ջրասահմանքը ։ Եփրատը գոյանումէ երկու աղբիւրային գետերից, որ են Մուրադ-Չայը կամ արևելեան Եփրատը որ դուրս է բղխում դէպ ի Դիադինի հարաւային կողմը 6000 ոտնաչափ բարձրութեամբ ծովի մակերևութի վերայ. և Կարա-Սուն կամ արևմտեան Եփրատը որ սկսանումէ Արզրումի հիւսիսակողմից ։ Այս հեղեղատը, երկու աղբիւրային գետերը միաւորվելուց յետոյ ևս, պահպանումէ իւր Մուրադ-Չայ անուանակոչութիւնը մինչև Էլ-Բիր սահմանը Հայաստանի. սկսեալ այս տեղից ասվումէ նա Եփրատ ։ Մալաթիայից մինչև Էլբիրը պատառումէ նա Թորոսի (Տաւրոսի) սարերը և կերպաւորումէ ջրվէժների բազմութիւն և սրընթաց հոսանքներ շատ իւր ընթացքի մէջ ։ Տիգրիսը գոյանումէ նոյնպէս երկու աղբիւրային գետերից, որոնց արևելեանը, այսինքն Արգենի Թեւը, Սերտի մօտ ընդունելով դորա բազուկը, գալիս է Քուրդստանի սարերի արևմտեան սահմանից, այսինքն Բիթլիզից, և վազելով գեղեցիկ լեռնաւէտ աշխարհի միջով, միանումէ սրընթաց, արևմտեան, աղբիւրային գետի հետ, Դիարբէքիրի բազուկի հետ, որ ունի իւր աղբիւրը Ալադաղի մէջ ։ Այսպէս միացած գետը պատառումէ յետոյ Կարա-Դաղը և Մօսուլի մօտ սկսանումէ իւր միջին ընթացքը ։ Երասխը դուրս բղխելով Ալա-Դաղից, վազումէ լայն լեռնադաշտակի վերայով դէպ ի արևելք և հարաւահայեաց արևելք և ահագին դռացքով պատառումէ իւր յառաջագնաց ճանապարհը արևելեան երկայնութեան 62½ աստիճանի տակ ։ Այնուհետև, իւր միջին ընթացքի մէջ, նախ և յառաջ վազումէ հեղեղատը արձակ լեռնադաշտակի վերայով մինչև Մաղրի. այս տեղից պատառելով Հայաստանի հիւսիսային եզրը, ձևացնումէ իւր ընթացքի մէջ սրարշաւ հոսանքներ շատ ։ Այս սրընթացութիւնը Երասխի բացայայտ երևումէ և հռոմէական բանաստեղծ Վիրգիլիոսի խօսքերից Pontem indignatus Araxes, այսինքն թէ Երասխը թոյլ չէ տուել կամուրջ ձգել իւր վերայ ։ Երասխի ստորին հոսանքը վազումեն Ղարաբաղի դաշտերով, մինչև նա Ջաւաթի մօտ միանումէ Կուր գետի հետ ։ Կուրը գոյանալով Ղարսի մօտակայքումը, մինչև Թիֆլիս վազումէ շատ ձորերի ելևէջքով որ բաժանվումէին միմեանցից նեղ ճանապարհներով ։ Այս գետը թէպէտ լի է

*շրջանապտոյտներով և սրընթաց հոսանքներով իւր գնացքի շատ մասներումը, բայց Թիֆլիսից դէպ ի ցած նաւարկելի է փոքրիկ նաւերով։ Կուրը իւր ստորին ընթացքումը, սկսանելով Մինգեչաուրի սրարշաւ գետահոսութենից, վազում մի ցած դաշտավայրով որ գոյացած է Կուր և Երասխ գետի իւրեանց հետ բերած տղմով ու աւազովը, այլև կասպից ծովի ալէկոծութենից։ Այս տեղ ձևացնում մի Դելթա (գետաբերանի նախագաւիթ սահման) որով երկու գետերը միանալով թափվումեն կասպիական ծովի մէջ։ Հայաստանի ջրերի վերայ պիտոյ է յաւելացնել և նորա դադարուն ջրերը, այսինքն լճերը կամ ծովակները։ Սոցա կարգումը արժանի են յիշատակութեան կապուտան կամ կապուտակ լիճը (այժմ Ուրմիայի ծովակ) Մարաստանի մէջ. Գեղամայ ծովը (որ ասվում և Գեօքչա լիճ) Սիւնեաց Գեղաքունի անունով գաւառի մէջ. սորա մէջ գտանվում մի հատ կղզին Սևանու, ուր և կայ Հայոց վանք և աբեղայք։ Ծով Վանայ կամ Աղթամարայ, որ ասվում և ծով աղի. սորա ջրերի մէջ գոյանում այն մանր համեղ ձուկը որ հռչակաւոր է Տառեխ անունով։ Այս տեղ է կտուց անապատ կղզին։ Վերջապէս Տոսպայ լիճը որի միջից անցանում Տիգրիս գետը։*

## Կ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՂԱՆԱԿԸ ԿԱՄ ՕԴԵՐԻ ՈՐԴԻՍՈՒԹԻՒՆԸ.

*Հայաստանը բաժանվում երեք տեսակ եղանակի աշխարհներ. այսինքն 1) անձրևային աշխարհ մի այնպիսի կլիմայով որ սեփական է Արևադարձերի տակ դրած սահմաններին. 2) փոփոխական եղանակով սահմաններ և 3) միշտնջենաւոր ձիւնով պատած գաւառներ։ Ա. Անձրևային աշխարհը պարունակում իւր մէջ Կուր գետի ձորը սկսեալ Թիֆլիսից մինչև կասպից լիճը, գետեղերերեայ դաշտավայրքը Գուրիայի և ձորասահմանը վերին Տիգրիսի։ Միջակ եղանակը տարու մէջ լինում 16°, 5 Հ.[1]), Թիֆլիսումը մօտ 15°, 6.։ Այս տեղ անձրևային գարունը շարունակվում փետրվարից մինչև մայիս. ամառան միջոցին, սկսեալ մայիսից մինչև սեպտեմբեր, չոր ջերմութիւնը կուրաձորի մէջ հասանում մինչև 37° և 40° և աւելի ևս։ Այս ջերմութիւնը լինում այնքան անտանելի, որ երեք ժամ կէսօրից յառաջ և վեց ժամ կէսօրից յետոյ ստիպուած էր ժողովուրդը մնալ տների մէջ։ Եւ գիշերները շատ հովարար*

---

*[1]) Ծանօթացանենք այս տեղ միանգամ մեր ընթերցողների համար, որ այսպիսի ձևախօսութիւնը 16, 5 Հ. նոյն է, եթէ ասէինք 16 ու $^{5}/_{100}$ աստիճան հարիւրաքանակ ջերմաչափի վերայ։ Բայց թող մեր ընթերցողքը չը վախեն այսպիսի գիտնական ձևախօսութենից. այլ տեղերում աւելի մանրամասնաբար կը խօսենք նմանապիսի առարկաների վերայ։*

չեն և լինումեն վշտացուցիչ մանաւանդ, երբ որ մժեխները, ինչպէս հանդիպումէ մի քանի կողմերում, վերայ են յարձակվում։ Այս հանգամանքը հարկադրումէ բնակիչքը գիշեր անցուցանել տափարակ տանիքների վերայ կամ թէ արձակ երկնակամարի տակ, կամ թէ վրանների մէջ։ Այս այրող կիզող տօթից ազատվելու համար, թափառական ազգերը որ բնակումէին կուրաձորի մէջ, իւրեանց հօտերով միասին հեռանումեն դէպ ի սարերը։ Օգոստոսի վերջումը նուաղումէ ջերմութիւնը· փոթորիկներ ու անձրևներ յառաջացնումեն մի քաղցր հովութիւն, բայց բոլոր աշնան միջոցին լինումէ ջերմ։ Ոչ յառաջ, քան թէ դեկտեմբերից և յունվարից սկսանումէ ձմեռը։ Խոնաւութեան վայրաբերութիւնքը են ըստ մեծի մասին անձրև· գիշերային սաստիկ ցուրտեր և խոր ձիւներ պատահումեն շատ սակաւ։ Մի թոյլ և կարճատև ձմեռից յետոյ, երկիրը զարդարվումէ մի փառաւոր կանաչութեամբ, որ տալիս է առատ կերակուր հօտերին։ Շատ գեղեցիկ է Թիֆլիսի գարունը· այս տեղ ծաղիկները և ծառերը կարճ միջոցում պատկերացնումեն քո առաջև իւրեանց կեանքի բոլոր մեծվայելչութիւնը և լիակատարութիւնը· օդը յեղափոխվումէ մի անուշահոտութեան ծով, ամենևին հակառակ այն ժահահոտութեանը որ այդ միջոցին թագաւորումէ Ռուսաստանի մեծամեծ, այո և մայրաքաղաքների մէջ։

Բ. Փոփոխական եղանակի սահմանքը բովանդակումեն իւրեանց մէջ լեռնադաշտակներ, եզերական սարեր և դաշտավայրերի շղթայակապք շատ զանազան չափով բարձրանալով ծովի մակերևութի վերայ։ Այս պատճառով ահա տեսանվումէ այս տեղ անչափ մեծ բազմօրինակութիւն կլիմայի։ Այն միջոցին, երբ Կարագիսսարի դաշտավայրումը թագաւորումէ հարաւային Եւրոպայի կլիմայ, և ցորեանը յունիսի վերջումը կամ թէ յուլիսի սկզբումը լիք լիք հասկ է կապել, կամ թէ հունձը ժողոված էր ահա, եզերական սարերի ելևէջքի վերայ հանդիպումէ մեզ միջին Եւրոպայի եղանակ· այս տեղ կարելի է ժողովել հունձերը օգոստոսի և սեպտեմբերի մէջ միայն։ Հայաստանի լեռնադաշտակներին սեփական է ընդհանրապէս շատ խոշոր եղանակ, և մանաւանդ թէ մի խիստ ձմեռն և կարճ ամառն, որի միջոցումը թէպէտ ջերմ էին օրերը, բայց գիշերները մնումեն միշտ ցուրտ։ Արզրումի լեռնադաշտակի վերայ ձիւն է գալիս հոկտեմբերին արդէն, և դեռևս յունիսին ծածկած են ձիւնով ցած բարձրութիւնքը։ Պատահումեն տարիք, որ շատ տեղ ձիւնը երբէք չէ հալվում· մի փոքր աւելի ջերմ է արևելեան Եփրատի լեռնադաշտակի վերայ։ Այս տեղ յունիսի սկզբումը, երբ որ բարձրութիւնքը դեռ ևս ծածկած են բաւական շատ ձիւնով, կանաչումեն ծառերը, և սերմանածը աճել էր արդէն ոտնաչափ բարձրութեամբ։ Կարսի

մէջ սառչում է ջուրը գիշերով, յուլիս ամսումը։ Երևանի բարեխառն դաշտերումը ձիւն է գալիս և ապրիլի մէջ, թէպէտ այս տեղ աճումէին միրգ, խաղող, բրինձ և բամբակ․ բայց Երևանի ձմեռը շատ ցուրտ է, և այս պատճառով ողկուզենիքը (խաղողի ծառերը) Երևանի շրջակայքումը, որ տալիս էին պատուական գինի, պիտոյ էր շեղել դէպ ի հողի տակ, որ չը փճասվէին ցրտից։ Հայաստանի երկնակամարի յատկացուցիչ բնաւորութիւնը, որ զանազանում է նորան միւս փոքր Ասիայից, որին սեփական է ցամաքահողի կլիմայ, է շատ խիստ ներհակութիւնք որ գտանումեն գիջային օդակոյտերից զանազան եղանակով, որ և յաճախ հաւասարվումեն սաստիկ փոթորիկների և կարճատև ձիւների ներգործութեամբ, ձմեռան միջոցին, և հարևանցի անձրևի ու կարկուտի զօրութեամբ, ամառան ժամանակին։ Հիւսիսից սառն հողմեր անխափան հասանելով Հայաստանին, հանդիպումեն այս տեղ հարաւային և արևելեան հողմերի, որ և առանց դորան պաղումէին նորա դաշտավայրերումը։ Այս հողմերը աշխա պատճառ էին այն սաստիկ և յաճախ փոթորիկներին որ միշտ եղած են մի ահաւոր բան եզերաշրջիկ նաւարկուների համար սևաւ ծովի վերայ։ Գ․ Մշտնջենաւոր ձիւնի սահմանը պարունակում է իւր մէջ առաւել բարձր տեղերը այս լեռնաշխարհի․ սկսանելով Արարատի մօտ 13,300 ոտնաչափ բարձրութենից, իջանում է նա հիւսիսային զառիթափերի մօտից աւելի քան թէ 1000 ոտնաչափ դէպ ի ցած։

## 5․ ՀՈՂԻ ԲԵՐՔԸ․ Ա․ ՎԱՅՐԵՆԻ ԲՈՒՍԱԿԱՆՔ․

Բուսական սահմանքը Հայոց լեռնաշխարհի յայտնի են դեռևս շատ անկատար կերպով։ Եզերական սարերի ցած սահմանները պատած են մշտականաչ ծառերով․ աւելի բարձր սահմանների անտառքը բաղկանումեն սօսի, ընտանի կաղին և շագանակի ծառերից, վայրենի կաղիններից, կաղամախ, հացի, աշնոս, նոճի և միւս ասղատերև ծառերից։ Մեծ Արարատի ոտքումը հանդիպումեն հաստաբուն ընտանի կաղիններ, ծիրանի ծառեր, ուռենիք և իտալական կաղամաղներ դեռևս 6000 ոտնաչափ բարձրութեան վերայ․ և աշնոսքը (բերեօզայք) աճումեն մինչև 7000 ոտն․ բարձրութեամբ։ Աւելի վերին սահմանքը զգեստաւորված են թուփերով և ալպեան բուսականներով, որ ընդհանրապէս հաւասար են Պիրինէյեան և Շվեցիայի Ալպեան սարերի բուսականներին։ Կերաստիոնը (Cerastium) է ամենից առաւել բարձրագիր աճեցականը որ ծաղկում է Արարատի ոտքումը։

## Բ. ՏՆԿԱՐԿՈՒԹԵԱՄԲ ՅԱՌԱՋԱՑԱԾ ԲՈՒՍԱԿԱՆՔԸ.

Նզերական սարերի ստորին սահմաններումը սերմանումեն բրինձ, եգիպտացորեան (սմինդր), ցորեան, գարի, մի փոքր վարսակ, Սեզամ (կունջութ), կանեփ, կտաւատ, բամբակ, զաֆրան, տորոն: Երևանի սահմանումը տնկումեն պատուական ողկուզենիք, և փշատի ծառեր (Oleander Elacagnns): Մրգաբեր այգիների մէջ աճումեն զանազան պտուղներ, բոլոր տեսակները եւրոպական մրգեղէնի, սեխ, ձմերուկ, վարունկ և այլ տնտեսական բանջարներ: Հայաստանի մերկ և անծառ լեռնադաշտերի վերայ մրգաբեր ծառերը կարող են աճել այն սահմաններումը միայն, որ աւելի ցած դրութիւն ունին, զոր օրինակ Երևանի մօտակայքումը. աւելի բարձրադիր սահմանները են կամ պատուական արօտներ կամ թէ պիտանի, սերմանացանութեան համար:

## Գ. ԸՆՁԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

Հայաստանի մեղրը հռչակաւոր էր արդէն հնութեան դարերումը. դոցա մի տեսակը (ինչպէս իւր Անաբազիս գործի մէջ, գիրք 10, գլ. 10 վկայումէ յոյն պատմագիր Քսենոփոնը որ իւր զօրքի հետ միասին եղած է Հայաստանումը կրտսեր Կիւրոսի մեռանելուց յետոյ Քունաքսեան պատերազմումը 401 թուակ.) ունի արբեցուցիչ յատկութիւն, որ ընծայումեն մի քանի տեսակ ծաղիկների սաստիկ համեմային հիւթերին, ուստի մեղուքը հաւաքումեն մեղրի պատրաստութեան նիւթը: Մետաքսագործ շերամի հոգաբարձութիւնը աղբիւր է մեծամեծ շահաւէտութենների. վտանգաւոր են խայթոցաւոր սարդերը և կարիճները. ձկների մէջ առաւել նշանաւորքն են սոքա. Օսետրինա (Accipenser Aurio) մինչև 5 պուդ ծանրութեամբ, որ և տալիս է մի պուդ խավիար. Սեվրիւգա (Accipenser stellatus, helops) 20—30 ֆունտ ծանր. Սպիտակափորիկ (бѣлуга, Accipenser huso), Կարմրախայտ (salmo trutta), Սոմ ձուկն (silurus glanis), Օձաձուկն և Կիպրինոս: Հայաստանի երկակենցաղ (ջրի և ցամաքի մէջ կեցող) շնչաւորքը են սոքա. օձեր, ողէզներ, կրիայք և խոշոր գորտեր: Կարապ, կռունկն, հաւալուսն (պելիկան), Արդէա, Օթիս թարդա (ութարդ), ջրային ադռաւ, հողամաղ (կամ սուզակ թըռչունը), Սկօլօպացիդք (բէքասք) ապրումեն աղի ճախիններին, և գետերի մէջ: Անտառների մէջ և բարձրադիր դաշտերումը շրջումեն փասիանը, կաքաւը, լորամարգին (լորը), աղաւնին, սևադռաւը, արծուին, անգղը, ուրուրը, բազէն: Բաց ի փոքր Ասիայումը սովորական եղած կաթնակեր շնչաւորներից գտանվումեն այս տեղ վագր, յովազ, հիենէ, շակալ,

կատուաձև քաւթարինէ, քաւթարինէ, արջ, այծեամն (վայրի այծ), ջէյրան (Antilope subgutturosa) անապատներումը, Կասպից ծովի մօտ։ Հայաստանի ընտանի անասունքը են գոմէշ, եզն, պատուական ձի, էշ, ջորի, ուղտ, ոչխար, այծ, շուն և կատու։

(Շարունակութիւնը յետագայ տետրակների մէջ։)

## ԹԷ ԻՆՉ Է ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ, ԵՒ ԹԷ ԻՆՉՊԷՍ Է ԿԵՐՊԱՐԱՆԱԳՈՐԾՎԵԼ ԱՆԳԼԻԱՑԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ։

—

Մի աշխարհի օրէնքը, նորա եղանակը, նորա աշխարհագրական դրութիւնը, նորա հաղորդակցութեան հնարները թէ ներսումը և թէ դէպ ի դուրս, այլև նորա բնակիչների բարոյական ու իմացական յառաջադիմութիւնը, անտարակոյս, չափ ու կշիռ են տալիս և նորա վաճառականութեանը, ներգործելով իւրեանց ազդեցութիւնը թէ գոյացուցիչ կարողութեան և թէ պիտառութեան վերայ, որ են իսկական աղբիւրքը վաճառաշահութեան, որոնցից կարելի է հետևեցուցանել թէ ինչքան էր կարօտութիւնը և յետ մնացած պաշարը։ Սորանից լուսափայլ է աչա, թէ մի ազգ այն ժամանակը միայն առնելու է շատ մեծ յառաջադիմութիւն վաճառականութեան մէջ, երբ որ նա իւր աշխատասիրութեամբ կարող է պատրաստել աւելի շատ ապրանք, քան թէ հարկաւոր էր, նորա պիտոյքը լցուցանելու համար, այլև երբ՝որ կարող է նա գործ դնել օտարերկրեայ բերքերից շատ ու շատ։ Եթէ հաւաստի է այս բանը, ապա հետևում է դորանից, որ մի ազգի վաճառականութիւն իւր իսկական սկիզբը ստացել է այն ժամանակից, երբ որ ժողովուրդը աճելով և բազմանալով ստիպում է ազգը, պարզ ձեռագործութենից դարձուցանել իւր ուշադրութիւնը փաբրիկագործութեան վերայ և պարապել ճարտարութենների և գիտութեններին. Ինչ տեղ լուսաւորութիւնը դորա հետ համաձայնաբար յառաջացնում է նորանոր պիտոյք և մինչև այն աստիճան նրբացնում է նորանց, որ այլևս չէ կարելի լցուցանել նորանց առանց օտարի ձեռնտուութեանը։

Մեր օրերի վաճառականութիւնը այնքան ևս գերազանց է առաջին ժամանակների վաճառականութենից, ինչպէս որ այժմեան պիտոյքը և յառաջածութիւնքը գերազանց են հին աշխարհի պիտոյքից ու յառաջածութեններից։ Բայց սորա հետ կից, և պիտոյքների օրըստօրէ բազմանալը մեր օրերի մէջ աւելի վտանգաբեր է ժողովրդի բազմութեան համար, քան թէ յառաջ, և մարդերի բովանդակ ֆիզիքական (նիւթական) բարեկեցութիւնը համահաւասար քայլով յառաջ չէ գնացել ընդհանուր բարեվիճակութեան հետ։ Այս իրողութիւնքը տալիս են մեզ նախ այն ապացոյցը, թէ վաճառականութիւնը կարող է միշտ աւելի ընդարձակվիլ, և երկրորդ, որ այն խնդիրը թէ ինչպէս պիտո էր մի ազգի բարեվիճակութիւն պատշաճապէս բաժանել նորա բոլոր անդամների մէջ, մնում դեռ ևս անլուծանելի։

Ամենևին անխել բան է այն վիճաբանական խնդիրը, որդեօք երկրագործութիւնը, թէ վաճառականութիւնը աւելի մեծակշիռ էր։ Երկուքը ևս հաւասարապէս խորհրդաւոր են, և մինի յետ մնալը կամ յառաջ գնալը յառաջացնում վնասակար կամ օգտակար ազդեցութիւն միւսի վերայ։ Ցանկութիւնը յաջողութիւն տալու երկրագործութեան, վնասելով ֆաբրիկաներին, պիտոյ է ընծայել այն մարդերի անձնական շահասիրութեանը, որ, թէպէտև փոխարկված էին որպիսութիւնքը, այնու ամենայնիւ կը կամենային իւրեանց կալուածներից աւելի արդիւնք քաղել վնասելով պէտքածողներին, կամ թէ պիտոյ էր այդ բանը տալ տգիտութեանը թէ ինչ փոխադարձ ազդեցութիւն միմեանց վերայ ունէին երկրագործութիւնը և վաճառականութիւնը։

Եթէ մի աշխարհի բնակաւորութիւն փոքր է, եթէ նորա ֆաբրիկաները, մետաղահանքերը և այլ աղբիւրքը դեռևս չէին օգտաբեր կացուցած, և աշխատութիւնը թեթևագին էր· եթէ հողը աւելի էր բուսուցանում քան թէ պէտք էր ածվում, ապա ակնյայտնի շահաւէտ էր աշխարհի առատութիւնը դուրս տանել, նորան բազմամարդ և աւելի յառաջադէմ ազգերի վաճառահանդէսների մէջ շահաւէտութեամբ ծախել, և դորա փոխանակ այն աշխարհների պատրաստած բաները ներս բերել իւր աշխարհի մէջ։ Բայց երբ պիտառութիւնը աւելի է, քան թէ իւր աշխարհի պաշարքը, և նոյն միջոցին աշխատող ժողովուրդը աւելի բազմաթիւ է քան թէ կարող էր սնունդ ստանալ իւր աշխարհի հողից· այնուհետև պիտոյ է վերջացնել ապրանք դուրս տանելը և սկսանել ապրանք ներս բերել։ Բայց այս տեղ հանդիպումն երկու տեսակ դժուարութիւնք։

Նախ, թէ ինչ փոխարէն պիտոյ էր տալ ներս բերած նիւթերի համար· և

Երկրորդ, թէ ինչպէս պիտոյ էր զբաղեցուցանել աւելորդ բազմամարդութիւնը։

Այս տեղ հանդիսանումէ վաճառականութիւնը և այս հարցուածների ամէն մինին տալիս է պատշաճաւոր պատասխանի։ Մի փաբրիկագործ մի շինութեան մէջ որ բռնումէր սակաւ կանգուն տեղ, կարող է զբաղեցնել այնքան մարդիկ և յառաջացնել այնքան պտղաբերութիւն, ինչքան միւս աշխարհներում հազար օրավար հողի մշակութիւնը յառաջացնելու է. ուրեմն փաբրիկագործը արուեստական կերպով մեծացնումէ իւր հողի շրջապատը։ Եւ որովհետև գիւտերը, փաբրիկագործութիւնը և գիտութիւնը սահման չունին, այս պատճառով մի քաղաքագործված աշխարհ երբէք տեղիք չունի վախենալու ժողովրդի բազմանալուց։ Բայց վաճառականութեան օգտակար ազդեցութիւնը դորանով չէ վերջանում դեռևս։ Արուեստական յառաջածութիւնը բազմապատկելով և ժողովրդի աւելորդ բազմութեանը գործ տալով, այլև աշխատանքի գինը բարձրացնելով, որի հետ միասին յառաջանումէր աւելի սաստիկ պիտառութիւն նիւթերի, ներգործումէ նա և բուն աշխարհի վաճառահանդէսի վերայ։ Ուրեմն շինականը գտանելով իւր երկրումը առաւել պատշաճաւոր վաճառատեղի, կարող է այն արծաթը, որ յառաջ դուրս էր տալիս որպէս բեռի վարձ, գործ ածել իւր հողը պատուականացնելու և աւելի պատշաճապէս շահեցնելու համար, և դորանով ոչ թէ միայն առաւել արդիւնք գոյացնել, այլև իւր գոյացուցած արդիւնքը աւելի բարձր գնով վաճառել։

Այսպէս, վաճառականութիւնը է բնական հետևանք յառաջադէմ կրթութեան և ժողովրդի բազմանալուն մի աշխարհի մէջ, և այդպէս հարկաւոր է նա մի ազգի կեցութեան համար, որ հասած էր արդէն մի որոշեալ կրթութեան աստիճանի։ Որովհետև նա չէ հարստահարում երկրագործութիւնը, այլ օգնական է նորա յաջողութեանը, այս պատճառով պարտական էր շինականը գործակից լինել բարձրացնելու վաճառականութիւնը և սովորել որոնելու իւր օգուտը պատրաստած ապրանքի շատ և մեծապէս պիտառութեան մէջ, քան թէ բարձրացնելով ապրանքի գինը, որ հետևանք էր աւելի փոքրացած պատրաստութեան։

Ինքն ըստ ինքեան հասկացվումէ, թէ մի շատ մեծակշիռ բան էր զգաստաբար հսկել վաճառականութեան յառաջադիմութենի վերայ. պատճառ, երբ որ մի ազգ մեծացել է վաճառականութեամբ, իսկոյն ծնանումէն հանգամանքներ, որ կարող էին նորա վաճառականութեան կշիռը օտարերկրեայ և ընտանի պատճառներով վտանգաւորել։

Երբ որ մի ազգի մէջ յառաջանումէ վաճառականութիւն, ամենեքեան որ մասնակից էին այդ գործին, դիտաւորութիւն ունէին բաղդաւոր-

*վելու. ամենայն մարդ յոյս ունի այնքան յառաջադէմ լինել, ինչքան որ կարելի է. աշխատասէր մարդիկը գտանումեն մի արձակ ասպարէզ իւրեանց գործականութեան համար, մշակը վարձատրվումէ առատապէս և մարդիկ թեթև արծաթով կարող են ազատօրէն մասնակից լինել զանազան ձեռնարկութիւնների:*

*Աւելի օգուտ ստանալու յոյսը առիթ է տալիս այնուհետև գիւտեր անելու, և սոցանով ֆաբրիկագործը աւելի շուտով հասանումէ իւր նպատակին: Մեքենայքը թեթևացնումեն ապրանքի պատրաստութեան ծախքը, և հեշտութիւնը արժան գնով ճարելու իւր համար կեցութեան յարմարութիւնքը, շատացնումէ նոցա գործածութիւնը, և նոքա որ միանգամ շահվել էին արծաթ, շուտով լայնացնումեն իւրեանց գործի շրջանակը և մեծացնումեն իւրեանց հարստութիւնը: Այնուհետև փոքրարծաթ մարդիկը չունին զօրութիւն հանդիսակից լինելու (ոտք պարզելու) մեծատունների հետ. մշակը դառնումէ ամենևին ծառայ ֆաբրիկատիրոջ կամքին, և սա որ իւր հարստութեան ու անսահման արժանահաւատութեան պատճառով կարողութիւն ունի մեծամեծ ձեռնարկութիւնք անել, աշխատումէ ինչքան կարելի էր փոքր վարձով մշակութիւն և սպասաւորութիւն գտանել:*

*Այժմ յառաջանումէ մի խնդիր, թէ ինչպէս պիտոյ է վերջանայ բանը, եթէ այսպիսի կարգով յառաջ գնար շահաստացութիւնը և հասանէր իւր ամենևին ընդարձակութեանը: Մի ազգի ֆիզիքական բարեկեցութիւն կախ է վաճառականութեան և ֆաբրիկագործութեան յառաջադիմութենից, որովհետև դրքի կուտակութիւնը կրթեալ ընկերութենների մէջ ոչ թէ միայն կարող է պաշտպանել սովի երեսից, այլև դա է այն հնարը որ կարող է բանալ աշխարհի իսկական օգտաբուղխ աղբիւրքը: Ուրեմն միանգամ հաստատված զանազանութիւնը ունևորութեան մասին, ոչ թէ միայն անբաժանելի է մարդկային բնութենից, այլ մի իմաստուն նախատեսութիւն է նորա օգտի համար. որովհետև հարստութիւնը որով բաղդաւորվումեն մի մի մարդիկ, ընդհանուր օգտի համար յետ է դնում մի փոքր բան աւելի, քան թէ հարկաւոր էր րոպէական կարօտութեան համար, և սկսանումէ ձեռնարկութիւնք, ցոյց տալով պակասաւորներին մի քաղցր գրաւիչ նպատակ: Մարդերի մեծ մասը — բազմութիւնը — շռայլ են և յօժար սպառելու ամենայն բան, որ ձեռք էին ձգած. բայց դոքա ի բնէ ծոյլ են նոյնպէս և կամին աշխատել այն ժամանակ, երբ որ կարիքը հարկադրումէ նորանց: Մարդուս պիտոյքը լինելով այնքան պարզ, իւրեանց առաջին բնականապէս դուրս երևելու միջոցին, սովորութեամբ ու օրինակով կարող են ընդարձակվիլ անսահման չափով: Հարստականների ղեղխութիւնը և վայելչա-*

*սիրութիւնը թեւեր են տալիս բազմութեան ցանկութեններին, և այդպէս հարկաւորութիւնը դրդումէ ձեռնարկութեան հոգին. բայց պիտոյ է ասել, որ մի ազգ իւր իսկական առևտրական զօրութիւնը ստանումէ միշտ սակաւ մարդերի ձեռքից, որ ունելով իւրեանց մէջ առանձին հասկացողութիւն, գիտեն ամենայն պատեհ միջոց ըմբռնել և օգտակար կացուցանել:*

*Բայց վտանգը որ զուգակից է առևտուրքի յառաջադիմութեան բոլոր պատճառներին, յառաջանումէ այն իրողութենից, որ կարող էր առիթ տալ տարապայման (չափից ու սահմանից դուրս) ձգտողութենների: Շատ մեծ հարստութիւն այնպիսի մարդերի ձեռքում, որ գործակատար են առևտուրքով և ֆաբրիկայով, կարող է, եթէ չը յառաջացան հակառակ ներգործութիւնք ընդդէմ դորան, վնասակար լինել այն աշխարհի օգտին, ուր կային այդպիսի մարդիկ: Դորանով, փոքր կարողութեամբ մարդիկը խափանվումեն յաջողապէս հանդիսակից լինելուց նոցա հետ, և աշխատանք հասուցանող մարդերի թիւը սահմանափակվումէ: Աւելի սակաւ աշխատասէրքը առ փոքր փոքր յետ են քարշվում իւրեանց արած վաստակովը, և բոլոր ասպարէզը թողումեն այդ մի քանի մարդերին, որով յառաջանումէ ազգային վաճառականութեան կործանումը այս երկու տեսակ պատճառներից.*

*Նախ. որովհետև անկարելի է, որ մի աշխարհ այդպիսի որպիսութեան մէջ վաճառահանդէս կատարէր աւելի փոքր ունևոր աշխարհների հետ, որոնց բնակիչքը յօժար ու պատրաստ էին ամենայն պատեհ միջոց ձեռք բերել, գիւտեր գործել, առաջարկութիւնք յղանալ, վաճառահանդէսների մասնակից լինել, և այս բոլորը մի այնպիսի կրակոտ գործականութեամբ յառաջ տանել, որ սեփական է այն մարդերին, որ դեռևս կամէին բաղդաւորվիլ:*

*Երկրորդ. որովհետև ոչինչ յաջող դիպուած հայրենի աշխարհումը յուսալի չէր այն մարդերին որ իւրեանց բանագիտութեամբ կարող էին վեր բարձրանալ լոկ մշակների կարգից, և որոնց գործական զօրութիւնը և յաջողակութիւնը սպասումէին միայն մի պատեհ ժամանակի, իւրեանց կշիռը յարգի կացուցանելու: Սոքա այնուհետև հրաժարվումեն իւրեանց բնիկ աշխարհից, կամ թէ մնալով հայրենիքի մէջ, լինումեն պատճառք այն վնասակար ուսմունքի, որոնց աղբիւրը եղած են միշտ քաղաքական կամ ընկերական թշուառութիւն:*

*Թէ այսպէս և թէ այնպէս, աշխարհը ձեռքից թողումէ այն բոլոր օգուտը որ այդ մարդիկը կարող էին հասուցանել թէ աշխարհին և թէ աշխատաւորների կարգին. դա կորուսանումէ և ապագայումը, ներքին*

երկպառակութեան զօրութեամբ ճանապարհ տալով օտար աշխարհներին իւրեանց անձը գերադանց կացուցանելու նորա վերայ։

Մի այլ անյարմարութիւն, որ յառաջանում է հարստութեան չափազանց կուտակութենից մի քանի վաճառականների և ֆաբրիկանտների ձեռքում, այն է, որ ժողովրդի միջին դասակարգը քանդվում է. ժողովրդի առաւել մեծ մասը դառնում է հասարակ մշակ և սակաւաթիւ յաջողակ մարդիկ չափից դուրս բարձրանում են։ Բայց խօսելով իսկապէս, ժողովրդի միջին դասակարգը առաւել խորհրդաւորն է այն պատճառով, որ նա է ազգային իմացականութեան յառաջ տանողը, և եթէ նա բաւական բազմաթիւ է, ապա լինում է մի հսկող պահապան ստորին ժողովրդակարգերի սեփականութեան վերայ և հակառակ նոցա տարապայման ձգտողութեններին։ Առանց մի միջին ժողովրդակարգի բոլոր ջանահնարութիւնքը և գիւտերը դադարում են, բազմացած ժողովուրդը չէ գտանում բաւական պարապմունք. այս բանը դարձեալ, նայելով աշխատաւոր մարդերի սակաւորութեանը, փոքրացնում է պիտոյքների գործածութիւնը, որպէս և նոցա մէջ, որ առանց աշխատանքի շրջում են այս կողմ ու այն կողմ, զարթեցնում է յօժարութիւն թողուլ և հեռանալ հայրենի աշխարհից, և առ հասարակ զօրացնում է չքաւորութիւնը որին պիտոյ էր համբերել ակամայ ծուլութեան մէջ։

Հարստականքը սովորաբար այնքան ընկած են վայելչութեան քամակից, և այնպէս զբաղված են պատուասիրական առաջարկութեններով, որ կարող չէին ուշադիր լինել ստորին ժողովրդակարգի պիտոյքին, այլև շատ անգամ երբէք չեն հասկանում դորան, և բոլոր յարակցութիւնքը ժողովրդի մեծամեծների և փոքրիկների մէջ մնում են լոկ շահախնդրական կամ թէ զիջանողապէս բարերարական, եթէ միջին ժողովրդակարգը չէ կանգնած երկուքի մէջ որպէս հաշտեցուցիչ միջնորդ։ Սա գիտէ պատուել երկուքի արժանաւորութիւնքը, և նմանելով հարստականների առաւել նրբացած կեցութեանը, որպէս դարձեալ քննութեան տակ ձգելով բազմութեան ճաշակը և բարքը, մի կողմից ներգործում է սանձահարելով, միւս կողմից քաջալերելով։

Այս ընդհանուր նկատողութիւնքը արած, թող այժմ դնենք այս տեղ մի համառօտ ստուերագրութիւն, թէ ինչպէս է ծագել ու յառաջադէմ եղել Բրիտանական ազգի վաճառականութիւնը։

Բրիտանացիք են Անգլիացիք։ Թէ Անգլիան երկար ու ձիգ տարիներ բռնել է նախակարգ տեղը բոլոր, առուտուրքի պարապող ազգերի մէջ, այդ բանը անտարակոյս է. նոյնպէս հաւաստի է, թէ Անգլիան ներկայումս գտանվում է այնպիսի ճոխ ունևորութեան և ֆաբրիկագործական կարողութեան աստիճանում, ինչպէս երբէք եղած չէ յառաջուց։ Բայց

*Թէև այդպէս մեծ էր Անգլիան, այնու ամենայնիւ ունի իւր թոյլ, վնասելի կողմերը։ Շատ հանգամանքներ որ յառաջ ձեռնտու էին նորա յառաջադիմութեանը, գտանվումեն այժմուս և միւս տէրութենների մէջ. սոքա սկսանումեն արդէն յաջողութեամբ հանդիսակից լինել նորա հետ, վաճառականութեան պսակը գրաւելու համար, և եթէ Անգլիան չաշխատէ օգուտ քաղել այն խրատներից որ անցած օրերը աւանդումեն նորան, ապա նորա վերջը կը լինի այնպէս, ինչպէս եղել է հնութեան առաւել հռչակաւոր ազգերի կատարածը։*

*Մեծ Բրիտանիան ընծայումէ իւր վաճառականութեան կարողութիւնը զանազան հանգամանքների, որոնցից շատերը պիտոյ է յետ գընալով որոնել պատմութեան խորքի մէջ։ Ամեն մի ժամանակամիջոցում եղած է մի ազգ կամ թէ մի քաղաք աշխարհի վաճառականութեան հանդիսապետը. բայց այս դրութիւնը երբէք չէ եղել տևողական, և կէս մի ներքին և կէս մի արտաքին պատճառներ ներգործել են այնպէս, որ այդպիսի քաղաքներից կամ աշխարհներից խլելով նոցա վաճառականութիւնը, փոխադրած էին միւսի ձեռք։*

*Վաճառականութեան մէջ մեծ լինելու համար, պիտոյ է մի աշխարհ ունենայ լաւ նաւահանգիստներ և մի ընդարձակ ծովեզերեայ հող. այդ աշխարհը պիտոյ է դրած լինի երկրի քաղաքակարգ մասնումը. նորա եղանակը պիտի լինի բարեխառն, նորա բնակիչների հոգին ձեռնարկու և վստահ. և յաջող հանգամանքներ պիտոյ է նախ և յառաջ հրաւէր մատուցանեն և այդպէս բնակիչների ուշադրութիւնը դարձուցանեն դէպ ի վաճառականութիւն։*

*Անգլիան ունեցել է այդ բոլոր յաջողութիւնքը. նորա աշխարհի դրութիւնը, եղանակը, նորա բնակիչների յօժարութիւնը, ամենայն բան ձեռնտու է եղել նորան լինելու մի մեծ վաճառական տէրութիւն. և ահա յաջող հանգամանքներ բացեցին նորան ասպարէզ յաջորդելու Սպանիային առևտրական հրամանակալութեան մէջ։*

*Երբ որ Անգլիայի աղնուականքը այնքան զօրացել էին, որ կարող էին թագաւորներ կարգել և աթոռից հանել, այնուհետև ամեն մի արդէն ընտրած միապետի օգուտը պահանջումէր յայտնապէս, որ նա հիմնարկէ մի պատուար ընդդէմ աղնուականներին և ամրացնէ դորան։ Այս պատճառով Եդուարդոս երկրորդը և բոլոր իշխանազունքը Թիւդորեան ազգատոհմից աշխատումէին հարստահարել Աղնուականքը և որոնել իւրեանց համար նեցուկներ ժողովրդի միջնակարգի մէջ. այս պատճառով առիթ էին տալիս նոքա առևտրական ընկերակցութենների և մասնակից էին ինքեանք ևս այդ տեսակ ձեռնարկութենների։*

Այն միջոցին, երբ որ Եւրոպայի ցամաքահողի վերայ, կրօնական և քաղաքական խառնակութիւններով ու պատերազմներով աւերուել էր առևտուրքը, կարգերը քանդւումէին և բարոյականութիւնը փորւումէր տակից․ այն միջոցին Անգլիան, համեմատելով այլ աշխարհների հետ, վայելումէր խաղաղութիւն, և ունեւոր ու բանագէտ վաճառականք ցամաքահողի ամենայն կողմերից շտապումէին այն տեղ, իւրեանց ձեռնարկութիւնքը յառաջ տանելու համար։ Մի նոր և փորձուած ֆաբրիկագործութիւն իսկոյն ներս բերուեցաւ Անգլիայի մէջ, աշխատողքը վարժուեցան օտար ազգերի ֆաբրիկագործութեան եղանակի մէջ, և այս ժամանակից ահա սկսանումէ այն զարմանալի յառաջադիմութիւնը վաճառականութեան, ֆաբրիկագործութեան և նաւարկութեան, Անգլիայի մէջ։

Բայց երբ որ այն մեծ, արժանայիշատակ անցքը, Ամերիկայի յայտնագործութիւնը, բացեց մի նոր բաղդաւոր ճանապարհ, այս միջոցին Անգլիան կարողութիւն ունէր շահաւէտութեամբ ոտք կոխելու այդ ճանապարհի վերայ և մի խորհրդաւոր ասպարէզ դուրս գալու Սպանիայի հետ, որ այն ժամանակի ամենամեծ թագաւորութիւնն էր վաճառականութեան և նաւարկութեան մասին։ Անգլիան իւր աշխարհի և նորա բնակիչների ժրագլու՛խ բնաւորութեամբ շատ յաջողակ էր յափշտակելու Սպանիայից նորա նախակարգ աստիճանը, մանաւանդ որ Սպանիան այնքան տխմար գտնուեցաւ, որ աշխարհից արտաքսեց այն ժողովուրդը, որին պարտական էր իւր մեծութիւնը վաճառականութեան և ֆաբրիկագործութեան մէջ, այսինքն Հրէայքը և Մաւրիտանացիք։

Ազնիւ մետաղների յայտնագործութիւնը Ամերիկայի մէջ, հազարաւոր մարդերի Սպանիայումը քաղցր հրաւէր տուեց դուրս գնալու դէպ ի այն աշխարհը, և այդպէս խլեց Սպանիայից նորա սակաւաթիւ ձեռնարկու որդիքը, որ ունէր նա։ Սպանիացիք ի հարկէ ընտրեցին իւրեանց համար Ամերիկայի առաւել ճոխ և, ինչպէս երևումէր, առաւել արդասաւոր բաժինները նոր աշխարհի, և ցուրտ ու մերկ հիւսիսը թողեցին ուրիշ ազգերի համար։ Ազնիւ մետաղների եկամուտքը որ սկզբումը շատ առատ հոսումէին, առաւելացրեց աշխատութեան արժէքը մայր աշխարհի մէջ․ շուտով արդէն հասաւ բանը այն տեղ, որ Սպանիական ֆաբրիկագործքը կարող չէին հաւասար պահել կշիռը օտարերկրեայ վաճառականների հետ․ արծաթի պակասութիւնը լցուցանելու համար, պիտոյ էր խաբեբայութիւն գործել և այդպէս աւերուեցաւ ազգի և բարոյականութիւնը և առուտուրքը․ և այժմեան աղքատութիւնը Սպանիայի տալիս է մեզ այն ապացոյցը, թէ արծաթի ամենաճոխ պաշարը շուտով չքանումէ, երբ որ մի ազգ ստիպուած է ամենայն բան ստանալ թանգ գնով, բայց ինքը փոքր է պատրաստում։

Միւս աշխարհներ առ փոքր փոքր իւրեանց ձեռքը ձգեցին Սպանիայի վաճառականութիւնը· դոցա մէջ Անգլիան առաւ իւր համար մի գեղեցիկ բաժին, որ և հետ զհետէ այնպէս ճոխացրեց, որ մի անօրինակ բան է պատմութեան մէջ։ Այս մասին, շատ օգուտ բերել է Անգլիային այն հասարակաց գործակատարութեան հոգին, որ սեփական է գերմանական ազգերին· զոր օրինակ Անգլիայի Դրամատեղանը (Բանկը), Հարաւածովի վաճառատունը, յայտնագործութիւնը և բնակաւորութիւնը իւրեանց Գաղթաքաղաքների, հիմնարկութիւնը մեծամեծ քաղաքների, բարեգործութեան տների, և դպրոցների, Երկաթուղիքը, և առաւել նոր ժամանակներում, Շօսէքը (արուեստաշէն ճանապարհները), կանալները, Ելեքտրական տելեգրաֆները և այլ շատ կարգեր յառաջացած են ամենեքեան մասնաւոր ընկերակցութենների հոգաբարձութեամբ։ Ահա թէ ինչպէս մեծ մեծ բաներ կարող է յառաջացնել միաբանութեան հոգին, որ կարող է միայն ծնանիլ մի լուսաւորված ազգի հանճարից, ուսանելով և մտածելով և ոչ թէ անմտաբար ուտելով ու քնելով և անիծելով լուսաւորութիւնը որպէս դժոխքի ծնունդ, ինչպէս մի քանի տխմար ու խելակորոյս մարդիկ սովոր էին քարոզել իւրեանց վայրենի շրջակայքումը։

Համարեա թէ այնպէս է երևում, որպէս թէ իբրև օրհնութիւն ուղարկած էին Անգլիային իւր յատուկ թագաւորների յանցանքը և օտար տէրութենների յիմարութիւնքը և արատքը· պատճառ, մի շարակցութիւն այդպիսի հանգամանքների ձեռնտու է եղել նորա առևտրական մեծութիւնը կերպարանագործելու համար։ Թիւդօրեանց երկաթի կամքը և ձեռնարկու հոգին էր, որ առաջին անգամ ուղղեցրեց հասարակաց ուշադրութիւնը վաճառական գործերի վերայ, Ազնուականների անբարտաւանութեանը ընդդիմանալու համար։ Յակոբ առաջինի թուլութիւնը թող տուեց ժողովրդի միջին կարգին ամրանալ, մինչ նորա վախկոտ բնաւորութիւնը հեռի պահեց նորան ներս խառնվելու օտարերկրեայ քաղաքականութեան մէջ, և այդպէս հարկաւորութիւն չեղաւ մի տեւողական զօրք կազմել։ Երբ որ ժողովրդի միջին կարգը ամրացել էր, տեսաւ իւր անձը կարող ընդդիմանալու Կարոլոս առաջինի անիրաւութեանը· մի յաջող բաղդ այնպէս բերեց, որ Անգլիան իւր քաղաքական յեղափոխութիւնքը կատարեց այնպիսի միջոցում, երբ հասարակութիւնը դեռ ևս չունէր այնպիսի խորարմատ կրթութիւն և չէր այնպէս ամուր կապակից, որ քաղաքական խռովութիւնքը կարողանային վնասակար լինել նորան։ Յետոյ յաջորդած թագաւորների վատթարութիւնը, կեղծաւոր կրօնապաշտութիւնը և կառավարութիւնը սիրականների ձեռքով յաջողութիւն տուեց Անգլիացոց ժողովրդի դուրս գնալուն

դէպ ի օտար աշխարհներ և գաղթատեղիք հիմնարկելու․ և երբ որ Օրանեան Վիլհելմոսի ձեռքով կառավարութեան ձևը տևողապէս սահմանվեցաւ, այնուհետև տէրութիւնը և ազգը դարձուց իւր ուշադրութիւնը աշխարհի եկամտական և առևտրական կարգի վերայ․ Նորա գաղթականները օրէ օր ընդարձակվեցան, Նորանոր վաճառահանդէսք բացվեցան Նորա առուտուրքի համար․ Նորա ֆաբրիկագործական կարողութիւնը աճեց և ամէնը կերպարանագործվեցաւ ուղիղ ու յաջողապէս մինչև պատերազմը Ամերիկացոց հետ և մինչև ֆրանսիական Րեվօլիւցիան։

Բայց այս միջոցին, Անգլիան ժամանակ առ ժամանակ եղած էր պատսպարան փախստական վշտացածների որոնց մէջ գտանվումէին ինչ ինչ մարդիկ եւրոպական ցամաքահողի շատ բանգէտ ֆաբրիկագործներից, որոնց պարտական է Անգլիան իւր մետաքսը և այլ վաճառելի նիւթեր։ Երբ որ տասնևութերորդ դարու վերջումը ֆրանսիական Րեվօլիւցիան և Նորա հետևանքը վեր ի վայր արեցին բոլոր ցամաքահողը Եւրոպայի, Անգլիան վայելումէր խաղաղութեան երջանկութիւնը, և էր մի հատ աշխարհը, որ կարող էր սկսանել պիտանի կացուցանել շոգեշարժ զօրութեան դուրս երևեցուած գիւտերը։ Անգլիան իսկապէս և իրողապէս օգուտ քաղեց ցամաքահողի վերայ եղած պատերազմերից, ֆաբրիկագործութեան մոնոպոլէոնը սեփականելու իւրեան, և այն մեծ պարտքը որ ստիպուած էր առնուլ այն պատերազմի միջոցին որ ունէր Ֆրանսիայի հետ, մեծ օգուտ բերեց Նորան։ Ցամաքահողը հարկադրված էր այդ պատերազմի միջոցին անչափ թանգ գիներ վճարել անգլիական ապրանքների համար, և այդպէս Անգլիան ոչ թէ միայն իւր արծաթը յետ ստացաւ, այլև աղքատացրեց ցամաքահողը, ուրեմն և չինեց Նորան անկարող Անգլիայի հետ հաւասար պահելու կշիռը նոր գիւտերի պիտաուութեան մէջ։ Եթէ ցամաքահողի ազգերը այն միջոցին կարողացած լինէին ուշադրութիւն դարձուցանել նոր գիւտերի վերայ, այնուհետև ստիպուած կը լինէր Անգլիան շահաստացութիւնքը բաժանել Նոցա հետ, և մի այլանդակ նախանձախնդրութիւն Անգլիայի կողմից պիտոյ է ոչնչացնէր օգտաբերութիւնքը, և ահագին արծաթի հարկաւորութիւնը այդ մասին, գուցէ թէ յառաջացնելու էր մի ազգային տնանկութիւն։ Բայց այդպէս չը լինելով բանը, Անգլիան այն միջոցին, երբ որ ցամաքահողի վերայ բոլոր ֆաբրիկայքը ոտքից ընկած դրութեան մէջ էին, կարող էր արծաթ փոխ տալ միւսերին, որ դոքա պատերազմ մղեն, և աւերութիւնը հեռի մնայ Անգլիայից․ բայց սա օգուտ քաղելով դիպող ժամանակից, իւր ֆաբրիկագործների համար ապահովեց այն մոնոպոլէոնը, որ էր աշխարհի վաճառահանդէսների տէր լինել․ յետոյ այս

*Նոր աղբիւրները ազգային բարեկեցկութեան այնպէս աճեցին և զօրացան, որ Անգլիան աւելի ամուր կանգնած էր իւր ոտքի վերայ, քան թէ պատերազմերից յառաջ, երբ, համեմատելով ներկայի հետ, փոքր էր ազգային պարտքը։*

*Այսպէս, պատերազմերից, քաղաքական յեղափոխութեններից և այլն, յաջողութիւն ստանալով Անգլիան, 1815 ին գերազանց էր վաճառականութեան մէջ բոլոր միւս ազգերից։ Սիր Րօբերտ Պիլի կարգադրութիւնը 1819 ին կանոնադրեց այնուհետև արծաթի շրջանակութիւնը աշխարհի մէջ, աւելի յառաջ, քան թէ զգալի դարձան նախնի իրողութենների վնասակար հետևանքը։*

(Marchant's Magazine.)

Ս. Նազարեանց։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ։

2. Բնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութենների, հասարակախօս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ· այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութենների մասին։

3. Բարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից· այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ։

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника, С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար 9½ մանէթ։

Печатать позволяется. С. Петербургъ, Марта 28-го, 1858 года.

*Цензоръ И. Лажечниковъ.*